

ՀՀ ՍՓՅՈՒՈՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

ՍՓՅՈՒՈՔԱՀԱՅ ԱՐՎԵՍՏ.

ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ.

ԱՐՈՒՍՅԱԿ ԱՅՆԹԱՊԼՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2012

ՀՏԳ 78  
ԳՄԳ 85.31  
Ա732

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ խմբագրական-հրատարակչական  
խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝  
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ**

Ա732 **ԱՍԱՏՐՅԱՆ ԱՆՆԱ**

Միջուռքահայ արվեստ. արդի վիճակը և զարգացման հեռանկարները:  
Լիբանանահայ երաժշտություն: Արուսյակ Այնթապյան /Ա.Ասատրյան,  
Պատ. խմբագիր՝ Ա.Վ.Աղասյան. - Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն»  
հրատարակչություն, 2012. - 160 էջ + 16 էջ նկ.:

2011-ին ՀՀ սփյուռքի նախարարության և ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի համատեղ ջանքերով մեկնարկել է «Սփյուռքահայ արվեստ. արդի վիճակը և զարգացման հեռանկարները» ծրագիրը: Մատենաշարի երկրորդ հատորը նվիրված է լիբանանահայ երաժշտությանը: Հեղինակն առաջին անգամ արխիվային նյութերի հիման վրա ներկայացնում է լիբանանահայ դաշնակահարուհի, մանկավարժ, կոմպոզիտոր և երաժշտական-հասարակական գործիչ Արուսյակ Այնթապյանի գործունեությունն ու ստեղծագործությունը: Հավելվածում ներկայացված են Ա.Այնթապյանի մինչ օրս մեզ անհայտ, մինչդեռ ժամանակին մեծ ժողովրդականություն վայելած նրա դաշնամուրային ստեղծագործություններից երկուսի՝ N 3 «Bonheur retrouvé» («Վերագտած երջանկություն») ռապսոդիայի և արաբական ժողովրդական դաբկեի մշակում «Chatti ya dinyi» պիեսի, ինչպես նաև ձայնի և դաշնամուրի համար գրված «Pour toi seul» («Միայն քեզ համար») տանգոյի նոտաները, որոնք գիտական շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ:

Հասցեագրված է արվեստագետներին, երաժիշտներին և ընթերցող լայն շրջաններին:

ՀՏԳ 78  
ԳՄԳ 85.31

ISBN 978-5-8080-1000-0

© ԱՍԱՏՐՅԱՆ ԱՆՆԱ  
© ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

**Նվիրվում է Տիգրան Չուխաճյանի  
ծննդյան 175-ամյա հոբելյանին**

**Հրատարակվում է  
«Սփյուռքահայ արվեստ. արդի վիճակը և զարգացման  
հեռանկարները» ծրագրի շրջանակներում**

**Հրատարակվում է  
ՀՀ սփյուռքի նախարարության աջակցությամբ**

## ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Աննա Գրիգորի Ասատրյանը ծնվել է Երևանում, 1968թ. սեպտեմբերի 1-ին: 1983-ին ավարտել է Երևանի Ն.Կ.Վրուպակյայի անվան N 19 միջնակարգ դպրոցի ութնամյա դասընթացը և Երևանի մանկական ձայնի պահպանման երաժշտական դպրոցը: 1987-ին գերազանցությամբ ավարտել է Երևանի Ռ.Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի տեսական բաժինը՝ եղել Լենինյան կրթաթոշակառու: 1992-ին գերազանցությամբ ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի վոկալ-տեսական ֆակուլտետի երաժշտագիտության բաժինը՝ եղել Կոմիտասի անվան կրթաթոշակառու, ընտրվել Կոնսերվատորիայի գիտական խորհրդի անդամ: 2001-ին ավարտել է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ասպիրանտուրան, պաշտպանել դիսերտացիա «Տիգրան Չուխաճյանի օպերաները» թեմայով և ստացել արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: Դասավանդել է Երևանի Ռ.Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում (1991-2003), աշխատել Հայկական բաց Համալսարանի երաժշտագիտության ֆակուլտետի ղեկավար, ընտրվել Համալսարանի գիտական խորհրդի անդամ (2000-2002):

2002-ին աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում որպես գիտաշխատող, 2003-ին նշանակվել ինստիտուտի գիտական քարտուղար, ընտրվել գիտական խորհրդի անդամ: 2005-ին նշանակվել է ինստիտուտի տնօրենի՝ գիտական գծով տեղակալ, 2009-ից՝ նաև Սփյուռքահայ արվեստի նորաստեղծ բաժնի վարիչ: ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտական աստիճանաշնորհման 016 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղարն է (2004-ից): 2008-ին պաշտպանել է դոկտորական դիսերտացիա «Հայ երաժշտական թատրոնը ժԹ դարի երկրորդ կեսին. սկզբնավորումը և զարգացումը» թեմայով և ստացել արվեստագիտության դոկտորի գիտական աստիճան: 2005-2007-ին ղեկավարել է ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ «Տիգրան Չուխաճյանի երաժշտական թատրոնը», իսկ 2008-2010-ին՝ «Տիգրան Չուխաճյանի ստեղծագործական ժառանգությունը» թեմաները: 2012-ին ստացել է արվեստագիտության մասնագիտությամբ պրոֆեսորի գիտական կոչում:

ՀՀ Նախագահ Ա.Սարգսյանի կարգադրությամբ 2009-ին նշանակվել է Հանրային խորհրդի անդամ: 2009-ին ընտրվել է Երևան քաղաքի ավագանու անդամ, Մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական Հանձնաժողովի նախագահի տեղակալ: Տիգրան Չուխաճյան Հիմնադրամի Հիմնադիր-նախագահն է (2002): Ընտրվել է Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի նախագահության անդամ, Բնության և Հասարակության մասին միջազգային ակադեմիայի իսկական անդամ: Պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ Նախագահության Պատվոգրով (2005), ՀՀ ԿԳՆ «Ոսկե հուշամեդալով» (2008):

Հեղինակ է 8 մենագրության («Արչակ Բ». Հայոց անդրանիկ օպերան (Պատ. խմբագիր՝ Ա.Աղայան), Երևան, «Ոսկան Երևանցի», 2006, 268 էջ: Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբ (Պատ. խմբագիր՝ Ա.Աղայան), Երևան, «Ամրոց գրուպ», 2007, 136 էջ, 8թ. նկ.: «Զեմիրե». Տիգրան Չուխաճյանի կարապի երգը (Պատ. խմբագիր՝ Ա.Աղայան), Երևան, «Ոսկան Երևանցի», 2009, 176 էջ, 1թ. նկ.: Ամենայն Հայոց մանստրոն. Հովհաննես Չեքիջյան (Պատ. խմբագիր՝ Ա.Աղայան), Երևան, «Ամրոց գրուպ», 2009, 240 էջ, 2 մամուլ ներդիր: ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ - 50 (Պատ. խմբագիր՝ Ա.Աղայան), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, 395 էջ + 32 էջ նկար: Տիգրան Չուխաճյանի երաժշտական թատրոնը (Պատ. խմբագիր՝ Ա.Աղայան), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, 480 էջ), Սփյուռքահայ արվեստ. արդի վիճակը և զարգացման հեռանկարները: Լիբանանահայ թատրոն (Պատ. խմբագիր՝ Ա.Աղայան), Երևան, «Ոսկան Երևանցի», 2011, 184 էջ, Ավագ Պետրոսյան - 100, գիրք-ալբոմ (Համահեղինակ՝ Ա.Պետրոսյան), Երևան, «Գասպրինտ», 2012, 200 էջ), ավելի քան 80 գիտական հոդվածների՝ տպագրված Հայաստանի, Ռուսաստանի Դաշնության, Իտալիայի, Լիբանանի, Իսրայելի գիտական ժողովածուներում և Հանդեսներում: Զեկուցումներով Հանդես է եկել միջազգային և Հանրապետական գիտաժողովներում:



## ԱՌԱՋԱԲԱՆ

### Միրելի ընթերցող

2011-ին ՀՀ սփյուռքի նախարարության և ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի համատեղ ջանքերով մեկնարկեց «Սփյուռքահայ արվեստ. արդի վիճակը և զարգացման հեռանկարները» ծրագիրը: 2011-ին լույս տեսավ մատենաշարի անդրանիկ հատորը՝ տողերիս հեղինակի «Լիբանանահայ թատրոն» մենագրությունը, որտեղ թերթեցինք լիբանանահայ թատրոնի պատմության էջերը՝ հանգամանորեն ներկայացնելով մասնավորապես «Գասպար Իփեկյան» և «Վահրամ Փափազյան» թատերախմբերի գործունեությունը:

Մատենաշարի երկրորդ հատորը պիտի նվիրվեր լիբանանահայ երաժշտությանը, քանի որ Բեյրութը հայ երաժշտական մշակույթի օջախներից է: Այստեղ են գործել կոմպոզիտորներ Բարսեղ Կանաչյանը, Համբարձում Պերպերյանը, Աշոտ Պատմագրյանը և Պողոս Ջելալյանը, դիրիժորներ Օ.Ասատուրյանը, Ա.Գալաջյանը, ջութակահար և դիրիժոր Օննիկ Սուրմելյանը, կոմպոզիտոր, երաժշտագետ և խմբավար Մինաս Գանգրունին, երգչուհի և դաշնակահարուհի Մարի Ավետյանը, երգչուհիներ Արփինե Փեհիլվանյանը, Էլիզաբեթ Փեհիլվանյանը, Սոլինա (Սոնա) և Մոսի Մինասյանները, Ա.Պետրոսյանը, Ելիզ Թաշչյանը, Ա.Գասպարյանը, Սիրարփի Հակոբյանը, Մ.Ավետիսյանը, երգիչ Խաչիկ Փելեկյանը, երգիչ և կոմպոզիտոր Կարպիս Կարեյանը, դաշնակահարներ Սոնա Վարդապետյան-Ահարոնյանը, Արուսյակ Այնթապյանը, Կյուրեղ Մանկրյանը, Սինթիա Խաչատրյանը, Չարուհի Եղբայրյանը, Շ.Մխիթարյանը, Գ.Էմբարյանը, թավջութակահար Վ.Պերպերյանը, ինչպես նաև Էմանուել Էլմաճյանը, Ժակ Գոճյանը, Միհրան Էլմայանը, Ջվարթ Սեմերճյան-Պուճիգանյանը և ուրիշներ: Բարձր գնահատականի են արժանացել հայկական «Գուսան», «Կոմիտաս», «Գարուն» և այլ երգչախմբերը և նվագախմբերը՝ Բարսեղ Կանաչյանի, Համբարձում Պերպերյանի, Օննիկ Սուրմելյանի և այլոց ղեկավարությամբ:

Լիբանանահայ կոմպոզիտորական ստեղծագործության վերաբերյալ նյութեր հավաքելու նպատակով մեր քայլերը, բնականաբար, մեզ տարան Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան՝ այնտեղ պահվող արխիվային նյութերն ուսումնասիրելու նպատակով: Ծանոթանալով արխիվներին՝ մեզ համար մի մեծ բացահայտում արվեց,

ինչը կտրականապես փոխեց նախնական մտահղացումը: Պարզվեց, որ մեզ հայտնի դաշնակահարուհի և մանկավարժ Արուսյակ Այնթապյանը միաժամանակ եղել է Լիբանանում և նրա սահմաններից դուրս՝ ի մասնավորի Ֆրանսիայում և ԱՄՆ-ում ճանաչված կոմպոզիտոր և թողել մինչ օրս մեզ անձանոթ երաժշտական ժառանգություն:

Իր գիտական կյանքը սփյուռքահայ երաժշտության ուսումնասիրությանը նվիրած երաժշտագետ Յիցիլիա Բրուտյանն իր աշխատություններում Ա.Այնթապյանին անդրադարձել է ընդամենը հետևյալ տողերով. «Արուսեակ Այնթափեանը պսակաւոր է Փարիզի արուեստների, գիտութեան եւ գրականութեան մեծ պատուանշանի: Շատ շնորհալի դաշնակահարուհին յաճախ է հանդէս եկել իր մենահամերգներով: Նա օժտուած է նաեւ ստեղծագործական ձիրքով: Սուղ տուեալներից քաղուած փաստերի համաձայն՝ «Չարթօնք»-ի (Բէյրութ, 30 մայիսի, 1963) 1963 մայիսի 2-ին տեղի ունեցած տարեկան համերգում կատարուել են նրա ստեղծագործութիւններից երկուսը՝ «Ռափսոդիա թիւ 2 եւ լիբանանեան տապքէի ժողովրդական եղանակների մշակումները «Շաթթի Եա Տիւնեա» անուանմամբ»<sup>1</sup>:

Ընդամենն այսքանը՝ Արուսյակ Այնթապյանի մասին: Եվ դա այն դեպքում, որ հենց Հայաստանում, հենց Երևանում, հենց Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում է գտնվում նրա արխիվը, որը մինչ օրս չի արժանացել որևէ մեկի ուշադրությանը և չի ուսումնասիրվել առհասարակ:

Պարզվեց, որ Գ.ԱԹ-ում պահպանվող Ա.Այնթապյանի ֆոնդը ստացվել է 1981-ին, Այնթապյան քույրերի կողմից և մշակվել է 1986-ին՝ երաժշտական բաժնի վարիչ Յողիկ Բեքարյանի կողմից: Արխիվը պարունակում է կոմպոզիտորի ստեղծագործությունների ձեռագրերը և հրատարակված օրինակները, համերգների ծրագրերը, հայալեզու և ֆրանսալեզու մամուլում Այնթապյանի մասին տեղ գտած հրապարակումները, նրա ստեղծագործական ու համերգային գործունեությունը լուսաբանող անձնական փաստաթղթերը, մամակները, հայերեն և ֆրանսերեն բանաստեղծությունները, ստեղծագործությունների ձայնագրությունները, լուսանկարները, հրավիրատոմսերը, շքանշաններն ու մեդալները, ընդհանուր առմամբ՝ 462 փաստաթուղթ, որը կազմում է 125 միավոր:

<sup>1</sup> **Բրուտեան Յիցիլիա**, Հայ երաժշտական մշակոյթի աշխարհասփիւռ ընձիղները, Երեւան, 1996, էջ 229-230:

Եվ չկարողանալով դիմագրավել մեզ «անձանոթ» կոմպոզիտորի ստեղծագործությունը ասպարեզ բերելու գայթակղությանը, մենք նպատակահարմար գտանք հանրությանը ներկայացնել Ա.Այնթապլյանի ստեղծագործական դիմանկարը:

Մերսինում ծնված, Բեյրութի Ամերիկյան համալսարանի երաժշտության բաժնի շրջանավարտ, երաժշտական կրթությունը Փարիզում ավարտած, համաշխարհային պիանիզմի տիտաններից մեկին՝ ֆրանսիացի դաշնակահար, մանկավարժ, դիրիժոր, երաժշտագետ, երաժշտական-հասարակական գործիչ Ալֆրեդ Կորտոյին աշակերտած, բազմաթիվ մրցանակների դափնեկիր, շքանշանների ու մեդալների ասպետ և երաժշտության մեջ ռոմանտիզմի ուղղությունը ներկայացնող Ա.Այնթապլյանի ժառանգության մեջ, բնականաբար, մեծ տեղ են գրավում դաշնամուրային ստեղծագործությունները: Նրա գրչին են պատկանում քաղաքական, պետական, հոգևոր, հասարակական ականավոր գործիչներին նվիրված և ժամանակին մեծ ժողովրդականություն վայելած գործերը, այդ թվում՝ «Bénédiction Papale au Liban» («Պապի օրհնությունը Լիբանանում»)՝ նվիրված Հռոմի 262-րդ պապ Պողոս VI-ին (1965), «Hymne au Liban» («Ձոն Լիբանանին»)՝ նվիրված Լիբանանի Հանրապետության նախագահ Շաուլ Հելուին (1966), «La Paix» («Խաղաղություն»)՝ նվիրված ՄԱԿ գլխավոր քարտուղար Ու-Թանին (1968), «La Tragédie de Dallas» («Դալասի ողբերգությունը»)՝ նվիրված ԱՄՆ 35-րդ պրեզիդենտ Ջոն Ֆիցջերալդ Բենեդու հիշատակին (1963), «Hommage» («Հարգանքի տուրք»)՝ նվիրված Շաուլ դը Գոլին (1969), ինչպես նաև եղբոր հիշատակին նվիրված «Sur une tombe» («Շիրմի վրա», 1964), «Odysseé Spatiale» («Տիեզերական ոդիսական», 1970), դաշնամուրային ռապսոդիաները, «Ֆանտազիան», «Կորսված երջանկությունը», «Տխրությունը», «Ափսոսանքը», «Բաժանումը», «Մխիթարությունը», «Հրաժեշտը»՝ նվիրված բոլոր նրանց, ովքեր սիրել են, Ջորջ Այնթապլյանի հիշատակին նվիրված «Արցունքները» և այլն, ինչպես նաև գործեր երկու դաշնամուրի համար՝ «Հուշը», «Միայն քեզ համար» և այլն: Հեղինակել է նաև երգեր՝ հայերեն և ֆրանսերեն տեքստերով: Լիբանանահայ կոմպոզիտորի ժառանգության մեջ հատուկ տեղ են գրավում լիբանանյան ժողովրդական դափնեների մշակումները դաշնամուրի և երկու դաշնամուրի համար:

\* \* \*

Օգտվելով առիթից՝ ուզում եմ իմ շնորհակալությունը հայտնել ՀՀ սփյուռքի նախարարությանը՝ հանձնիս ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի և ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի ղեկավար Ֆիրդուս Չաքարյանի, ում շնորհիվ մեր հանրությանն է ներկայացվում սփյուռքահայ երաժշտության երախտավորներից մեկի՝ կոմպոզիտոր, դաշնակահարուհի, մանկավարժ և երաժշտական-հասարակական գործիչ Արուսյակ Այնթապյանի ստեղծագործական դիմանկարը:

Երախտագիտությունս Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի տնօրեն Կարո Վարդանյանին, ինչպես նաև թանգարանի աշխատակիցներ՝ երաժշտական բաժնի ֆոնդապահ Սվետա Աբովյանին և նույն բաժնի ավագ գիտաշխատող Մարինե Մուշեղյանին՝ ովքեր հնարավորություն ստեղծեցին ծանոթանալու պրոֆեսոր Ա.Այնթապյանի արխիվային նյութերին:

Հատուկ շնորհակալությունս ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի բաժնի գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի Երիտասարդ արվեստաբանների խորհրդի նախագահի տեղակալ Մարգարիտա Քամայանին՝ ֆրանսերեն արխիվային նյութերը հայերեն թարգմանելու և մեզ տրամադրելու համար և ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի բաժնի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Տաթևիկ Շախկույանին՝ «Chatti ya dinyi»-ի նոտաների համակարգչային շարվածքի իրականացման համար:

## ԳԼՈՒԽ Ա

### ԱՐՈՒՄՅԱԿ ԱՅՆԹԱՊԼՅԱՆ. ԴԻՄԱՆԿԱՐԻ ՆՐԲԱԳԾԵՐ

*«Ծանօթ եւ յարգուած անուն մըն է ան, որպէս գնահատուած դաշնակահարուհի, վաստակաւոր ուսուցչուհի, եւ մանաւանդ տաղանդաւոր յօրինող որ մասնատրաբար վերջին երեք տարիներու ընթացքին իր մասին խօսիլ տուաւ Լիբանանեան թէ օտար մամուլը:*

*Համեստ հայուհի մըն է ան. կ'ընդունի թէ իր յօրինելու ձիրքը Աստուածատուր պարգեւ մըն է եւ թէ ինք անոր մեկնաբանն է լոկ:*

*Հայրենասէր է ան, հպարտ իր ծաղկող հայրենիքի վերելքով, խանդավառ արուեստի մարզին մէջ արժանագրուող յաջողութիւններով, հայ երաժշտութեան վարպետ Արամ Խաչատուրեանով եւ անոր արժանի յաջորդներով»<sup>1</sup>:*

Լիբանանահայ կոմպոզիտոր, դաշնակահարուհի, մանկավարժ, երաժշտական-հասարակական գործիչ Արուսյակ Այնթապլեանը ծնվել է<sup>2</sup> Մերսինում (Թուրքիա):

Վաղ եւն ի հայտ գալիս փոքրիկի երաժշտական ընդունակությունները. դաշնամուրի հետ առաջին ծանոթությունը տեղի է ունենում երեք տարեկանում: Իսկ հինգ տարեկանում արդէն սկսվում են դաշնամուրի պարապմունքներն իտալացի Ալֆրեդո Մոդիկայի դեկավարությամբ<sup>3</sup>:

Իր անդրանիկ ստեղծագործությունն Ա.Այնթապլեանը հորինել է 13 տարեկանում: «Տասնըրեք տարեկանիս գրած են «Քեզի Համար Միայն» կարճ կտորը, որ պահած են իր նախկին պարգութեանը մէջ: Երաժշտական յօրինումներէս ոմանք հետեւեալներն են.- Ռարգոտիներ թիւ 1 եւ 2, «Հրաժեշտ», «Միսիթարանք», «Գերեզմանաբարի մը Վրայ», «Վալս», «Ֆանթեզի», «Ձղջում», «Տիարութիւն», «Յիշատակ», «Սիրտ մը Քարի Տակ»: Կը տեսնէք թէ որքան զգացական են: Ասոնց կողքին

<sup>1</sup> **ԳճճԱՅԵԱՆ ԱՍՏՈՂԻԿ**, Արուսեակ Այնթապլեանի հետ, Թերթից կտրտուկներ, Անթվակիր, հայերեն, տպագիր 13 թերթ, 7 փաթեթ, Գ.ԱԹ, Արուսյակ Այնթապլեանի ֆոնդ N 66:

<sup>2</sup> Յավոք, մեզ չհաջողվեց պարզել Ա.Այնթապլեանի ծննդյան թիվը: Գ.ԱԹ Ա.Այնթապլեանի արխիվում գտնվող կենսագրություններում այն բացակայում է (տե՛ս Նյութեր՝ անփոփոխ հանդեսներում. 1968-74թթ., ֆրանսերեն, տպագիր 4 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապլեանի ֆոնդ N 62 և N 63):

<sup>3</sup> Թերթից կտրտուկներ, Անթվակիր, հայերեն, տպագիր 13 թերթ, 7 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապլեանի ֆոնդ N 66:

դաշնակի յարմարացուցած են «Եա Կըզայէլ» եւ «Շաթթի Եա Տընէա», անոնց տալով նաեւ հայկական երանգաւորում»<sup>4</sup>:

Ա.Այնթապլյանը տարրական և միջնակարգ կրթությունն ստացել է Բէյրութի Գթության դուստրերի մոտ (Les Filles de Charité):

Տարիներ անց, անդրադառնալով իր մանկության շրջանին և պատասխանելով Տրիպոլիում լույս տեսնող «Երիտասարդ հայուհի»-ի քրթակից Աստղիկ Գոճայանի «Ո՞վ մղած է ձեզ այդքան փոքր տարիքէն սիրելու երաժշտութիւնը եւ մանաւանդ դաշնակը» հարցին՝ «Ան պահ մը երազկոտ նայուածքը կ'ուղղէ անորոշին, ակնյայտօրէն փոխադրուած իր մանկութեան օրերը, ու կը պատասխանէ մեղմօրէն:

- Երաժշտասէր ընտանիքի մը զաւակ էի. երեց քոյրս դաշնակ կը նուագէր, եղբայրս՝ ջութակ, իսկ հայրս լաւ ձայն ունէր: Այս մթնոլորտը պատճառ եղաւ որ դաշնակի դասերս շարունակեմ եւ հասնիմ մինչեւ Պէյրութի Ամերիկեան համալսարանի երաժշտութեան բաժինը, ուր Քուկէլի տնօրինութեան շրջանին աշակերտեցի Ալֆրետ Քորթոյի. բոլորելով այդ շրջանին գոյութիւն ունեցող երաժշտութեան չորսամեայ շրջանը, ստացայ Պսակաւոր Արուեստից տիտղոս: Ապա մեկնեցայ Բարիզ, ուր մենաշնորհը ունեցայ անձնական աշակերտուիլին ըլլալու Քորթոյի, որուն շունչին տակ կադապարտեցի դաշնակահարուիլի իմ նախասիրութիւններս, որոնցմէ գլխաւորն էր Շոբէնը, եւ յետոյ Ռ-ախմա-նինօֆ, Լից եւ Պախ»<sup>5</sup>:

Հիրավի անուրանալի է ֆրանսիացի դաշնակահար՝ մասնավորապէս Շոպենի ու Շումանի ստեղծագործության մասնագետ, մանկավարժ, դիրիժոր, երաժշտագետ՝ պիանիզմի պատմության և տեսության վերաբերյալ աշխատությունների հեղինակ, երաժշտական-հասարակական գործիչ, Փարիզի L'École Normal de Musique-ի (1919) հիմնադիր, մեծ վարպետ Ալֆրետ Կորտոյի (1877-1962) դերն Ա.Այնթապլյանի կատարողական ու ստեղծագործական դիմանկարի ձևավորման գործում: Շոպենի և Շումանի ստեղծագործությունների համարձակ մեկնաբանը՝ հարյուրամյակի ամենամեծ երաժիշտներից մեկը, խորհրդանշեց դասական դարաշրջանի մայրամուտը: Մասնագետները նրան համարում էին անհատական, սուբյեկտիվ ոճի վերջին ներկայացուցիչը, ով ունակ էր ճշգրիտ տեխնիկական զոհաբերել հանուն ինտուիցիայի ամբողջա-

<sup>4</sup> **Գոճայան Աստղիկ**, Արուսեակ Այնթապլեանի հետ, Թերթից կտրտուկներ, Անթվակիր, հայերեն, տպագիր 13 թերթ, 7 փաթեթ, Գ-ԱԹ, Ա.Այնթապլյանի ֆոնդ N 66:

<sup>5</sup> Նույն տեղում:

կանության, մեկնաբանման արտահայտչականության և ստեղծագործության իսկական ոգու արտահայտման: Թեև կատարողական արվեստում հետագայում այդ մոտեցումն իր տեղը զիջեց ժամանակակից «գլխական» նվագին, որը կենտրոնում դնելով տրամաբանությունն ու ճշգրտությունը՝ հավասարության նշան էր դնում երաժշտական ստեղծագործության կատարման և տառացի մետրոնոմիական «մեկնաբանման» միջև: Սակայն ժամանակի խորքից այսօր էլ մեզ է հասնում Կորտոյի պատգամը՝ «Ամենակարևորը՝ ազատություն տալ երևակայությանը, կրկին ստեղծելով ստեղծագործությունը: Սա՛ է հենց ինտերպրետացիան»<sup>6</sup>:

Ինչպես նշվեց՝ Ա.Այնթապլյանն իր բարձրագույն կրթությունն ստացել է Փարիզի L'École Normal de Musique-ի հովանու ներքո, հանրային կրթության մինիստրության կողմից արտոնված Բեյրութի Ամերիկյան համալսարանի երաժշտության բաժնում և ավարտել Փարիզում՝ աշակերտելով Ա.Կորտոյին, ուշադրությունը բևեռելով իր նախասիրած կոմպոզիտորի՝ Շոպենի ստեղծագործությունների վրա<sup>7</sup>:

Ա.Այնթապլյանի գործունեությունը ծավալվել է երեք հիմնական ուղղություններով՝

- կատարողական-համերգային գործունեություն,
- մանկավարժական գործունեություն,
- ստեղծագործություն:

### 1.1. Կատարողական-համերգային գործունեությունը

Ա.Այնթապլյանը բազմաթիվ համերգներով հանդես է եկել Բեյրութում, Տրիպոլիում, Դամասկոսում:

«Ռադիո-Արևելքը նրան է պարտական հայկական և արտասահմանյան ծրագրերով համերգների նախաձեռնության համար, որոնց գեղարվեստական ղեկավարն էր և 8 ամիս տևած բոլոր 15 օրերի ընթացքում հենց նա էր դաշնամուրով նվագակցում ծրագրի բոլոր մասերին (երգիչներ, բազմաձայն խմբերգեր, ջութակահարներ և այլն)»<sup>8</sup>:

<sup>6</sup> [http://ru.wikipedia.org/w/index.php?title=Корто,\\_Альфред&oldid=50141462](http://ru.wikipedia.org/w/index.php?title=Корто,_Альфред&oldid=50141462)

<sup>7</sup> Տե՛ս Նյութեր՝ ամփոփված հանդեսներում. 1968-74թթ., ֆրանսերեն, տպագիր 4 փաթեթ, Գ-ԱԹ, Ա.Այնթապլյանի ֆոնդ N 62 և N 63:

<sup>8</sup> Տե՛ս Նյութեր՝ ամփոփված հանդեսներում. 1968-74թթ., ֆրանսերեն, տպագիր 4 փաթեթ, Գ-ԱԹ, Ա.Այնթապլյանի ֆոնդ N 62 և N 63: Ֆրանսերենից թարգմանությունը՝ Սարգսիսի տա Զամայանի:

«Նոր կյանքը» 1966թ. նոյեմբերի 6-ի համարում ծավալուն հոդվածով անդրադառնում է Ա.Այնթապյանի Փարիզ ու Հռոմ կատարած ուղևորություններին: «Պզանտոնեան Սրբուհի Աննա քոյրերու գոլէճի դաշնակի փրօֆեսէօր, յօրինող եւ արժէքատր դաշնակահարուհի Օր. Արուսեակ Այնթապեան, այս ամառ յաջող շրջապտոյտ մը կատարեց դէպի եւրոպական ոստաններ:

Օր. Այնթապեան մասնատր յաջողութիւն արձանագրեց Փարիզի մէջ, ուր առիթը ունեցաւ ծանօթանալու եւ իր գործերը ներկայացնելու փարիզեան երաժշտագէտներու ամենաբարձր շրջանակներուն:

Արդարեւ, Այնթապեան անծանօթ մը չէր փարիզեան շրջանակներուն համար: Մի քանի տարիներ առաջ ան յօրինած էր «Միայն քեզի համար», «Ռափստոսի թիւ մէկ», «Տխրութիւն» եւ այլ մելոտիները, որոնք ժամանակին որոշ յաջողութիւն արձանագրեցին: Ֆօնթենեպլէօյի սքանչելի անտառին մէջ էր որ Արուսեակ Այնթապեան ներշնչուած եւ յօրինած է Ռափստոսին:

Օր. Այնթապեան մեծ խանդավառութեամբ կը նկարագրէ Ֆրանսայի իր բարեկամներուն ցոյց տուած ընդունելութիւնը: Ասոնց շարքին ան կը յիշէ անունները Ռճրադատ Ատեանի մեծ փաստաբաններէն մեթր Թէօտօր Վալենսին, հռչակատր դերասանուհի Կապի Մօրլէյը, փարիզեան բեմի հսկաներէն՝ Անտրէ Լիւկէն եւ երկու նշանատր տաղերգուներ Ժաննա Բաքո եւ Ժան Ժուէն: Բոլորն ալ շրջապատած են հայ արուեստագիտուհին եւ խանդավառուած անոր տաղանդով եւ զգայութեամբ:

«Տալլասի Ողբերգութիւնը», նուիրուած հանգուցեալ նախագահ Քէնետի յիշատակին, շատ յուզած է տիկին Ժազիլն Քէնետին, որ շնորհակալութեան գիր մը յղած է արուեստագիտուհին՝ Լիբանանի մօտ այն ժամանակուայ ամերիկեան դեսպան Պր. Արմին Մայերի միջոցաւ:

Փարիզեան մամուլը, հեռատեսիլն ու ձայնասփիւռը մեծ հետաքրքրութիւն ցոյց տուած են եւ գովասանական խօսքեր շնորհած անոր արուեստին մասին: Նախքան Փարիզ մեկնումը, Արուսեակ Այնթապեան ընդունուած էր նախ. Հելուի կողմէ եւ յանձնած ժապաւէն մը՝ «Զայլերգ Լիբանանի համար» իր յօրինումէն, որ ձօնուած էր նախագահին: Ազդուած, նախագահ Հելու խոստացած է անգամ մը եւս ընդունիլ Օր. Այնթապեանը՝ իր տպատրութիւնները յայտնելու համար:

Ֆրանսական մայրաքաղաքին մէջ Օր. Այնթապեան կ'ընդունուի



«Փարիզեան երաժշտական շաբաթներ»ու արուեստի խորհրդատու Տիկին Լին Վիալայի կողմէ: Լիբանանցի երաժշտագիտուհիին գործերը ունկնդրելէ ետք, Տիկին Վիալա մեծապէս կը գնահատէ անոր արուեստը, ուր կը տեսնէ վիպապաշտ դպրոցին մնայուն ազդեցութիւնը, արժէք մը, որ շատ հազուագիւտ է մեր դարուն:

Աւելի ետք, Օր.Այնթապլեան կ'ընդունուի Փարիզի երաժշտութեան բարձր քննարկութեամբ, ուր Պր. Ժօրժ Ֆրիպուլէ, երաժշտական ուսումներու թեքնիք օգնականը, մեծապէս կը գնահատէ Օր. Այնթապլեանի հարազատ ոճը եւ հաւատարմութիւնը, հանդէպ վիպապաշտ դպրոցին: Մեծ վարպետը կը խնդրէ հայ արուեստագիտուհիէն՝ իր գործերէն մաս մը ձգել իր մօտ, հետագային ուսումնասիրելու համար:

23 Սեպտեմբերին, ձայնասփիւռի տան սրահներուն մէջ, իպատիւ Օր.Այնթապլեանի մեծ քօքէյլ մը կը տրուի կազմակերպութեամբ եւ հովանաւորութեամբ «Սօսիէթէ Էնթերնասիօնալ Տանքուրաժըման օ Բրօկէ» կազմակերպութեան:

Քօքէյլի ընթացքին, Պ. Մերժ Բօլ, Պրօկլիի դուքսին ներկայացուցիչը, Այնթապլեանը կը պարգեւատրէ ընկերակցութեան արծաթեայ մեծ շքանշանով: Օր. Այնթապլեան միաժամանակ պատկառելի Փարիզի արուեստից, գիտութեանց եւ գրականութեան մեծ շքանշանին:

Փարիզէն Հռոմ անցնելով, Օր. Այնթապլեան առանձնաշնորհումը կ'ունենայ մասնաւոր ունկնդրութեան մը արժանանալու Սրբազան Քահանայապետին կողմէ: Պօղոս Ջ. Պապը, որուն իր յօրինումներէն մէկը՝ «Պապական Օրհնութիւնը», ձօնած էր Օր.Այնթապլեան, երբ վերջինս դէպի Հնդկաստան իր պատմական ճանապարհորդութեան ընթացքին էջք կը կատարէր Պէյրութի օդակայանը: Ս.Քահանայապետը կը շնորհատրէր մեծ արուեստագիտուհիին եւ այդ առթիւ իր օրհնութեանց կողքին Այնթապլեանը կը պարգեւատրէր ոսկեայ շքանշանով մը, որուն մէկ երեսին փորագրուած էր Պօղոս եւ Պետրոս առաքելներուն նկարները, իսկ միւս երեսին՝ պապական շքանշանը: Նախապէս Ս. Պապը իր նուիրակին միջոցաւ վարձատրած էր Օր.Այնթապլեանը, ողարկելով ոսկեայ վարդարան մը»<sup>9</sup>:

Հատկորոշ է, որ «Pour toi seul» երգի տեքստի հեղինակներ Ժան Ժուենն ու Ժաննա Պակոն 1966-ի սեպտեմբերին Ա.Այնթապլեանին են

<sup>9</sup> Արուսեակ Այնթապլեանի յաջողութիւնը Հռոմի եւ Փարիզի մէջ, «Նոր Կեանք», 6 նոյեմբերի, 1966, էջ 3 և 22:

ձոնել իրենց բանաստեղծությունը՝ AROUSSIAK AINTABLIAN արքունիկոսով<sup>10</sup>:

### ACROSTICHE

Dédié à AROUSSIAK AINTABLIAN

Par

**Jean JOUENNE - Jeanne PACOUD**

Membres des Sociétés Lyrique et Dramatique  
Lauréats d'Arts, Sciences, Lettres et de la Ligue  
du Dévouement National

**A** rtiste du Liban à la ferveur d'apôtre  
**R** évant d'un monde heureux sans pauvres ni méchants  
**O** ubliant tes malheurs pour pleurer ceux des autres  
**U** n grand souffle d'amour émane de tes chants.  
**S** ouffrance et désespoir loin d'abatte ton âme  
**S** ont un terrain fertile, un ferment douloureux:  
**I** Is font revivre en nous ces deux terribles drames:  
**A** près l'horrible fin d'un frère affectueux  
**K** ennedy abattu dans un meurtre odieux.

**A** ndantes, **adagios**, sous tes doigts se succèdent  
**I** ndignés, révoltés par le démon du mal,  
**N** ous révélant ainsi les tourments qui t'obsèdent,  
**T** ous les élans d'un cœur tendre et sentimental  
**A** rtiste du Liban, grande amie de la France.  
**B** ienvenue à Paris en de trop brefs séjours.  
**L** oin de toi tes amis gardent une espérance  
**I** maginant déjà de plus fréquents retours.  
**A** lors puisse ta muse ayant séché ses pleurs  
**N** ous composer enfin des hymnes de bonheur.

Jean JOUENNE - Jeanne PACAUD  
Paris, Septembre 1966

---

<sup>10</sup> Նյութեր Այնթապյանի մասին՝ ամփոփված հանդեսներում, 1969թ., 15 հունիսի, ֆրանս., տպ. 28 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 60:

## 1.2. Մանկավարժական գործունեությունը

Տարիներ շարունակ Ա.Այնթապյանը Բզանսոնի Սուրբ Աննայի քույրերի հաստատության դաշնամուրի պրոֆեսոր էր: Ի պատասխան Աստղիկ Գոճայանի՝ «Ձեր ժամանակը ի՞նչ ձեռով քաժնած եք ձեր ուսուցչուհիի եւ յօրինողի ասպարեզին կատարելապէս հետեւելու համար» հարցին, պրոֆեսոր Ա.Այնթապյանը խոստովանել է՝ «Պրզանսրնի դաշնակի տարիներու Փրօֆէսօրը ըլլալու հանգամանքովս շաբթուայ մի քանի օրը կը յատկացնեմ հոն, իսկ մնացեալ օրերուն կը զբաղիմ իմ անձնական աշակերտներովս, որոնց թիւը մօտաւորապէս յիսունի կը հասնի: Այս վերջիններուն մասնակցութեամբ է որ հանրութեան կը ներկայացնենք տարեկան մեր երաժշտական ունկնդրութիւնը, որոնց մասին տեղական մամուլը լայնօրէն կ'անդրադառնայ»<sup>11</sup>:

Իր աշակերտներին քաջալերելու և ոգեշնչելու համար Ա.Այնթապյանը կազմակերպում է ամենամյա ունկնդրումներ, որոնց միակ նպատակն էր՝ բարձր պահել արվեստը և ծառայել արվեստին: Այդ համերգները նկատելի երևույթ դարձան Լիբանանի երաժշտական կյանքում: Ա.Այնթապյանի աշակերտների ամենամյա ունկնդրումին ներկա էին գտնվում բազում պաշտոնյաներ, ծնողներ և աշակերտների ընկերները: Ավելին՝ դրանք տեղի էին ունենում լիբանանյան բարձրաստիճան պաշտոնյաների հովանու ներքո: Այսպէս՝ 1962-ի հունիսի 17-ի համերգը կազմակերպվել էր Արտաքին գործերի նախարար Ֆիլիպ Տակլայի, 1964-ի հունիսի 14-ի համերգը՝ Արտաքին գործերի նախարար Ֆուադ Ամմունի, 1966-ի հունիսի 5-ի համերգը՝ Կրթության նախարար Ֆուադ Բուտրոսի բարձր հովանու ներքո և այլն:

Ա.Այնթապյանն իր մանկավարժական գործունեությամբ մեծապէս նպաստեց դաշնակահար կադրերի պատրաստմանը Բեյրութում: Նրա սաների թվում էին ինչպէս հայ, այնպէս էլ արաբ պատանիներ ու աղջիկներ: Դրանով իսկ Ա.Այնթապյանն իր ծանրակշիռ նպաստն է բերել լիբանանյան դաշնամուրային կատարողական դպրոցի զարգացման գործին:

Համերգների ծրագրերում Ա.Այնթապյանն ընդգրկում էր դասական, ռոմանտիկ կոմպոզիտորների, ազգային կոմպոզիտորական

<sup>11</sup> **Գոճայան Աստղիկ**, Արուսեակ Այնթապեանի հետ, Թերթից կտրուովներ, Անթվակիր, հայերեն, տպագիր 13 թերթ, 7 փաթեթ, Գ.Ա.Թ., Ա.Այնթապյանի ֆոնդ N 66:

դպրոցների ներկայացուցիչների, ժամանակակից, ինչպես նաև արաբ կոմպոզիտորների գործերը՝ իր նպաստը բերելով Լիբանանում նրանց դաշնամուրային երաժշտության տարածման գործին: Ձևավորված ավանդույթի համաձայն՝ յուրաքանչյուր համերգի ընթացքում նրա շնորհալի սաներից մեկի կատարմամբ տեղի էր ունենում Ա. Այնթապյանի նոր ստեղծագործության պրեմիերան:

Իր սաների ամենամյա համերգներով Ա.Այնթապյանը նպաստել է նաև Լիբանանում Արամ Խաչատրյանի երաժշտության տարածմանը՝ դրանք անպայմանորեն ներառելով համերգների ծրագրերում: Իր սիրելի Ա.Խաչատրյանի «Մուսերով պարը» երկու դաշնամուրի համար առաջին անգամ հնչել է 1956-ի մայիսի 28-ի համերգի ժամանակ՝ Մալակ Բեյդունի և Հիլդա Ջանյանի կատարմամբ<sup>12</sup>: Իսկ 1959-ից սկսած բոլոր համերգներին կատարվել է Ա.Խաչատրյանի երաժշտությունը՝ «Տոկատը», «Մուսերով պարը», Վալսը «Դիմակահանդեսից» և «Օրորոցայինը»: Դրանք նվագել են պրոֆեսորի ինչպես հայ, այնպես էր արաբ սաները:

1959-ի մայիսի 30-ի համերգի երկրորդ բաժնում «Մուսերով պարը» կատարել են Նադրա Խուրիև և Հիլդա Ջանյանը<sup>13</sup>: 1961-ի հունիսի 9-ի համերգի երկրորդ բաժնում Աստրիդ Գալուստյանը նվագել է Վալսը «Դիմակահանդեսից» և «Տոկատը», «Օրորոցայինը» հնչել է Աստրիդ Գալուստյանի ու Մոսի Պակլայանի, իսկ «Մուսերով պարը»՝ Անահիտ Պեչդիմալջյանի ու Աստրիդ Գալուստյանի կատարմամբ<sup>14</sup>:

1962-ի հունիսի 17-ի համերգը եզրափակվել է Ա.Խաչատրյանի երաժշտությամբ՝ Մոսի Պակլայանը նվագել է Վալսը «Դիմակահանդեսից», իսկ Ժակի Նասրին և Մոսի Պակլայանը՝ «Մուսերով պարը» երկու դաշնամուրով<sup>15</sup>:

1963-ի հունիսի 2-ի համերգը նույնպես եզրափակվել է խաչատրյանական հնչյուններով՝ այս անգամ երկու դաշնամուրով Սոնա Դուզ-

<sup>12</sup> Տե՛ս Programme, Ծրագիր, 1956թ., 28 մայիսի, ֆրանս., տպ. 8 թերթ, 1 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 49:

<sup>13</sup> Տե՛ս Programme, Ծրագիր, 1959թ., 30 մայիսի, ֆրանս., տպ. 6 թերթ, 1 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 51:

<sup>14</sup> Տե՛ս Programme, Ծրագիր, 1961թ., 9 հունիսի, ֆրանս., տպ. 7 թերթ, 1 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 52:

<sup>15</sup> Տե՛ս Programme, Ծրագիր, 1962թ., 17 հունիսի, ֆրանս., տպ. 4 թերթ., 1 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 53:

յանն ու Սոսի Պակլայանը նվագել են «Օրորոցայինը», իսկ Սոսի Պակլայանն ու Աստրիդ Գալուստյանը՝ «Սուսերով պարը»<sup>16</sup>:

1964-ի հունիսի 14-ի համերգի երկրորդ բաժնում Վերա Աբի-ժաուդեն կատարել է Վալսը «Դիմակահանդեսից»<sup>17</sup>, իսկ 1965-ի հունիսի 13-ի համերգի երկրորդ բաժնում Վալսը հնչել է Պերլ Միսկի կատարմամբ<sup>18</sup>:

1966-ի հունիսի 5-ի համերգի առաջին բաժնում Նառա Գյոթչերյանը կատարել է «Տոկատը», իսկ համերգն ավարտվել է Արտեմիս Դիլենյանի և Կլեր Մաասաբի կատարմամբ «Սուսերով պարով»<sup>19</sup>:

1968-ի մայիսի 19-ի համերգի առաջին բաժնում Նառա Գյոթչերյանը կատարել է Վալսը «Դիմակահանդեսից», իսկ երկրորդ բաժնում Սոնա Զյուրբյանի և Նառա Գյոթչերյանի կատարմամբ հնչել է «Օրորոցայինը»՝ երկու դաշնամուրով<sup>20</sup>:

1969-ի հունիսի 15-ի համերգի առաջին բաժնում Վաչե Չալակյանը նվագել է «Տոկատը», երկրորդ բաժնում Ժակլին Մասուդի կատարմամբ հնչել է «Սուսերով պարը», իսկ համերգը եզրափակվել է «Դիմակահանդեսից» Վալսով՝ Դարիո Ամադեոյի և Վաչե Չալակյանի կատարմամբ<sup>21</sup>:

1971-ի ապրիլի 25-ի համերգի երկրորդ բաժնում Արփինե Իփրանոսյան-Պերլ Միսկ դուետի կատարմամբ հնչել է «Օրորոցայինը», ապա Վաչե Չալակյանը նվագել է «Տոկատը»: Համերգն ավարտվել է «Սուսերով պարով»՝ Անի Բոյաջյանի և Զիվան Չալակյանի կատարմամբ<sup>22</sup>:

1974-ի հունիսի 9-ի համերգի առաջին բաժնում Թերեզ Զուեիմի և Սոնա Չաքարիայի կատարմամբ երկու դաշնամուրով հնչել է «Օրորո-

<sup>16</sup> St'u Programme, Ծրագիր, 1963թ., 2 հունիսի, ֆրանս., տպ. 12 թերթ, 1 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապլյանի ֆոնդ N 54:

<sup>17</sup> St'u Programme, Ծրագիր, 1964թ., 14 հունիսի, ֆրանս., տպ. 12 թերթ, 1 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապլյանի ֆոնդ N 55:

<sup>18</sup> St'u Programme, Ծրագիր, 1965թ., 13 հունիսի, ֆրանս., տպ. 12 թերթ, 1 փաթեթ, 13 հունիսի, Գ.ԱԹ, Ա.Այնթապլյանի ֆոնդ N 56:

<sup>19</sup> St'u Programme, Ծրագիր, 1966թ., 5 հունիսի, ֆրանս., տպ., 16 թերթ, 1 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապլյանի ֆոնդ N 57:

<sup>20</sup> St'u Programme, Նյութեր Այնթապլյանի մասին՝ ամփոփված հանդեսներում, 1968թ., 19 մայիսի, ֆրանս., տպ. 17 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապլյանի ֆոնդ N 61:

<sup>21</sup> St'u Programme, Նյութեր Այնթապլյանի մասին՝ ամփոփված հանդեսներում, 1969թ., 15 հունիսի, ֆրանս., տպ. 28 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապլյանի ֆոնդ N 60:

<sup>22</sup> St'u Programme, Նյութեր Այնթապլյանի մասին՝ ամփոփված հանդեսներում, 1971թ., 25 ապրիլի, ֆրանս., տպ. 28 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապլյանի ֆոնդ N 62:

ցայիմը», Ջիվան Չալակյանը նվագել է «Տոկատը», իսկ համերգը, ձևավորված ավանդույթին հավատարիմ, կրկին եզրափակվել է խաչատրյանական ակորդներով՝ «Դիմակահանդեսից» Վալսը երկու դաշնամուրով նվագել են Լենա Գելենյանն ու Ջիվան Չալակյանը<sup>23</sup>:

Հայկական դաշնամուրային երաժշտությունն Ա.Այնթապյանի սաների համերգում ներկայացվել է նաև 1965-ի հունիսի 13-ի համերգի առաջին բաժնում՝ Սոնա Գուզյանի կատարմամբ հնչել է Սարգիս Բարխուդարյանի (1887-1973)՝ 1921-ին ստեղծված «Նագ-պարը»<sup>24</sup>:

Գ.ԱԹ-ում գտնվող Ա.Այնթապյանի արխիվում առկա են 1952 թվականի հունիսի 22-ի<sup>25</sup>, 1956 թվականի մայիսի 28-ի<sup>26</sup>, 1957 թվականի հունիսի 14-ի<sup>27</sup>, 1959 թվականի մայիսի 30-ի<sup>28</sup>, 1961 թվականի հունիսի 9-ի<sup>29</sup>, 1962 թվականի հունիսի 17-ի<sup>30</sup>, 1963 թվականի հունիսի 2-ի<sup>31</sup>, 1964 թվականի հունիսի 14-ի<sup>32</sup>, 1965 թվականի հունիսի 13-ի<sup>33</sup>, 1966 թվականի հունիսի 5-ի<sup>34</sup> համերգների ծրագրերը և 1968 թվականի մայիսի 19-ի<sup>35</sup>,

<sup>23</sup> Տե՛ս Programme, Նյութեր Այնթապյանի մասին՝ ամփոփված հանդեսներում, 1974թ., 9 հունիսի, ֆրանս., տպ. 30 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 63:

<sup>24</sup> Տե՛ս Barkhoutarian, Naz-Bar, Ծրագիր, 1965թ., 13 հունիսի, ֆրանս., տպ. 12 թերթ, 1 փաթեթ, 13 հունիսի, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 56:

<sup>25</sup> Տե՛ս Ծրագիր, 1952թ., 22 հունիսի, ֆրանս., տպ. 4 թերթ, 1 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 48:

<sup>26</sup> Տե՛ս Ծրագիր, 1956թ., 28 մայիսի, ֆրանս., տպ. 8 թերթ, 1 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 49:

<sup>27</sup> Տե՛ս Ծրագիր, 1957թ., 14 հունիսի, ֆրանս., տպ. 8 թերթ, 1 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 50:

<sup>28</sup> Տե՛ս Ծրագիր, 1959թ., 30 մայիսի, ֆրանս., տպ. 6 թերթ, 1 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 51:

<sup>29</sup> Տե՛ս Ծրագիր, 1961թ., 9 հունիսի, ֆրանս., տպ. 7 թերթ, 1 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 52:

<sup>30</sup> Տե՛ս Ծրագիր, 1962թ., 17 հունիսի, ֆրանս., տպ. 4 թերթ., 1 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 53:

<sup>31</sup> Տե՛ս Ծրագիր, 1963թ., 2 հունիսի, ֆրանս., տպ. 12 թերթ, 1 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 54:

<sup>32</sup> Տե՛ս Ծրագիր, 1964թ., 14 հունիսի, ֆրանս., տպ. 12 թերթ, 1 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 55:

<sup>33</sup> Տե՛ս Ծրագիր, 1965թ., 13 հունիսի, ֆրանս., տպ. 12 թերթ, 1 փաթեթ, 13 հունիսի, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 56:

<sup>34</sup> Տե՛ս Ծրագիր, 1966թ., 5 հունիսի, ֆրանս., տպ., 16 թերթ, 1 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 57:

<sup>35</sup> Նյութեր Այնթապյանի մասին՝ ամփոփված հանդեսներում, 1968թ., 19 մայիսի, ֆրանս., տպ. 17 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 61:

1969 թվականի հունիսի 15-ի<sup>36</sup>, 1971 թվականի ապրիլի 25-ի<sup>37</sup> և 1974 թվականի հունիսի 9-ի<sup>38</sup> համերգների կապակցությամբ հրատարակված հանդեսները՝ համերգների ծրագրերով:

Դրանց ուսումնասիրությունը ցույց տվեց, որ համերգների ծրագրերում Ա.Այնթապյանը շատ մեծ տեղ է հատկացրել իր պաշտելի Շոպենի ստեղծագործություններին: Այսպես՝ 1952-ի հունիսի 22-ի համերգի առաջին բաժնում Հիլդա Ջանյանը կատարել է Valse op. 67, N 2, Ադլա Մասուդը՝ N 3 Բալլադը, իսկ Ռայմոնդ Նահասն ու Ադլա Մասուդը՝ Polonaise Militaire-ն երկու դաշնամուրի համար: Համերգի երկրորդ բաժնի առաջին մասը լիովին նվիրվել է Շոպենի գործերի կատարմանը. հնչել են՝ Nocturne N 2, Deux Valses - en fa mineur, en do dièse mineur, Deux Etudes – en mi bémol majeur, en do mineur, Scherzo N 2<sup>39</sup>:

Հաջորդ համերգներից յուրաքանչյուրի ծրագրում անպայմանորեն ընդգրկվել են Շոպենի գործերից մի քանիսը, և դա այն դեպքում, երբ մյուս հեղինակները հիմնականում ներկայացվել են մեկական ստեղծագործություններով:

1956-ի մայիսի 28-ի համերգի առաջին բաժնում Նադրա Խուրիմ կատարել է Շոպենի Valse op. 69, N 1, Արփինե Թեյլանը՝ Valse op. 69, N 2, իսկ Ֆենիսի Մավրովոնիտիսը՝ 3-8 մագուրկաները: Համերգի երկրորդ բաժնի առաջին մասը լիովին նվիրվել է Շոպենի գործերի կատարմանը. Սալվա Աբի-ժաուդեն նվագել է՝ Deux Préludes, Nocturne op. 9, N 2, Valse en do dièse mineur<sup>40</sup>...

Հընթացս համերգների հնչել են Բախի, Հենդելի, Ժան Ֆիլիպ Ռամոնի, Լուի Կլոդ Դակենի, Ֆրիդրիխ Կուլաուի, Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի, Լյուդվիգ վան Բեթհովենի, Յոհաննես Բրամսի, Կարլ Մարիա Վեբերի, Ֆրանց Շուբերտի, Ֆերենց Լիստի, Նորբերտ Բյուրգ-մյուլլերի, Անտոն Դիաբելլի, Էդվարդ Գրիգի, Կլոդ Դեբյուսիի, իսպա-

<sup>36</sup> Նյութեր Այնթապյանի մասին՝ ամփոփված հանդեսներում, 1969թ., 15 հունիսի, ֆրանս., տպ. 28 թերթ, Գ-ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 60:

<sup>37</sup> Նյութեր Այնթապյանի մասին՝ ամփոփված հանդեսներում, 1971թ., 25 ապրիլի, ֆրանս., տպ. 28 թերթ, Գ-ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 62:

<sup>38</sup> Նյութեր Այնթապյանի մասին՝ ամփոփված հանդեսներում, 1974թ., 9 հունիսի, ֆրանս., տպ. 30 թերթ, Գ-ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 63:

<sup>39</sup> St u Programme, Ծրագիր, 1952թ., 22 հունիսի, ֆրանս., տպ. 4 թերթ, 1 փաթեթ, Գ-ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 49:

<sup>40</sup> St u Programme, Ծրագիր, 1956թ., 28 մայիսի, ֆրանս., տպ. 8 թերթ, 1 փաթեթ, Գ-ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 49:

նացիներից՝ Մանուել դե Ֆալյայի, Իսահակ Ալբենիսի, Էնրիկե Գրանադոսի, լեհերից՝ Մորից Մոշկովսկու, Իգնացի Յան Պադերևսկու, Ալեքսանդեր Տանամանի, ռուս կոմպոզիտորներից Պյոտր Չայկովսկու և Սերգեյ Ռախմանինովի, արաբ հեղինակների և այլոց դաշնամուրային գործերը:

### 1.3. Ստեղծագործությունը

Փայլուն դաշնակահար Ա.Այնթապյանը, բնականաբար, ստեղծագործել է հիմնականում դաշնամուրի համար՝ ստեղծելով խոշոր կտավի գործեր ու մանրանվագներ: Նրա ժառանգության մեջ տեղ ունեն երկու դաշնամուրի համար արված գործերը ևս, ինչպես նաև երեք երգ՝ «Pour toi seul»<sup>41</sup> («Միայն քեզ համար») ֆրանսերեն տանգոն ձայնի և դաշնամուրի համար (խոսք՝ Ժան Ժուենի և Ժաննա Պակոյի), «Un cour sous la pierre»<sup>42</sup> («Միրտ մը քարին տակ») հայերեն երգը ձայնի ու դաշնամուրի համար (խոսք՝ Միհրան Տամադյանի) և «Priere»<sup>43</sup> (առանց խոսքի):

Ա.Այնթապյանի ստեղծագործությունները հնչել ու տարածվել են ոչ միայն Լիբանանում, այլև նրա սահմաններից դուրս՝ միջազգային ճանաչման հետ միասին կոմպոզիտորին բերելով տարբեր դիպլոմներ, մրցանակներ, մեդալներ ու շքանշաններ, որոնք գուրգուրանքով ցույց տալով Աստղիկ Գոճայանին, Ա.Այնթապյանը ներկայացրել է դրանք. «Այս մեկը «Կրանտ Մետայլ տ'Օնէօր»ն է, «Արուեստի Գիտություններու եւ Գրականութեան Ընկերակցութեան» կողմէ, ստացուծ Բարիզ, 1954 թուին: Յաջորդը բացատրութիւն չկարօտիր. նշանաւոր Քենըտիի կիսանդրին է, մետալի վրայ<sup>44</sup>, անոր կողքին Սք. պապին շնորհած ոսկի

<sup>41</sup> «Pour toi seul», անթվակիր, Բեյրութ, տպագիր, ֆրանսերեն 2 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 29:

<sup>42</sup> «Un cour sous la pierre» (Միրտ մը քարին տակ), կից՝ երգի մեղեդին, ձեռագիր 4 թերթ, 2 թերթ, 3 թերթ, 5 թերթ, 3 թերթ, 5 թերթ, ընդ.՝ 22 թերթ, 6 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 31:

<sup>43</sup> «Priere», անթվակիր, առանց գրական տեքստի, ձեռագիր 2 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 30:

<sup>44</sup> «Քենեդի» հուշամեդալն Ա.Այնթապյանը ստացել է Ջոն Քենեդու հիշատակին նվիրված «La Tragédie de Dallas» (1963) ստեղծագործության համար, Լիբանանում, ԱՄՆ-ի դեսպանատան տեղեկատվական ծառայության տնօրեն Վիլիամ Օմանից՝ ԱՄՆ դեսպան Արմին Մեյերի ամունից:



մետալը<sup>45</sup>: Անդին կ'երեւին երեք տարբեր տեսակի ֆրանսական շքանշաններ, ստացուած յաջորդաբար 1966-ին եւ 1967-ին:

ա. – Սօսիէթէ տ'Անքուրաժման Օ Բրօկրէ:

բ. – Ունիօն Ինթերնասիոնալ տիւ Պիէն Բիւպլիք եւ ամենէն կարեւորը՝ Մերիթ, Օրտըր տէ Բօմանտօր»<sup>46</sup>:

Այնթապլյանն արժանացել է «Լիբանանի Մայրի» մեդալին, քանի որ մի կողմից՝ նրա ժառանգության մեջ կան Լիբանանին նվիրված գործեր՝ «Hymne au Liban», «La Tragédie du Liban» և «Bénédictio Papale au Liban», մյուս կողմից՝ արաբական դարկեների փոխադրումները դաշնամուրի համար:

1967թ. Փարիզում Ա.Այնթապլյանը ստանում է Առաջընթացի խրախուսման հասարակության պատվո արձաթե դիպլոմ: «1967թ. ապրիլի 9-ին Առաջընթացի խրախուսման հասարակության կողմից պարգևների հանդիսավոր բաշխման ընթացքում հաճույք ենք ունեցել տեսնելու և ծափահարելու Ա.Այնթապլյանին:

Փարիզյան գրական և երաժշտական շրջապատը սկսում է լավ ճանաչել Ա.Այնթապլյանին, ով պարգևատրվել է շքանշանով մի քանի ամիս առաջ՝ Ռ-ադիոյի և հեռուստատեսությանը տանը, Հանրային բարօրության համընդհանուր Լիզայի կողմից»<sup>47</sup>:

Այդ իրադարձության կապակցությամբ Լուի Շեկրալան «Le Soir»-ի 1967 թվականի ապրիլի 28-ի համարում գրեց. «Պարգևի արժանացած լիբանանցիների ցուցակն օրըստօրե հարստանում է: Քամել Սուբահից, Միքայել Դեբաքեյից և մյուսներից հետո, Ա.Այնթապլյանը փառավորել է Լիբանանի անունը աշխարհի չորս ծագերում: Նա մեկնել է Փարիզ, որտեղ նրան կհանձնվի Առաջընթացի խրախուսման միավորման արձաթե մեդալ: Նա արժանի է այդ պարգևին, որը նրան կհանձնեն երաժշտության բնագավառում իր աշխատանքի համար:

Այս մեդալն ապրիլի 9-ին Փարիզի բժշկական նոր ֆակուլտետի

<sup>45</sup> Պապական ոսկե մեդալն Ա.Այնթապլյանը ստացել է Պողոս VI Պապին նվիրված «Bénédictio Papale au Liban» (1965) ստեղծագործության համար:

<sup>46</sup> **Գոճայեան Աստղիկ**, Արուսեակ Այնթապլյանի հետ, Թերթից կտրտուկներ, Անթվակիր, հայերեն, տպագիր 13 թերթ, 7 փաթեթ, Գ-ԱԹ, Ա.Այնթապլյանի ֆոնդ N 66:

<sup>47</sup> Առաջընթացի խրախուսման հասարակության հանդիսավոր պարգևատրումը (պարգևների հանդիսավոր բաշխումը), Նյութեր Այնթապլյանի մասին՝ ամփոփված հանդեսներում, 1974թ., 9 հունիսի, ֆրանս., տպ. 30 թերթ, Գ-ԱԹ, Ա.Այնթապլյանի ֆոնդ N 63: Ֆրանսերենից թարգմանությունը՝ Մարգարիտա Քամայանի:

ամֆիթատրոնում նրան հանձնել են Գիտությունների ակադեմիայի մշտական քարտուղար, ֆրանսիական ակադեմիայի անդամ, ֆիզիկայի նոբելյան մրցանակակիր, Առաջընթացի խրախուսման հասարակության կառավարման խորհրդի պատվավոր նախագահ դուքս Լուի դը Բրոյլը, նախագահի պաշտոնակատար, գիտությունների ակադեմիայի անդամ, պրոֆեսոր Լեոպոլդ Էսկանդը:

Ա.Այնթապլյանին շնորհավորեցին առաջընթացի քաջալերման ընդհանուր քարտուղար Ժակ Սուլան, ֆրանսիական օդային ուժերի զեներալ դոկտոր Սուբրիանը, «Ծառայության համար» շքանշանի նախագահ պարոն Մերերը, ով լիբանանյան կոմպոզիտորին հանձնեց «Ծառայության համար» շքանշանի ժապավենը:

Շնորհավորելով Ա.Այնթապլյանին՝ մենք մեզ ենք շնորհավորում, քանի որ նրա անունն ականավոր գրականագետների, գիտնականների՝ ֆրանսիացի կոմպոզիտոր Ժորժ Օրիկի, գունավոր հեռուստացույցի ստեղծող Անրի Ֆրանցի, «ռադիոստեղծող շիշի հայր» սիր Ռոբերտ Վատսոն Վոթի և այլոց կողքին է»<sup>48</sup>:

Ինչպես տեսնում ենք՝ չափազանց սերտ են եղել Ա.Այնթապլյանի կապերը Փարիզի հետ, որտեղ նա վերջնականապես ձևավորվել էր որպես դաշնակահար ու ստեղծագործող: Այսպես, իր Ռ-ապտոդիա N 1-ը նա նվիրել է Փարիզի հայտնի փաստաբան Թեոդոր Վալենսին: Այն «ներշնչվել է և ստեղծվել Ֆոնտենբլյոյի հիասքանչ միջավայրում»<sup>49</sup>: Ավելին՝ «Փարիզում երգիչները, բանաստեղծներն ու արվեստագետները մեր կոմպոզիտորի «Ռ-ապտոդիա համար 1»-ը տոնում էին մի շարք հետաքրքիր միջոցառումներով: Ա.Այնթապլյանը ջերմորեն ընդունվեց շատ հայտնի անհատների կողմից: Նրա պատվին հայտնի ակորդեոնահար Ֆրեդո Գարդոնին շամպայն է բացում Աստղերի բարում և կատարում է իր նվագացանկի լավագույն ստեղծագործությունները: Կարոլ Բրոնտեն Ա.Այնթապլյանի պատվին երգում է և արևելյան պար պարում»:

«Օրիորդ Ա.Այնթապլյանը վերջերս պատիվ է ունեցել կապ հաստատելու Փարիզի երաժշտության Ազգային Կոնսերվատորիայի հետ և այնտեղ ծանոթանալու պարոն Էդմոն Մարկի հետ, ով կոմպոզիտոր է

<sup>48</sup> **Louis Checrallah**, Aroussiak Aintablian, «Le Soir», 28.04.1967. Ֆրանսերենից քարգմանությունը՝ Մարգարիտա Քամալյանի:

<sup>49</sup> Նույն տեղում:

և երաժշտության դասախոս, այդ հաստատությունում օտարերկրացիների ծառայության տնօրենը: Այնթապյանը նրան ցանկացել է ցույց տալ իր նախագծերը, որոնք վերաբերում են իր աշակերտների նախապատրաստմանը՝ կոնսերվատորիա մուտք գործելու և վերջում դիպլոմ ստանալու համար: Այս նախագծերը շատ սիրով ընդունվեցին ինչպես պարոն Էդմոն Մարկի, այնպես էլ այլ որակավորված անհատների կողմից, որոնք արդարացիորեն բարձր են գնահատում կոնսերվատորիայի և օտար երկրների միջև գեղարվեստական նեղ համագործակցությունը: Նրանք գտնում են, որ դա միայն կժառայի երաժշտությանը:

Օրիորդ Ա.Այնթապյանն, ի դեպ, որպես մանկավարժ և կոմպոզիտոր իր գիտելիքների և դասավանդման մեծ փորձի շնորհիվ որակավորված է լավ կատարելագործելու համար այն նախագծերը, որոնք մեզ է ներկայացրել:

Փարիզ, 12 հոկտեմբերի, 1953»<sup>50</sup>:

Իսկ այժմ թերթենք Ա.Այնթապյանի՝ մեզ անձանոթ դաշնամուրային ստեղծագործության էջերը:

---

<sup>50</sup> Նյութեր Այնթապյանի մասին՝ ամփոփված հանդեսներում, 1969թ., 15 հունիսի, ֆրանս., տպ. 28 թերթ, Գ-ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 60:

## ԳԼՈՒԽ Բ

### ԱՐՈՒՄՅԱԿ ԱՅՆԹԱՊԼՅԱՆԻ ԳԱՇՆԱՍՈՒՐԱՅԻՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Արուսյակ Այնթապյանի՝ գերազանցապես դաշնամուրային ստեղծագործությունն ընդգրկում է հետևյալ երկերը՝ «Les Larmes»<sup>1</sup> («Արցունքները», 1953), «La Tragédie de Dallas»<sup>2</sup> («Դալասի ողբերգությունը», 1963), «Rhapsodie N 2»<sup>3</sup> (1963), «Sur une tombe»<sup>4</sup> («Շիրմի վրա», 1964), «Bénédiction Papale au Liban»<sup>5</sup> («Պապի օրհնությունը Լիբանանում», 1965), «Hymne au Liban»<sup>6</sup> («Չոն Լիբանանին», 1966), «La Paix»<sup>7</sup> («Խաղաղություն», 1968), «Hommage»<sup>8</sup> («Հարգանքի տուրք», 1969), «Odyssee Spatiale»<sup>9</sup> («Տիեզերական ողիսական», 1970), «Rhapsodie»<sup>10</sup> (1974), «Said Akb»<sup>11</sup> («Սաիդ Աքլ», 1974) և անթվակիր «Bonheur perdu»<sup>12</sup> («Կորու-

<sup>1</sup> «Les Larmes», 1953թ., նվիրված է Ջորջ Այնթապյանի հիշատակին, ձեռագիր 5 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 13:

<sup>2</sup> «La Tragédie de Dallas», 1963թ., նվիրված է Քենեդիի հիշատակին, կից՝ թերի հատվածներ և համառոտագրություն, ձեռագիր 9 թերթ, 3 թերթ, ընդ.՝ 12 թերթ, 2 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 10:

<sup>3</sup> Rhapsodie N 2, 1963թ., կից՝ ստեղծագործության համառոտագրություն, ձեռագիր 10 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 16:

<sup>4</sup> «Sur une tombe», Սիմֆոնիա, 1964թ. 15 դեկտեմբերի, կից՝ ստեղծագործության համառոտագրություն, ձեռագիր 5 թերթ, 4 թերթ, ընդ.՝ 9 թերթ, 2 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 24:

<sup>5</sup> «Bénédiction Papale au Liban», Նվիրված է Պողոս VI Պապին, 1965, կից՝ ստեղծագործության համառոտագրություն, ձեռագիր 12 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 1:

<sup>6</sup> «Hymne au Liban», Սիմֆոնիա, 1966, կից՝ ստեղծագործության համառոտագրություն, ձեռագիր 11 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 8:

<sup>7</sup> «La Paix», Սիմֆոնիա, 1968, նվիրված Թանին, կից՝ ստեղծագործության համառոտագրություն, ձեռագիր 17 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 9:

<sup>8</sup> «Hommage», նվիրված է դր Գոլին, 1969թ., կից՝ ստեղծագործության համառոտագրություն, ձեռագիր 19 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 7:

<sup>9</sup> Նոտաները չկան, կա ձայնագրությունը՝ «Odyssee Spatiale», 6 ժապավեն, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 43:

<sup>10</sup> Rhapsodie, 1974թ., ձեռագիր 4 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 19:

<sup>11</sup> «Said Akb», 22 հունիսի, 1974թ., ձեռագիր 17 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 22:

<sup>12</sup> «Bonheur perdu», անթվակիր, ձեռագիր 5 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 2:

ված երջանկություն», «Consolation»<sup>13</sup> («Մխիթարություն»), «La Tragédie du Liban»<sup>14</sup> («Լիբանանի ողբերգությունը»), «Les Adieux»<sup>15</sup> («Հրաժեշտը»), «Rhapsodie N 1»<sup>16</sup>, «Rhapsodie N 3 (Bonheur retrouvé)»<sup>17</sup> («Ռասպսոդիա N 3 (Վերագտած երջանկություն)»), «Rhapsodie N 3 (Rêve poetique)»<sup>18</sup> («Ռասպսոդիա N 3 (Բանաստեղծական երազ)»), «Regret»<sup>19</sup> («Ափսոսանք») և «Separation»<sup>20</sup> («Բաժանում»), «Fantaisie»<sup>21</sup> (անթվակիր), «Tristesse»<sup>22</sup> («Տխրություն», անթվակիր), «Regret»<sup>23</sup> («Ափսոսանք», անթվակիր), ինչպես նաև ստեղծագործություններ երկու դաշնամուրի համար՝ «Pour toi seul»<sup>24</sup> («Միայն քեզ համար», անթվակիր), «Souvenir»<sup>25</sup> («Հուշ», անթվակիր), «Caprice»<sup>26</sup>: Մրանցից մի քանիսը ժամանակին կոչվել են սիմֆոնիաներ:

Ա.Այնթապյանը դաշնամուրի համար մշակել է արաբական ժողովրդական դարբենների մեղեդիները՝ «Chatti ya dinniy»<sup>27</sup> և «Ya Ghzayel»,

<sup>13</sup> «Consolation», անթվակիր, ձեռագիր 5 թերթ, 5 թերթ, ընդ.՝ 10 թերթ, 2 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 4:

<sup>14</sup> «La Tragédie du Liban», անթվակիր, ձեռագիր 25 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 11:

<sup>15</sup> «Les Adieux», անթվակիր, ձեռագիր 6 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 12:

<sup>16</sup> Rhapsodie N 1, անթվակիր, ձեռագիր 5 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 15:

<sup>17</sup> Rhapsodie N 3 (Bonheur retrouvé), անթվակիր, ձեռագիր 9 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 17:

<sup>18</sup> Rhapsodie N 3 (Rêve poetique), անթվակիր, ձեռագիր 11 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 18:

<sup>19</sup> «Regret», անթվակիր, ձեռագիր 7 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 21:

<sup>20</sup> «Separation», անթվակիր, ձեռագիր 6 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 23:

<sup>21</sup> «Fantaisie», անթվակիր, Բեյրութ, տպագիր 2 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 6:

<sup>22</sup> «Tristesse», անթվակիր, ձեռագիր 2 թերթ, 3 թերթ, ընդ.՝ 5 թերթ, 2 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 25:

<sup>23</sup> «Regret», անթվակիր, Բեյրութ, տպագիր 2 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 20:

<sup>24</sup> «Pour toi seul», անթվակիր, երկու դաշնամուրի համար, ձեռագիր 11 թերթ, 11 թերթ, ընդ.՝ 22 թերթ, 2 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 14:

<sup>25</sup> «Souvenir», երկու դաշնամուրի համար, անթվակիր, ձեռագիր 10 թերթ, 9 թերթ, ընդ.՝ 19 թերթ, 2 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 26:

<sup>26</sup> Գ.ԱԹ Ա.Այնթապյանի ֆոնդում «Caprice»-ի նոտաները չկան, սակայն այն կատարվել է 1969թ. հունիսի 15-ի համերգի ժամանակ: Տե՛ս Նյութեր Այնթապյանի մասին՝ ամփոփված հանդեսներում, 1969թ., 15 հունիսի, ֆրանս., տպ. 28 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 60:

<sup>27</sup> «Chatti ya dinniy», անթվակիր, ձեռագիր 9 թերթ, 5 թերթ, 2 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 3:

որն անվանել է «Debki N 2»<sup>28</sup>: Սրանք ժամանակին մեծ ժողովրդականություն են վայելել ու բազմիցս կատարվել:

Ա.Այնթապլյանի գրչին է պատկանում նրա միակ վալսը՝ «Grand valse Brillante», որի նոտաները թեև բացակայում են կոմպոզիտորի արխիվում, սակայն այն հնչել է 1965թ. հունիսի 13-ի համերգի ժամանակ Արտեմիա Դելենյանի կատարմամբ<sup>29</sup>:

## 2.1. ԴԱԼԱՍԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ<sup>30</sup>

**Նվիրված է ԱՄՆ պրեզիդենտ Ջոն Բենեդու հիշատակին  
Ստեղծագործած է 1963-ին  
Թույլ տվեք ինձ արտասվել  
Տխուր ստեղծագործություն՝ նվիրված կուսակրոն մայր Վինսեն դը  
Պուլին ռեզիդնալ մայրապետ, Սուրբ Աննայի հաստատության և  
Բեզանտնի քույրերի վանքի տնօրեն  
Նվիրված է իր աշակերտ տիկին Կլոդ Չոզզոզիին՝ ծնված՝ Սալվա  
Աբի-ժաուդե**

*«Միացեալ Նահանգներու Նախագահ Չոն Բենըտին կը սպաննուի եւ ահաւասիկ, զգայուն սիրտը արուեստագիտուհիին ցնցուած այդ անարգ մահով եւ մանաւանդ մտաբերելով իր հարազատ եղբոր եղեռնական վախճանը, ստիպողական ներշնչումի մը կրակովը բռնկած, գրիչը ձեռք կ'առնէ եւ կը յօրինէ «Տալլասի Ողբերգութիւնը»»<sup>31</sup>:*

1963-ի նոյեմբերի 22-ին աշխարհը ցնցվեց ԱՄՆ 35-րդ պրեզիդենտ, 46-ամյա Ջոն Ֆիցջերալդ Բենեդու<sup>32</sup> դավադիր սպանության գույժից, որը տեղի ունեցավ Դալասում (Տեխասի նահանգ):

Ջ.Բենեդու ողբերգական մահը ցնցեց և տրտմեցրեց Ա.Այնթապլյանին: Այդ ժամանակ իր վերապրածը թարգմանելու նպատակով

<sup>28</sup> «Debki N 2», անթվակիր, ձեռագիր 11 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապլյանի ֆոնդ N 5:

<sup>29</sup> Տե՛ս Ծրագիր, 1965թ., 13 հունիսի, ֆրանս., տպ. 12 թերթ, 1 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապլյանի ֆոնդ N 56:

<sup>30</sup> «La Tragédie de Dallas», 1963, նվիրված է Բենեդու հիշատակին, կից՝ թերի հատվածներ և համառոտագրություն, ձեռագիր 9 թերթ, 3 թերթ, ընդ.՝ 12 թերթ, 2 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապլյանի ֆոնդ N 10:

<sup>31</sup> Արուսեակ Այնթապլյանի հետ, Թերթից կտրտուկներ, Անթվակիր, հայերեն, տպագիր 13 թերթ, 7 փաթեթ, Գ.ԱԹ, Արուսյակ Այնթապլյանի ֆոնդ N 66:

<sup>32</sup> Բենեդու Ջոն Ֆիցջերալդ (1917-1963), ԱՄՆ-ի պետական գործիչ: 35-րդ պրեզիդենտը

Ա.Այնթապլյանը նույն թվականին հեղինակեց հանգուցյալ պրեզիդենտի հիշատակին նվիրված երաժշտական ստեղծագործություն: «Մինչև հոգու խորքն իրեն համակած զգացմունքը կոմպոզիտորին հիշեցրեց այն խորունկ ցավը, որը նա զգացել է իր եղբոր կորստից հետո, որը մի քանի տարի առաջ զոհվել էր դժբախտ պատահարից՝ ավտովթարից»<sup>33</sup>:

«Հանրօգուտ Շինութեանց նախարար Պր. Շէյխ Փիեռ Ճեմայելի հովանաւորութեամբ եւ բարձրաստիճան դէմքերու եւ ծնողներու ներկայութեամբ, լեցուն սրահի մը առջեւ ելոյթ ունեցան Կիրակի 7 Մարտ ժամը 6-ին Օր. Ա.Այնթապլեանի աշակերտուհիները:

Երկու մասերէ բաղկացած յայտագիրը ճոխ էր և այլազան: Յայտագրի մէկ կարեւոր մասը կազմուած էր Օր. Այնթապլեանի յօրինումներէն, որոնց մէջ կարեւորագոյնը՝ «Տալլասի ողբերգութիւնը» նագուեցաւ Օր. Արտեմիս Տիլէնեանի կողմէ:

Այս հեղինակութիւնը Օր. Այնթապլեան յօրինած է 1963ին, նախագահ Քենեդիի սպանութեան տխուր առիթով:

Ամերիկեան դեսպանը, անձնապէս չկրնալով ներկայ ըլլալ, զինք կը ներկայացնէր Ամերիկեան դեսպանատան Եու Էս Այ Էսի Ընդհանուր Տնօրէն Չեսթըր Օփալ: Նմանապէս ամերիկեան դեսպանատան բարձրաստիճան անձնաւորութիւններէն ներկայ էին ընդհ. հիւպատոս Տէր եւ Տիկ. Ուէզլի Ճորկէնսընը և մամլոյ կցորդ Տէյվիտ Ռ-սպէրց եւ իր տիկինը:

Գնահատելի էր Օր. Այնթապլեանի կատարած աշխատանքը ամէն տեսակէտէ: Հիանալիօրէն կազմակերպուած այս ձեռնարկը վերջ գտաւ

(1961-63): Ծնվել է ծագումով իռլանդացի կաթոլիկ միլիոնատերերի ընտանիքում: 1941-45թթ. ծառայել է ԱՄՆ ռազմածովային ուժերում: 1947-53-ին՝ ներկայացուցիչների պալատի անդամ դեմոկրատական կուսակցությունից, 1953-61-ին՝ սենատոր: Որպես պրեզիդենտ հռչակել է «նոր բնագծերի» ծրագիր, որի խնդիրն էր միջազգային ասպարեզում ուժերի հարաբերակցության փոփոխման պայմաններում պահպանել ԱՄՆ-ի դիրքերն ու ամրապնդել դրանք: Ներքին քաղաքականության բնագավառում իրականացրել է տնտեսությունը խթանելու և նեգրերի ռասայական խտրականությունը մեղմող մի շարք միջոցառումներ: Արտաքին քաղաքականության մեջ հետևելով «ուժի դիրքերի» կուրսին՝ առաջ է քաշել «ճկուն հակազդման» դոկտրինան: Քենեդու գործունեությունն առաջ բերեց ԱՄՆ-ի ծայրահեղ աջ ուժերի դժգոհությունը, որոնց ձեռքով էլ նա դավադրաբար սպանվեց Դալասում (Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 12, Երևան, 1986, էջ 437-438):

<sup>33</sup> «La Tragédie de Dallas», 1963, նվիրված է Քենեդիի հիշատակին, կից՝ թերի հատվածներ և համառոտագրություն, ձեռագիր 9 թերթ, 3 թերթ, ընդ.՝ 12 թերթ, 2 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապլյանի ֆոնդ N 10:

մեծ խանդավառությամբ նուագող աշակերտուհիներուն միջև մասնավոր գնահատանքի արժանի էին օրիորդներ Զլեր Միսքը, Արփինէ Իպրանոսեանը, Սոնա Տուգճեանը, Արտեմիա Տէլինեանը, Սոնա Քիրքճեանը, Նորա Քիրքճեանը եւ բոլոր միւս նուագողները»<sup>34</sup>:

Արտեմիա Գելենյանի կատարմամբ «Գալասի ողբերգությունը» առաջին անգամ հնչեց 1964 թվականի հունիսի 14-ին<sup>35</sup>:

«Տեղական եւ հայկական մամուլը ժամանակին գնահատանքով արտայայտուեցաւ հայազգի արուեստագիտուհի Արուսեակ Այնթապլեանի աշակերտներուն տուած տարեկան դաշնակի ունկնդրութեան մասին, որ տեղի ունեցաւ Կիրակի 14 յունիսի 1964ին Պէյրութի Ամերիկեան համալսարանի Էսսէմպլի Հոլի մէջ:

Ն.Վ.Արտաքին Գործոց նախարար Ֆուատ Ամնունի բարձր հովանաւորութեան տակ կազմակերպուած այս ընտրութեան ներկայ եղան Պէյրութի ընտրանին, որոնց կարգին ներկայ էր Պէյրութի Ամերիկեան դեսպանատան բարձրաստիճան անձնաւորութիւններէն, ԵՈՒԶԻՍԻ տնօրէն Պր. Ուիլեամ Օմըն:

Գործադրուած կոկիկ յայտագրին մէջ յատկանշական էր «Տալլասի Ողբերգութիւնը» Օր. Այնթապլեանի վերջնագոյն յօրինումը որ նուիրուած էր հանգուցեալ Նախագահ Ճոն Քենետիի յիշատակին: Մեծ յուզումով է որ ներկաները ունկնդրեցին այս նուագը որ ներկաներուն ապրեցուց հանգուցեալ նախագահին մահուած կակիծը: Հայազգի Օր. Այնթապլեան, որ մի քանի տարի առաջ դժբախտութիւնը ունեցած էր արկածով կորսնցնելու իր միակ եւ սիրելի եղբայրը, կարողացած էր երաժշտութեամբ մեկնաբանել այս մեծ կորուստին վեհութիւնն ու ծանրութիւնը, որովհետեւ ունէր կոտտացող քրոջ մը սիրտը կուրծքին տակ:

Եւ ահաւասիկ դարձեալ արուեստագիտուհիին նախաձեռնութեամբ է որ այս յօրինուածքը ժապաւէնի առնուելով պիտի դրկուի Միացեալ Նահանգներ ուր Պոսթըն Չարլզ գետի ափին կառուցուելիք Քենըտիի անուան մատենադարան յիշատակարանին մէջ պիտի գետեղուի որպէս Լիբանանցի և հայ արուեստագիտուհիի մը նուէրը:

Այս շաբթու, օր. Արուսեակ Այնթապլեան, «Տալլասի Ողբերգութիւնը» հեղինակութեան ժապաւէնը ներկայացուց Լիբանանի Ամերիկեան դեսպան Արմին Հ.Մէլլըին:

<sup>34</sup> Օր. Արուսեակ Այնթապլեանի աշակերտուհիներուն դաշնակի ռեսիթալը, Թերթից կտրտուկներ, Անթվակիր, հայերեն, տպագիր 13 թերթ, 7 փաթեթ, Գ.Ա.Թ. Արուսյակ Այնթապլեանի ֆոնդ N 66:

<sup>35</sup> Տե՛ս Ծրագիր, 1964թ., 14 հունիսի, Գ.Ա.Թ. Ա.Այնթապլեանի ֆոնդ N 55:



Օր. Այնթապլեան նմանապես տուավ անձնական նամակ մը որ պիտի փոխանցուի Տիկին Ժազլին Քենըտիի»<sup>36</sup>:

ԱՄՆ դեսպանի աշխատասենյակում Ա.Այնթապլյանն ԱՄՆ դեսպան Արմին Մեյերին է փոխանցում «Դալասի ողբերգության» երկու ձայնագրությունները: Առաջին ձայնագրությունը, որն ուղեկցում էր ստեղծագործությանը վերաբերող հեղինակի նամակը, նախատեսված էր նենգորեն սպանված ԱՄՆ պրեզիդենտի այրու համար, իսկ երկրորդը՝ ուղղված Քենեդու մեմորիալ գրադարանին, որն ամերիկյան պետության հանգուցյալ առաջնորդի հիշատակին նվիրված ազգային հուշարձան է:

Շուտով Ա.Այնթապլյանն «Ամերիկեան դեսպանին ձեռամբ կը ստանայ «Քենըտի» մետալը, իսկ Տիկին Ժազլին Քենըտիի կողմէ շնորհակալութեան սրտագին խօսք»<sup>37</sup>:

«Քենեդի» հուշամեդալն Ա.Այնթապլյանը ստացել է Լիբանանում, ԱՄՆ-ի դեսպանատան տեղեկատվական ծառայության տնօրեն Վիլիամ Օմանից իր դեսպան Արմին Մեյերի անունից «Դալասի ողբերգության» համար:

Ծրագրային «Դալասի ողբերգությունը» բաղկացած է 7 մասից<sup>38</sup>՝

1. Allegro moderato

«Պրեզիդենտի և տիկին Ջոն Քենեդու ժամանումը Դալասի օդանավակայան: Ամբոխի ուրախ ծափողջույնները: Վարդերի տարափ: Աշխույժ և զվարթ նախերգանքում արտահայտվում է նրանց համար նախատեսված այս խանդավառ ընդունելության ամբողջ ջերմությունը»:



<sup>36</sup> Արուսեակ Այնթապլեանի գնահատելի ելույթը, Թերթից կտրտուկներ, Անթվակիր, հայերեն, տպագիր 13 թերթ, 7 փաթեթ, Գ-ԱԹ, Արուսյակ Այնթապլյանի ֆոնդ N 66:

<sup>37</sup> Արուսեակ Այնթապլեանի հետ, Թերթից կտրտուկներ, Անթվակիր, հայերեն, տպագիր 13 թերթ, 7 փաթեթ, Գ-ԱԹ, Արուսյակ Այնթապլյանի ֆոնդ N 66:

<sup>38</sup> Տե՛ս Ծրագիր, 1964թ., 14 հունիսի, ֆրանս., տպ. 12 թերթ, 1 փաթեթ, Գ-ԱԹ, Ա.Այնթապլյանի ֆոնդ N 55:

2. Andante triste

«Դալասի նահանգապետի հրավերով Պրեզիդենտը և տիկին Քենեդին իրենց տեղն են զբաղեցնում բաց մեքենայում: Վերջինս մտնում է «Main Street»: Հանկարծակի երեք չոր կրակոց: Կրակել են Պրեզիդենտի վրա. նա ընկնում է մեքենայի նստարանին: Տիկին Քենեդու ճիչը. «Oh, ո՛չ: Նրանք սպանել են իմ ամուսնուն»: Խուճապ, սարսափ: Ա.Այնթապյանը ճշգրտորեն վերարտադրում է տագնապահար ընդարմացման պահերը»:

2

### 3. Allegro appassionato

«Պրեզիդենտական մեքենան մեծ արագությամբ սլանում է դեպի հիվանդանոց: Այս հատվածի ռիթմը սրընթաց է: Հեղինակը փորձում է թարգմանել տիկին Քենեդու մտքերի ու զգացմունքների խռովությունն այն դժբախտության առջև, որն իրեն կհասնի»:

3

The musical score for 'Allegro appassionato' is written in 2/4 time with a key signature of two flats (B-flat and E-flat). It consists of three systems of staves. The first system shows the beginning with a piano (p) dynamic and a crescendo (cresc.) leading to a forte (f) dynamic. The second system features a decrescendo (dim.) and a rallentando (rall.) section, followed by a piano (p) dynamic and a crescendo (cresc.). The third system continues with a piano (p) dynamic and a crescendo (cresc.). The score includes various musical notations such as slurs, accents, and dynamic markings.

### 4. Adagio triste

«Հիվանդանոցում: Տիկին Քենեդին անհանգստացած արտասվում է: Շուտով հայտնի վիրաբույժները պետք է խոստովանեն հիվանդին փրկելու իրենց անզորությունը. Ջոն Քենեդին՝ ԱՄՆ 35-րդ պրեզիդենտը, մահացել է:

Այս մասն ավարտվում է ողբերգական ակորդներով, որոնք առաջացնում են մահվան առեղծվածի մեջ բաժանումից ծնված անվերջանալի տխրություն»:

4

The musical score for 'Adagio triste' is written in 4/4 time with a key signature of two flats (B-flat and E-flat). It consists of two systems of staves. The first system shows a piano (p) dynamic and a piano fortissimo (pp) dynamic. The second system features a piano (p) dynamic and a piano (p) dynamic. The score includes various musical notations such as slurs, accents, and dynamic markings.

5. Andante doloroso

«Դագաղի կափարիչը նոր է փակվել: Տանջված Ժակլին Քենեդին միանում է արդեն ձևավորված շքախմբին և իր հավատարիմ ձեռքն է դնում բրոնզե դագաղին: Յավի արցունքներ: Հետո վերադարձ Վաշինգտոն, մեկնում Սպիտակ տնից դեպի Տաճար: Այս ընթացքում հստակորեն լսվում է զանգակների դողանջը»:

5

ANDANTE DOLOROSO



6. Maestoso triste

«Տիկին Քենեդին ողբում է իր կործանված երջանկությունը, բայց անասան է նրա հավատը. նրա խնդրանքով թաղման արարողության ժամանակ կերգվի Շուբերտի «Ավե Մարիան»: Կոմպոզիտորը վերարտադրում է այն այստեղ»:



7. Marche funèbre de Chopin

«Այժմ թափորը Շոպենի Marche funèbre-ի ողբերգական շեշտերի ուղեկցությամբ շարժվում է դեպի գերեզմանատուն: Ժակլինի արցունքները չեն նվազում: Հեռվում դողանջին են միանում այլ զանգակներ՝ հարգանքի վերջին տուրքը մատուցելով մի մարդու՝ Չոն Քենեդուն, ԱՄՆ 35-րդ Պրեզիդենտին, ով այնքան կարճ ժամանակահատվածում այնպիսի երկար կարիերա արեց և ում երկրային ճանապարհորդությունն այժմ ավարտվում է»:

7



«Իր հուզիչ ստեղծագործությունն Ա.Այնթապյանն ավարտում է հանդիսավոր և եռանդուն ակորդներով անմահացած հորինվածքով՝ Շոպենի Marche funèbre-ով: Այս քայլերգում, նրա զանգակներում, մենք բացահայտում ենք հավերժությամբ ծանրացած սինվոլիզմ»:

## 2.2. ՊԱՊԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ<sup>39</sup>

### Հանդիսավոր ստեղծագործություն՝ նվիրված Նորին Սրբություն Պողոս VI-ին

*«Այն ժամանակներում, երբ բոլոր ջանքերն ուղղված էին Եկեղեցիների միավորման ուղիները զարգացնելուն, Ա.Այնթապյանը հուզված է այն ջերմ և ինքնաբուխ ընդունելությունից, որով Բեյրութում դեկտեմբերի 4-ին<sup>40</sup> Լիբանանի ժողովուրդը և կառավարությունը դիմավորել են Նորին Սրբություն Պողոս VI Պապին, ուր Պապը ժամանեց Հնդկաստանից՝ Բոմբեյի քրիստոնեական վեհաժողովին մասնակցելուց հետո»<sup>41</sup>:*

1965թ. հունիսի 13-ին, կիրակի, Ա.Այնթապյանի աշակերտների տարեկան՝ ամենամյա ունկնդրության ժամանակ, համերգի առաջին բաժնի վերջում Արփինե Իփրանոսյանի կատարմամբ<sup>42</sup> առաջին անգամ հնչեց «Պապի օրհնությունը Լիբանանում» ստեղծագործությունը՝ նվիրված Հռոմի 262-րդ՝ Նորին Սրբություն Պողոս VI Պապին<sup>43</sup>: Ստեղծագործությունը Արփինե Իփրանոսյանի կատարմամբ հնչեց նաև մեկ տարի անց՝ 1966թ. հունիսի 5-ին կայացած համերգի ժամանակ<sup>44</sup>:

«Արուսեակ Այնթապյան, Հայ Առաքելական Եկեղեցույց հաւատացեալ զաւակ, խիստ տպաւորուած Սրբազան Պապի Լիբանանի ուղղված Հայրական Պատգամէն, կը յօրինէ իր «Պապական Օրհնու-

<sup>39</sup> «Bénédiction Papale Au Liban», Նվիրված է Պողոս VI Պապին, 1965, կից՝ ստեղծագործության համառոտագրություն, ձեռագիր 12 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 1:

<sup>40</sup> Պողոս VI Պապը Լիբանան է այցելել 1964 թվականի դեկտեմբերի 4-ին:

<sup>41</sup> «Bénédiction Papale Au Liban», Նվիրված է Պողոս VI Պապին, 1965, կից՝ ստեղծագործության համառոտագրություն, ձեռագիր 12 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 1: Ֆրանսերենից թարգմանությունը՝ Մարգարիտա Քամայանի:

<sup>42</sup> Տե՛ս Ծրագիր, 1965թ., 13 հունիսի, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 56:

<sup>43</sup> Պողոս VI (Paulus, աշխարհիկ անունը՝ Ջովանի Բատիստա Մոնտինի, 1897-1978), Հռոմի պապ 1963-ից: Իրականացրել է մի շարք չափավոր բարեփոխություններ, ընդլայնել կարդինալների կոլեգիան, վերակառուցել կուրիան, փոփոխություն մտցրել պապի ընտրության կանոնադրության մեջ: «Պոպուլարում պրոգրեսիո» էնցիկլիկայով (1967) հռչակել է պատմական նոր պայմաններին հարմարեցված կաթոլիկության սոցիալական ուսմունքը: Ի տարբերություն նախորդների, Պողոս VI-ը այցելել է բազմաթիվ երկրներ, հանդես եկել խաղաղության և եկեղեցիների մերձեցման պաշտպանությամբ (Հայկական սովետական հանրազիտարան, հատոր 9, Երևան, 1983, էջ 368):

<sup>44</sup> Տե՛ս Ծրագիր, 1966թ., 5 հունիսի, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 57:

թին Լիբանանի»ն, ձօնուած Նորին Սրբազնութիւն Պօղոս Զ. Պապին: Երբ գայն ժապաւէնի վրայ կ'ուղարկէ Վատիկան, որպէս գնահատանք կը ստանայ ոսկեղէն եւ մարգարտեայ հատիկներով գեղեցիկ վարդարան մը: Ապա կը հրաւիրուի Վատիկան, 1965-ին, Սբ. Պապին ձեռամբ իսկ ստանալու համար ոսկեղէն մետալ մը»<sup>45</sup>:

«Bénédiction Papale au Liban»-ի ձայնագրութիւնն Ա.Այնթապլյանը նվիրեց Պապին:

«Նորին Սրբութիւն Պօղոս VI պապը 1966թ. հոկտեմբերի 4-ին ընդունում է Ա.Այնթապլյանին: Պապը շնորհակալութիւն է հայտնում իրեն նվիրված ստեղծագործութեան համար («Պապի օրհնութիւնը Լիբանանում»), օրհնում է Ա.Այնթապլյանին և նրան հանձնում մեղալորի վրա դրոշմված են Սուրբ Պօղոսը և Սուրբ Պետրոսը և պապական գորքերը: Պապը նախկինում Ա.Այնթապլյանին էր ընծայել ոսկե և սաղափե համրիչ (վարդարան):

Սուրբ Հոր նվերը և օրհնութիւնը վկայում են երիտասարդ լիբանանուհու տաղանդի մասին»<sup>46</sup>:

«Le Soir»-ը 1966-ի նոյեմբերի 11-ի համարում գրեց. «Մեծ գոհունակութեամբ ենք թվարկում նրա ստեղծագործութիւններից մի քանիսը՝ «Ռապսոդիա N 1», Ռապսոդիա N 2», «Հրաժեշտ», «Միսիթարութիւն», «Դալասի ողբերգութիւն» և «Պապի օրհնութիւնը Լիբանանում»: Բայց նրա կյանքի ամենամեծ հաջողութիւնը Նորին Սրբութիւն Պօղոս VI Պապի մոտ ընդունելութիւնն էր: Արցունքներն աչքերին, Ա.Այնթապլյանը պատմում է այդ իրողութեան մասին: Հրաշք է, որ նա չի կորցնում հավասարակշռութիւնը, երբ հայտնվում է Պապը և խնդրում է նրան մոտենալ Սուրբ Պօղոսի գահի ժառանգորդին: Դա նրա գոյութեան նպատակն էր...

Այնթապլյանը ստանում է ոսկե մեղալոր Սուրբ Հոր ձեռքերից: Այս հանդիպումը դարձավ Այնթապլյանի ստեղծագործական թագադրումը: Նրա շնորհիվ ամբողջ երկիրն էր հպարտ, և բոլորն էին ստացել Պապի օրհնութիւնը»<sup>47</sup>:

«Թեև հեղինակն ուղղափառ է, սակայն նա երաժշտութեան միջոցով

<sup>45</sup> Արուսեակ Այնթապլեանի հետ, Թերթից կտրտուկներ, Անթվակիր, հայերեն, տպագիր 13 թերթ, 7 փաթեթ, Գ.Ա.Թ, Արուսյակ Այնթապլյանի ֆոնդ N 66:

<sup>46</sup> Թերթից կտրտուկներ, Անթվակիր, հայերեն, տպագիր 13 թերթ, 7 փաթեթ, Գ.Ա.Թ, Արուսյակ Այնթապլյանի ֆոնդ N 66:

<sup>47</sup> «Le Soir», 11.11.1966.



ուրախությամբ արտահայտեց ողջ ազգության խանդավառությունն այս ականավոր անհատականության՝ Նորին Սրբություն Պողոս VI Պապի հանդեպ, անհատականություն, որը վեր է ծեսերից և եկեղեցիներից, քանի որ առաջնորդվում է «ամեն ինչ բոլորի համար» սկզբունքով:

Լիբանանի կոմպոզիտորի ստեղծագործությունը հարգանքի տուրք է Պապին, այն ժամանակ, երբ բոլոր քրիստոնյաների սրտից բխում է Քրիստոսի աղոթքի շուտափույթ իրականացման մաղթանքը, որ «բոլորը լինեն Սեկ»<sup>48</sup>:

Այս պատմական ստեղծագործությունը, որն ունի ծրագիր, բաղկացած է 12 մասից<sup>49</sup>:

1. Allegro moderato

«Դեպի օդանավակայան շտապող ամբոխի աղմուկին են խառնվում ոստիկանների սուլոցները, մեքենաների ազդանշանները: Անհամբեր սպասում: Շուտով հարգանք է մատուցվում Լիբանանի Հանրապետության նախագահին՝ պարոն Շառլ Հելուին և նախագահական շքախմբին: Կարճ ժամանակ անց հայտնվում է Պողոս VI-ը՝ հատուկ հյուրը, որին սպասում են բոլորը. սպիտակ ինքնաթիռը տեղավորվում է թռիչքուղու վրա»:



<sup>48</sup> «Bénédiction Papale Au Liban», Նվիրված է Պողոս VI Պապին, 1965, կից՝ ստեղծագործության համառոտագրություն, ձեռագիր 12 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 1: Ֆրանսերենից թարգմանությունը՝ Մարգարիտա Քամայանի:

<sup>49</sup> Տե՛ս Ծրագիր, 1965թ., 13 հունիսի, ֆրանս., տպ. 12 թերթ, 1 փաթեթ, 13 հունիսի, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 56: Ֆրանսերենից թարգմանությունը՝ Մարգարիտա Քամայանի:



2. Andante cantabile

«Հայտնվում է Սուրբ Հայրը: Նրա առաջին ժեստը Լիբանանի օրհնությունն է: Օրհնություն, ուժգին զգացմունքների պահ»:


9



3. Presto

«Ամբոխի բացականչությունները պտռվում են բոլոր կողմերից: Հեղինակը համազգային ուրախությունը հաղորդում է հաղթական շարժման միջոցով»:

10





4. Andante religioso et doloroso

««Հանգրվանելով մեզ մոտ՝ Չերդ Սրբությունը դրսևորում է ար-  
դարության հայրական ըմբռնումը»,- ասում է նախագահ Հելուն Պա-  
պին: Եվ Սուրբ Հայրը պատասխանում է. «Եկեղեցին գնահատում և  
քաջալերում է Լիբանանի որդիների բոլոր ջանքերը»: Հուզիչ գրույց:

Ա.Այնթապյանը խորապես հուզված է Պապի ներկայությունից,  
ուն համար Լիբանանը «առանձնահատուկ թանկ է»»:


11



5. Allegro moderato

«Թեթև և զվարթ վալս, որի նպատակն է թարգմանել ժողովրդի հուզ-  
մունքը, լարված սպասումը: Հաղթական դիթմն ուղեկցում է Սուրբ հոր  
քայլերը դեպի օդանավակայանի պատշգամբ»:





6. Lento melanconico et religioso

«Հավաքված անբոխին օրհնելու համար Սուրբ Հայրը պատշգամ-  
բից բարձրացնում է ձեռքը: Հետո նա 3 անգամ ուժգին արտաբերում է.  
«Կեցցե՛ Լիբանանը». բառեր, որոնք հատակորեն տարանջատվում են  
երաժշտական տեքստից: Հատվածը մեղամաղձոտ է և հատկապես  
կրոնական»:

13



40



7. Presto

«Նորից՝ ժողովրդի խանդավառությունը և ողջույնի բացականությունները»:

14 8. Andante religioso

«Պողոս VI-ը իր վերջին խոսքերն է հղում հավաքված ժողովրդին. «Ես Ձեզ եմ բողնում իմ սիրտը»: Նրա խորաթափանց հայացքը վերջին անգամ է հաղորդում աջակցություն իր կարճ և գրավիչ օրհնությամբ»:

15

Handwritten musical score for page 15. The score consists of two systems of staves. The first system has a treble staff and a bass staff. The key signature is two flats (B-flat and E-flat). The tempo marking is "ANDANTE RELIGIOSO". The first system includes dynamic markings such as *pp* and *p*. The second system continues the piece with similar notation and dynamics.

### 9. Moderato

«Վալսի նրբագեղ հնչյուններն ուղեկցում են Պապին մինչև ինքնաթիռ: Լսվում է շարժիչի ձայնը և օդանավակայանի պատշգամբներից լսվող՝ ժողովրդի ցնցող աշխուժությունը»:

16

Handwritten musical score for page 16. The score consists of three systems of staves. The key signature is two flats (B-flat and E-flat). The tempo marking is "MODERATO (Valse d'inspiration populaire)". The first system includes the text "53 gai" and dynamic markings such as *p*. The second and third systems continue the piece with similar notation and dynamics.

42

10. Andante triste

«Շարժասանդուղքից սպիտակազգեստ մարդն օրհնում է վերջին անգամ: Հրաժեշտի խոսքերի փոխանակում: «Մենք ի սրտե շնորհակալություն ենք հայտնում մեծարգո պարոն Շ.Հելուին՝ Հանրապետության Նախագահին, որին երկար ժամանակ է ճանաչում ենք...»»:

17

11. Presto

«Յուրաքանչյուր ոք Սուրբ Հորը տեսնելու ուրախությունն է ապրում: Ա.Այնթապյանը ներկայացնում է գվարթ վալս, որն ավարտվում է տրիումֆով»:



18

gliss

PRESTO (Valse Triomphante)

mf

mf

## 12. Prestissimo

«Հեղինակը շարունակում է ժողովրդականություն վայելող վալսի մեղեդին՝ ուրախ վարիացիաներով: Ամբոխն աստիճանաբար ցրվում է՝ պահպանելով Պապի հրահանգը՝ «Ես մաղթում եմ, որ Լիբանանը շարունակի քաղաքակրթության իր առաքելությունը և հավատարմությունը կրոնին»:

Ունկնդիրը զգում է խանդավառ և ուրախ ամբոխի վերադարձը: Ստեղծագործությունն ավարտվում է հաղթական ակորդների պայթյունով»:

PRESTISSIMO

555

pp



### 2.3. ՉՈՆ ԼԻԲԱՆԱՆԻՆՆ<sup>50</sup>

#### Հանդիսավոր ստեղծագործություն՝ նվիրված հանրապետության նախագահ Նորին գերազանցություն պարոն Շառլ Հելուին<sup>51</sup>

«Ա.Այնթապլյանի ներշնչանքի նոր աղբյուրը Լիբանանի հանդեպ տաժած հպարտության և շնորհակալության զգացումն է, երկիր, որն ընդունել է իրեն և որի քաղաքացիությունը նա կրում է: Լիբանոսը Լիբանանի բնանկարների պարզության և գեղատեսիլ հմայքի վկան՝ նա երգեցնում է ձայները, որոնք արձագանքվում են բնության վեհաշքության մեջ և նմանվում են ժայռից ցայտող սալիտակ և ճղփացող փրփուրների, հաղթական ճիչով երկինք սլացող ուրախ թռչունին: «Hymne au Liban»-ը փառաբանում է Լիբանանը՝ հմայքի և գեղեցկության երկիրը, նախնիների հոգևոր ժառանգությունը հարգող երկիրը,

<sup>50</sup> «Hymne au Liban», Միմֆոնիա, 1966, կից՝ ստեղծագործության համառոտագրություն, ձեռագիր 11 թերթ, ԳԱԹ, Ա.Այնթապլյանի ֆոնդ N 8:

<sup>51</sup> **Շառլ Հելու** (1912-2001) - Լիբանանի Հանրապետության պրեզիդենտ 1964-1970թթ.: Հելուն եղել է Բեյրութում յույս տեսնող ֆրանսալեզու «Լ'Օրիան դը ժուր» օրաթերթի խմբագիրը, ապա՝ պառլամենտի անդամ, «Իսկ 1954-1955թթ. զբաղեցրել էր Լիբանանի արդարադատության նախարարի պաշտոնը: Իր պրեզիդենտության շրջանում՝ 1964-1970թթ., ներքին և արտաքին քաղաքականության բնագավառներում ընդհանուր առմամբ փորձում էր հավատարիմ մնալ իր նախորդի քաղաքականությանը: Լիբանանը 1965 թ. գարնանը խզեց դիվանագիտական հարաբերությունները Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության հետ, վերջինիս կողմից Իսրայելը ճանաչելու և նրա հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու կապակցությամբ: 1965 թ. ամռանը կառավարությունը մերժեց ամերիկյան կապիտալի համար արտոնյալ պայմաններ ստեղծելու համաձայնագիրը և այլն: Նրա կարևոր արժանիքներից մեկը պետք է համարել մաս այն, որ նրան հաջողվեց Լիբանանը գերծ պահել 1967թ. արաբա-իսրայելական պատերազմին մասնակցելուց: 1965թ. առաջադիմական ուժերի ջանքերով ստեղծվեց նոր Ազգային ճակատ, որի մեջ մտան Առաջադիմական-սոցիալիստական կուսակցությունը, Արաբական ազգայնականների շարժումը, կոմունիստական կուսակցությունը, բասսականները, Բանվորական ազատագրության ճակատը, Հնչակյան սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, ինչպես նաև քաղաքական ու հասարակական երևելի գործիչներ: Այս շրջանում բավականին ակտիվացավ բանվորական շարժումը, որը հասավ շոշափելի արդյունքների՝ բարելավվեցին բանվորների աշխատանքային պայմանները, բարձրացվեց աշխատավարձը, աշխատողների համար ստեղծվեցին ժողովրդական տներ և այլն (**Հովհաննիսյան Նիկոլայ**, Արաբական երկրների պատմություն, հատոր III, Անկախության և ինքնիշխանության դարաշրջան. 1918-2005թթ., Երևան, 2006, էջ 633-634): Շառլ Հելուն 1970-ին օրինականացրել է Լիբանանի կոմունիստական կուսակցությունը:

երիտասարդ, դինամիկ, խոստումնալից ժողովրդին: «Hymne au Liban»-ը նվիրված է Նորին գերագանցություն, Լիբանանի Հանրապետության նախագահ պարոն Շառլ Հելուին, որին հեղինակը մաղթում է բարգավաճում՝ իր ողջ ժողովրդի հետ մեկտեղ»<sup>52</sup>:

«Արուսեակ Այնթապլեան է նաեւ հաւատարիմ քաղաքացին Լիբանանեան մեր հիւրասէր հայրենիքին, որուն բնութեան հրաշալիքներուն, ժողովուրդին ազնուութեան, աւանդութիւններուն, յոյսերուն ու երազներուն երգն է որ կ'երգէ իր «Ձօն Լիբանանին» սեմֆօնիք յօրինումով, նուիրում Նորին Վսեմութիւն Նախագահ Շարլ Հելուի: Այս գործը հանրութեան կը հրամցուի 1966-ի Յունիսին, եւ մեծապէս կը գնահատուի Վսեմափայլ Նախագահէն եւ կառավարական ղեմքերուն կողմէ, որոնք արուեստագիտուիին պիտի պատուէին արժանի շքանշանով անցեալ Յունիսին, սակայն այդ յետաձգուեցաւ քաղաքական տիրող կացութեան պատճառաւ»<sup>53</sup>:

«Hymne au Liban»-ն առաջին անգամ հնչեց Ա.Այնթապլեանի սաների ամենամյա համերգի ընթացքում՝ 1966-ի հունիսի 5-ին, կիրակի, Արփինէ Իփրանոսյանի կատարմամբ և եզրափակեց համերգի առաջին բաժինը<sup>54</sup>:

«Այս տարի եւս, 5 Յունիսին՝ Էսեմալի Հոլի մէջ, տօնական մթնոլորտի մը ներքեւ տեղի ունեցաւ Արուսեակ Այնթապլեանի՝ Պեզանտներու Սենթ Անն հաստատութեան դաշնակի փրոֆեսորին սեփական աշակերտներուն դաշնակի ունկնդրութիւնը:

Գրուած Կրթական նախարար Պր. Ֆ. Պութրոսի բարձր հովանաւորութեան տակ, որ կամքէ անկախ պատճառներով բացակայելով, որպէս ներկայացուցիչ ղրկած էր Տօքթ. Թուֆիք Սապապաղը, որ կրթական նախարարութեան մօտ տնօրէն է ուսուցիչներու կազմութեան եւ մանկավարժական պրպտումներու բաժնին: Սրահը լեցուն էր ծայրէ ի ծայր:

Մքանչելի հագուածքներով, որոնք իրենց գոյներով կը ներկայացնէին լիբանանեան դրոշը, աշակերտ-աշակերտուիները ելոյթ ունեցան իրենց ծնողներուն և բարեկամներուն առջեւ: Եղածը ոչ միայն երա-

<sup>52</sup> «Hymne au Liban», Միմֆոնիա, 1966, կից՝ ստեղծագործության համառոտագրություն, ձեռագիր 11 թերթ, Գ-ԱԹ, Ա.Այնթապլեանի ֆոնդ N 8:

<sup>53</sup> Արուսեակ Այնթապլեանի հետ, Թերթից կտրտուկներ, Անթվակիր, հայերեն, տպագիր 13 թերթ, 7 փաթեթ, Գ-ԱԹ, Արուսյակ Այնթապլեանի ֆոնդ N 66:

<sup>54</sup> Տե՛ս Ծրագիր, 1966թ., 5 հունիսի, ֆրանս., տպ., 16 թերթ, 1 փաթեթ, Գ-ԱԹ, Ա.Այնթապլեանի ֆոնդ N 57:

ժըշտական պարզ ունկնդրութիւն մըն էր, այլ ժպիտի փառատօն մը: Հանդէսին բացումը կատարուեցաւ յոտնկայս Լիբանանեան քայլերգով, որ մեծ ճարտարութեամբ նուագուեցաւ Բեռլ Միսքի և Արփիմէ Իբրանոսեանի կողմէ:

Ելոյթ ունեցան՝ Գլեր Մասաապ, Ազիզ Ռըպէյզ, Հինտ Մաալուֆ, Աննի Պոյաճեան, Առլէք Շելալա, Նորա Կէօչերեան, Մէյ Համուի, Արտէմիս Տիլէնեան, Բեռլ Միսք, Արփիմէ Իբրանոսեան, Գարլա Թայյար, Մարի Ապուշաար, Միշըլին Շելալա, Խալիլ Ռիզք, Նիքոլ Թապէթ, Նատիա Սապէթ, Սոնիա Քիրքճեան, Շարպէլ Իրանի, Շանթալ Պօղոսեան, Նատա Մաալուֆ, Անուշ Եկաւեան, Ալեքսանդր Ապուշաար, Քրիսթիան Ապիժաուտէ, Ժազլին Մասուտ, Նիքոլ Ժետէոն և Գլեր Մասաապ:

Բոլորն ալ յաջող, բոլորն ալ համակրելի իրենց մեկնաբանութեամբ, կարելի է միայն շնորհաւորել Օր. Այնթապլեանը այս տարուան իր հարուստ հունձքին համար:

Ամէն մէկ ունկնդրութեան, Օր. Այնթապլեան ունի նաեւ իր նորութիւնը լիբանանեան հանրութեան: Ինչպէս նախորդ հանդէսներուն լսած էինք «Տալլասի Ողբերգութիւնը», որ կը վերաբերէր նախագահ Քէնրտիի ողբերգական սպանութեան և «Պապական օրհնութիւն»ը, որ կը վերաբերէր Պօղոս Զ Ս. Պապին Լիբանանէն անցքին, այս տարի եւս Օր. Այնթապլեան ներկայացուց «Քայլերգ Լիբանանի» յօրինումը որ յղացուած էր իր կողմէ: Այնթապլեան այս կտորին ներշնչումը գտած էր գեղեցիկ և ասպնջական Լիբանանէն, որ եղած էր իր գերդաստանին և իր հայրենակիցներուն սիրելի ապաստանարանը: Ուրախութեամբ կը նշենք որ Օր. Այնթապլեանի այս ժեստը պատիւ կը բերէ իր հայրենակիցներուն: Վստահ ենք որ Ն.Վ.Նախագահ Շարլ Հելու լիտի գնահատէ իր անձին նուիրուած այս տեղծագործութիւնը, որ կը բխի իր հայրենիքին հանդէպ երախտագէտ սրտէ մը:

Միւս կողմէ կրնանք վստահօրէն ըսել, թէ Օր. Արփիմէ Իբրանոսեան, որ կատարեց այս ստեղծագործութեան մեկնաբանումը արդէն կազմաւորուած և տաղանդաւոր դաշնակահարուի մըն է: Կը գնահատենք վաստակաւոր ուսուցչուի Օր. Այնթապլեանին աշխատանքը և խանդավառութեամբ կը շայտնենք թէ շատ պիտի չզարմանանք, եթէ օր մը Լիբանանի երկնակամարին վրայ փայլին իր աշակերտ-աշակերտուհիները որպէս նշանաւոր դաշնակահարուիներ:

Մենք տեղ և ժամանակ չունինք իւրաքանչիւր աշակերտի մասին առանձին առանձին արտայայտելու, սակայն անգամ մը եւս կուգանք մեր հիացումը յայտնել կատարուած աշխատանքին: Քրիստոնէական յուզումով և ապրումով մտիկ ըրինք նաեւ «Պապական օրհնութիւն»ը, որ մաս կը կազմէր յայտագրին և դարձեալ նուագուեցաւ Արփինէ Իբրանոսեանի կողմէ:

Այս առթիւ կը նշենք նաև լիբանանեան մամուլին խանդավառ մօտեցումը հանդէպ Օր. Այնթապլեանի գործին որ տեսակ մը պատկանող կը հանդիսանայ իր անխոնջ աշխատանքին»<sup>55</sup>:

Ծրագրային «Hymne au Liban»-ը բաղկացած է 6 մասից<sup>56</sup>

#### 1. Allegro animato

«Սկզբում հեղինակը նկարագրում է ուրախ հոգեվիճակը, անբասիր ուրախություն, որն արտահայտվում է ֆլեյտայի մեղմ երգով, որի որոշ ռիթմերը հայտնի են լիբանանյան լեռներում:

Այդժամ երկնքում կուտակվում են ամպերը, ամպրոպ է սկսվում: Մրրիկի միջից երգում է տիխակը: Նրա մենահամերգը համալրվում է այլ թռչունների դայլայլով և դառնում է բնության իսկական համերգ: Բայց կայծակը պատռում է երկինքը, որոտով ամպրոպ է սկսվում, քամին վեր է ածվում փոթորկի:

Հատկանշական է առաջին մասի վերջում տիրող երաժշտության ուշագրավ աշխուժությունը»:

20



<sup>55</sup> 800 ունկնդիրներ կը ծափահարեն Արուսեակ Այնթապլեանի աշակերտները եւ Ն.Վ.Նախագահ Հելուին նուիրուած իր «Քայլերգ Լիբանանի»ն, Թերթից կտրտուկներ, Անթվակիր, հայերեն, տպագիր 13 թերթ, 7 փաթեթ, Գ.ԱԹ, Արուսյակ Այնթապլեանի ֆոնդ N 66:

<sup>56</sup> «Hymne au Liban», Միմֆոնիա, 1966, կից՝ ստեղծագործության համառոտագրություն, ձեռագիր 11 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապլեանի ֆոնդ N 8: Տե՛ս Ծրագիր, 1966թ., 5 հունիսի, ֆրանս., տպ., 16 թերթ, 1 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապլեանի ֆոնդ N 57: Ֆրանսերենից թարգմանությունը՝ Մարգարիտա Քամալյանի:



2. Andante melancolico

«Ընության երկրորդ տեսարանը. հեղինակը գվարճանում է՝ կենդանություն տալով այն ամենին, ինչը տեսնում է: Կենդանացման, մարմնավորման մեթոդ. տերևների երազկոտ ստափյունը, ճյուղերի մելամաղձոտ շնջյունը, կամակոր առվակի խոխոջյունը:

Տիրում է մեծ, խորին մեղմության զգացողությունը, որը ներթափանցում է նուրբ քնքուշ հոգիները»:

21





### 3. Tempo di Marcia

«Այդ ժամանակ է, որ հանկարծակի համաչափ ռիթմը «Hymne au Liban»-ին հաղորդում է կենդանի ջրի ուժ՝ համաչափ ռիթմով «Hymne au Liban»-ը հնչում է, «ցայտում է» կենդանի ջրի ուժգնությամբ և ծավալվում է խճաքարերի միջով վազող առվակների երգերի ներքո:

22



Հաջորդում է մի մեղեդի, որտեղ արտահայտվում են հեղինակի անուրջները:

50



ADAGIO CANTABILE

Այնուհետև երաժշտությունը դառնում է վսեմաշուք, մինչդեռ երկխոսություն է սկսվում Ա.Այնթապյանի և բնության միջև, երկխոսություն, որը կորչում է ջրի կարկաչներում»:

#### 4. Adagio cantabile

«Andante melancolico»-ի կրկնությունը: Ներդաշնակ օկտավները դառնում են առանձնահատուկ հարուստ և հանդիսավոր:

Շուտով մեր սարերի ֆլեյտան երգում է իր հին երգը, որը կորչում է հովիտներում»:

ADAGIO CANTABILE

5. Tempo di Marcia

«Քայլերգի տեմպի կրկնություն: Քայլերգը ծավալվում է հզորությամբ և փառքով, որն արտահայտվում է ներդաշնակ օկտավների արագությամբ և դրոշյունով»:

25

The image shows a musical score for 'Tempo di Marcia'. It consists of two systems of staves. The first system has a treble clef staff with a key signature of two flats (B-flat and E-flat) and a 4/4 time signature. It starts with a dynamic marking of *mp* and a *Rall.* (rallentando) marking. The bass clef staff has a key signature of two flats and a 4/4 time signature. The second system continues the piece with a dynamic marking of *sss* (fortississimo) and features several triplet markings (indicated by a '3' over the notes) in both staves. The tempo marking 'TEMPO DI MARCIA' is written above the first staff of the second system.

6. Prestissimo

«Բուռն հակադրություն: Միմֆոնիան հանկարծակի նոր կյանք է վերագտնում: Երկու ձեռքերով կատարած օկտավները, միմյանցից բաժանվելով՝ իրենց ելևէջային զարգացման մեջ, թմբուկի թնդյունի, խանդավառ ամբոխի ծափահարությունների տպավորություն են թողնում: Ողջույնի բացականչություններ, որոնք ավելի հնչեղ են դառնում՝ դառնալով հաղթական ակորդներ»:

26

The image shows a musical score for 'Prestissimo'. It consists of two systems of staves. The first system has a treble clef staff with a key signature of two flats (B-flat and E-flat) and a 4/4 time signature. It starts with a dynamic marking of *sss* (fortississimo). The bass clef staff has a key signature of two flats and a 4/4 time signature. The second system continues the piece with a dynamic marking of *sss* and features several quintuplet markings (indicated by a '5' over the notes) in both staves. The tempo marking 'PRESTISSIMO' is written above the first staff of the first system.

52





#### 2.4. ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ<sup>57</sup>

### Հանդիսավոր ստեղծագործություն՝ նվիրված պարոն Ու Թանին՝ Միավորված Ազգերի Կազմակերպության գլխավոր քարտուղարին

*Թող Խաղաղության այս սիմֆոնիան հաղթի  
բոլոր ավերիչ ուժերին և բոլորին հայտնի  
«Արդարության և Միրո» մասին<sup>58</sup>:*

1968-ի մայիսի 19-ին, կիրակի, Բեյրութի Ամերիկյան համալսարանի դահլիճում, Նորին գերազանցություն Ազգային կրթության նախարար Ժան Ազիզի հովանավորությամբ կայացած՝ Ա.Այնթապյանի աշակերտների տարեկան ունկնդրումի ընթացքում տեղի է ունենում նրանոր ստեղծագործության պրեմիերան. «**Խաղաղություն**»՝ նվիրված ՄԱԿ գլխավոր քարտուղար Ու Թանին<sup>59</sup>՝ «որպես տուրք այն աշխատանքին, որը նա կատարել է՝ պահպանելու համար խաղաղությունը աշխարհում»<sup>60</sup>: Ու Թանը (1909-1974) ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի պաշտոնում պաշտոնավարել է 1961-1971 թվականներին:

<sup>57</sup> «La Paix», Միմֆոնիա, 1968, նվիրված Թանին, կից՝ ստեղծագործության համառոտագրություն, ձեռագիր 17 թերթ, Գ.Ա.Թ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 9:

<sup>58</sup> Նույն տեղում:

<sup>59</sup> Նյութեր՝ ամփոփված հանդեսներում, 1968-74թթ., ֆրանս., տպ. 4 փաթեթ, Գ.Ա.Թ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 61:

<sup>60</sup> Նույն տեղում:

«Ա.Այնթապյանը, որը ներկայացրել է սիմֆոնիայի ձայնագրու-  
թյունը Բեյրութի ՄԱԿ-ի գրասենյակ, գլխավոր քարտուղարից ստացել  
է շնորհակալագիր, որում ասվում է. «Շատ ոգեշնչող է աշխարհում  
գտնել բարի կամքի տեր խաղաղությունը պահպանելու և պատերազմի  
սարսափները վտարելու համար»՝ Թանի ստորագրությամբ»<sup>61</sup>:

Ստորև ներկայացնում ենք Շնորհակալագրի տեքստն ամբողջու-  
թյամբ:

«ՄԻԱՅԵԱԼ ԱԶԳԵՐ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԳՐԱՄԵՆԵԱԿ

ՅՈՐԴԱՆԱՆԻ, ՔՈՒԷՅԹԻ, ԼԻԲԱՆԱՆԻ ԵՒ ՍՈՒՐԻՈՅ ՀԱՄԱՐ

Պեյրութ 18 Յունիս 1968

ՈՒ ԹԱՆ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏՆԷ

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԵՐԳԱՀԱՆ

ԱՐՈՒՍԵԱԿ ԱՅՆԹԱՊԼԵԱՆԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ

ՆՈՒԻՐՈՒԱԾ ԻՐ ՄԷԿ ՄԷՄՖՈՆԻՒՆ ՀԱՄԱՐ

Միացեալ Ազգերու Ընդհանուր Քարտուղար ՈՒ ԹԱՆ շնորհակա-  
լութեան գիր մը որկած է Լիբանանահայ երգահան Արուսեակ Այնթապ-  
լեանի որ իր «Խաղաղութիւն» վերնագրեալ սեմֆոնիս ձօնած էր ընդհա-  
նուր քարտուղարին:

«Խիստ քաջալերական է այն երեւոյթը», - կը գրէ Ու Թան, «Թէ  
այսքան շատ բարեացական մարդեր ու կիներ աշխարհի երեսին,  
այսքան բռուն կերպով կը կցանկան գորավիզ կանգնիլ խաղաղութեան  
դատին եւ մէկ անգամ ընդ միշտ վանել սարսափները պատերազմին»:

Յօրինուածքի ժապաւենի վրայ արձանագրուած մէկ օրինակը, ձօ-  
նուած Ու Թանին եւ մեկնաբանուած 19 Մայիս 1968-ին Պեյրութի Ամե-  
րիկեան Համալսարանի Էսսէմպլի Հոլին մէջ, ընդունուած էր յանուն  
Ընդհանուր Քարտուղարին, Միացեալ Ազգերու Տեղեկատու Կեդրոնին  
Տնօրէնին Պր. Միրզա Մ.Թաքիի կողմէ եւ որկուած Միացեալ Ազգերու  
Կեդրոնատեղիները»<sup>62</sup>:

«Հատված համաժողովական փաստաթղթերից. Եկեղեցի /76/. Վա-  
տիկան II «խաղաղության շատ ազնիվ և իսկական հայեցակարգը  
երևան բերելուց և պատերազմի դաժանությունը քննադատելուց հետո

<sup>61</sup> «L'Orient», du 19 Juin, 1968.

<sup>62</sup> Շնորհակալագիր, 18 հունիսի, 1968, Բեյրութ, Հայ., անգլ., արաբ., 4 թերթ, կից՝ ծրար, 3 փաթեթ, Գ-ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 75, էջ 2:

նպատակային է բուռն կոչով դիմել քրիստոնյաներին, որպեսզի, Քրիստոսի օգնությամբ, ով խաղաղության հեղինակն էր, նրանք բոլոր մարդկանց հետ սիրով և արդարությամբ հաստատուն դարձնեն այս խաղաղությունը միմյանց մեջ և դրա համար միջոցներ նախապատրաստեն:

Ա.Այնթապյանը ժողովի, խաղաղության ուխտավորների՝ համաշխարհային կազմակերպություններում իրագործած բազմաթիվ ջանքերի օրինակով խաղաղության կոչ է արձակում, քանի որ մեր Միջին Արևելքում, ինչպես աշխարհի բազմաթիվ երկրներում Խաղաղությունը պետք է «անդադար կերտել», հաստատել, ամրապնդել»<sup>63</sup>:

Ծրագրային<sup>64</sup> «Խաղաղությունը» բաղկացած է 9 մասերից, որոնք իրար են հաջորդում առանց ընդմիջման, բաժանումը մասերի պայմանական է:

1. Allegro moderato

«Մեզ հուզելու համար Ա.Այնթապյանը նախևառաջ հիշեցնում է պատերազմի սարսափների մասին. թնդանոթի կրակոցները, մարտակառքերի շարժումը հանդիսացել են ներշնչող, թնդացող հատկանիշներ: Նա նաև ներկայացրել է այդ ժամանակ բնակչության մեջ աճող խուճապը»:



<sup>63</sup> «La Paix», Միմֆոնիա, 1968, նվիրված Թանին, կից՝ ստեղծագործության համառոտագրություն, ձեռագիր 17 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 9:

<sup>64</sup> Նույն տեղում, ֆրանսերենից թարգմանությունը՝ Մարգարիտա Քամայլանի:

c-moll-ում ներքևի ռեգիստրում սեքստուլներով օկտավային կրկնապատկմամբ *fff* վարընթաց շարժումը երկրորդ աստիճանի սեպտակորդի հնչյուններով ազդարարում է թնդանոթների կրակոցները. դրանք ընդմիջվում են կետագծված ռիթմով վերընթաց շարժմամբ, որն էլ հանգեցնում է կիսակադանսին:

Առաջին մասի եզրափակիչ հատվածում փոխվում է երաժշտության բնույթը՝ տրիոլներով գահավիժող միաձայն մեղեդին ներկայացնում է ժողովրդի խուճապը, որն էլ հանգեցնում է երկրորդ մասին:

## 2. Andante triste

«Նուրբ և խաղաղ եղանակով փոխանցվող կարճատև դադարից հետո կրկին խռովություն է սկսվում՝ մարտակառքերի շարժում, թնդանոթի կրակոցներ: Ուժգին սարսափի պահ»:

28

*ff*-ով ավարտվող նախընթաց մասին հակադրվում է տերցիաներով կրկնապատկված շարժումը *p*-ով, ապա՝ *pp*-ով, պահպանվում է նախկին տոնայնությունը:

56

Կրկին վերականգնվում է պատերազմի սարսափի մթնոլորտը, նորից ff-ով երեսուներկուերորդականներով սրընթաց վերելքն է, որը հանգեցնում է երկու ձեռքերում օկտավներով կրկնապատկված ահարկու շարժմանը:

### 3. Andante doloroso

«Պատերազմը հարվածում է մարդկային կյանքերին. այստեղ նկատելի են օգնության ակնկալող մահացողների հեծեժամանքները: Շարունակվում են թնդանոթի կրակոցները: Այնուհետև ներկա ենք գտնվում գոհերի՝ ցավ պատճառող հոգեվարքին (2 վերջին տակտերը)»:

29



Նախընթաց եռամաս չափը փոխարինվում է 2/4-ով, բայց տոնայնությունն անփոփոխ է: Վերին ռեգիստրում տրեմոլոների ֆոնին բասում հանդես է գալիս մեղեդին՝ ներկայացնելով պատերազմի գոհերի վերջին շնչյունները:

Վերականգնվում է 3/4 մետրը, և վերստին թնդանոթների որոտներն են, որոնց վերջում արձագանքում են մեռնող մարդիկ. հանգչում է երաժրտությունը տոնիկական եռահնչյունով՝ ppp հնչողությամբ:

### 4. Allegro moderato

«Կոմպոզիտորը խռովության սուր թռիչքների մեջ հայտնվող տխուր և սրտաշարժ հնչյունների միջոցով հիշեցնում է Խաղաղության իր կոչը: Խաղաղության այս կոչը կրկնվում է, բայց չի լավում. պատերազմի կրակն ավելի ու ավելի է տարածվում»:

Այստեղ տրված է կոմպոզիտորի խաղաղության կոչը:



*Allegro Moderato*

Կոչը կրկնվում է ևս մեկ անգամ՝ մեկ օկտավ վեր, ավելի սրտակեղեք: Նոր թեմատիկ նյութը խլացնում է կոչը ff-ով, և օկտավային կրկնապատկումներով սրնթաց շարժումն ազդարարում է պատերազմի շարունակության մասին:

5. Andante melancolico

«Ա.Այնթապյանը տրվում է մելամաղձոտ մտորումների. խորունկ երազանքների պահ»:

Կրկին եռամաս մետրն է՝ 3/4: Մեղեդին հանձնարարված բասին:

31 *ANDANTE MELANCOLICO*

Մեղեդու հիմքում հաջորդ մասի վալսի թեման է, որը երկու անգամ կրկնվելով՝ նախապատրաստում է հաջորդ մասը՝ վալսը:

6. Allegro (Tempo di Valse)

«Հանդարտեցումն իր հետ բերում է հույս ավելի լավ օրերի հանդեպ: Հեղինակն այն թարգմանում է հանկարծակի ուրախությամբ, որը ծնում է վալսի շարժում»:

Նախորդ մասի թեման հնչում է որպես վալս՝ օկտավային կրկնապատկմամբ հզորացած, երկու օկտավ վեր, ավելի պայծառ ու լուսավոր:

32 *ALLEGRO*

Վալսին հաջորդող կապող անհանգիստ հատվածը հանգեցնում է հաջորդ մասին:

7. Adagio doloroso

«Անհանգստության վերադարձը: Տիրության արցունքներ»:

33



8. Andante doloroso

«Օգնություն սպասող մահացողների հեծեժանքները»:

Նույնությամբ կրկնվում է 3-րդ մասի՝ «Andante Doloroso»-ի առաջին բաժինը:

9. Presto - Prestissimo

Վստահությունն Աստծո հանդեպ հաղթեց տագնապը: Ա.Այնթապլյանն այն արտահայտում է աշխույժ երաժշտությամբ, որտեղ ռազմիկների աղաղակների միջից ուղի է հարթում հույսը հաղթանակի հանդեպ: Հաղթական էջ, որը սիմֆոնիային տալիս է իր վերնագիրը՝ «Խաղաղություն»<sup>65</sup>:

<sup>65</sup> Նյութեր՝ անփոփոխ հանդեսներում, 1968-74թթ., ֆրանս., տպ. 4 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապլյանի ֆոնդ N 61:





## 2.5. «ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ»<sup>66</sup>

### Հանդիսավոր ստեղծագործություն՝ նվիրված գեներալ Շառլ դը Գոլին<sup>67</sup>

«Ապրիլի 25-ն է՝ կիրակի, Ա.Այնթապյանի մոտ քսան աշակերտների ունկնդրումն էր... Ա.Այնթապյանը միաժամանակ դաշնամուրի ակամավոր ուսուցիչ է և կոմպոզիտոր՝ մոտ 30 ստեղծագործությունների հեղինակ, որոնցից մի քանիսը նվիրված են նշանավոր միջազգային անհատականությունների հիշատակին կամ որպես հարգանքի տուրք... Ունկնդիրների մի մասը եկել էր լսելու համար 1969 թվականին Շ.դը Գոլին<sup>68</sup> նվիրված «Տուրքը», որն այս մեծ մարդու մահվանից հետո ձոն

<sup>66</sup> «Homage», նվիրված է դը Գոլին, փոխադրություն դաշնամուրի համար, 1969, կից՝ ստեղծագործության համառոտագրություն, ձեռագիր 19 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 7:

<sup>67</sup> Գեներալ դը Գոլը Լիբանանի մեծ բարեկամն է: Տե՛ս «Homage», նվիրված է դը Գոլին, փոխադրություն դաշնամուրի համար, 1969, կից՝ ստեղծագործության համառոտագրություն, Ա.Այնթապյանի ֆոնդ, N 7, ձեռագիր 19 թերթ, էջ 2՝ նկարի տակ մակագրությունը:

<sup>68</sup> **Շառլ դե Գոլ** (Charles de Gaulle, 22 նոյեմբերի, 1890 - 9 նոյեմբերի, 1970), Ֆրանսիայի ականավոր քաղաքական և ռազմական գործիչներից: Ֆրանսիայի նախագահ՝

և հիշատակ է դարձել... Շատ ուշադիր դահլիճը գնահատեց և ծափահարեց այս պարտիտուրին, որտեղ հարևանում են Լիստի և Շոպենի ռոմանտիզմը, Ռ-ախմանինովի կրքոտ թռիչքները: Այս ամենն ապացուցում է, որ կոմպոզիտորի ներշնչանքն արտահայտվում է դաշնամուրային լավագույն ավանդույթներով»<sup>69</sup>:

Գեներալ դը Գոլն Ա.Այնթապլյանին շնորհակալական նամակ է գրել Փարիզից՝ 1969 թ. հուլիսի 29-ին:

Ստորև ներկայացնում ենք «Հարգանքի տուրքի» ծրագիրը<sup>70</sup>:

Այս հաղթական ստեղծագործությունը, որն ունի Ռ-ապտոդիայի առանձնահատկություններ, բաղկացած է երեք հիմնական մասերից: Ա.Այնթապլյանը փորձում է վերակենդանացնել շատերի հուշերում դեռ կենդանի՝ 2 համաշխարհային պատերազմները:

«Մի մարդու պատմությունը դա մի դարաշրջանի պատմություն է»:

(Ֆրանսուա Մորիաք):

Գոլի պատմությունը բաղկացած է՝

- երկու պատերազմներից
- հետպատերազմյան շրջանից
- Ֆրանսիայի նախագահության երկու մանդատներից

**Մաս առաջին՝**

**երեք գործողություն – 1914-1918 առաջին համաշխարհային պատերազմը**

1. Lento (Revolte - ըմբոստություն)

«Այս գործողության սկզբում հարուստ, պոռթկուն և փառահեղ օկտավները շուտով կանգնում են աճող բարդության առջև, քանի որ դժվար է հասկանալ Շառլ դը Գոլին, «ֆրանսիացիներից ամենահանրաճանաչին», այս գորեղ անհատականությանը, ով իր ողջ կյանքի

---

1959-1969-ին.: Երկրորդ աշխարհամարտի ժամանակ հեռանում է Լոնդոն և կազմակերպում «Ազատ Ֆրանսիա» դիմադրության շարժումը: Մեծ Բրիտանիան, ԱՄՆ-ն, ԽՍՀՄ-ը ճանաչում են նրա «աքսորի կառավարությունը»: Ֆրանսիայի ազատագրումից հետո 1944-1946թթ, ղեկավարում է ժամանակավոր կառավարությունը: Երկու անգամ ընտրվել է նախագահ: Ընդունել է նոր սահմանադրություն, զարկ տվել տնտեսությունը, բարձրացրել երկրի միջազգային հեղինակությունը:

<sup>69</sup> **Marc-Henri Mainguay**, Aroussiak Aintablian, une audition ponctuee d'un «Hommage» a Le Gaulle, «L'Orient», mai, 1971.

<sup>70</sup> Ըստ՝ Նյութեր Այնթապլյանի մասին՝ ամփոփված հանդեսներում, 1969թ., 15 հունիսի, ֆրանս., տպ. 28 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապլյանի ֆոնդ N 60: Ֆրանսերենից թարգմանությունը՝ Մարգարիտա Քամալյանի:

ընթացքում իր համար ստեղծել է Ֆրանսիայի «որոշակի գաղափար», ով չի կասկածել, թե Ֆրանսիան «պետք է անցնի հսկա փորձությունների միջով, և որ իր կյանքի իմաստը Ֆրանսիային մի օր շոշափելի ծառայություն մատուցելն է» (Կոչ, էջ 6)»:

35



## 2. Moderato (Souffrance - Տառապանք)

«Սեզանից յուրաքանչյուրը մարդ է, որը պայքարում է և տառապում է - այո՛: Ով պայքարում է և ով տառապում է, բայց ոչ թե իր, այլ՝ ուրիշների համար»: (դր Գուլի խոսքը, Լոնդոն, 29 նոյեմբերի, 1940<sup>71</sup>):

Երկրորդ գործողությունը պատմում է երիտասարդ սպայի տառապանքների և համառության մասին: Նա երկու անգամ վիրավորվել է Բելգիայում (1914թ. օգոստոսին և 1915թ. մարտին), երրորդ անգամ՝ Դուանոնում (1916թ. մարտի 2-ին), որտեղ ռումբի պայթյունից հետո, անգիտակից վիճակում նա գերի է ընկնում: Հավատարմվ Ֆրանսիայի

<sup>71</sup> Տե՛ս «Homage», փոխադրություն դաշնամուրի համար, 1969, կից՝ ստեղծագործության համառոտագրություն, Ա.Այնթապյանի ֆոնդ, N 7, ձեռագիր 19 թերթ, էջ 1:

հաղթանակին՝ դը Գուլը մնում է անխռով՝ եվրոպական պատերազմի տարածվող փոթորկի մեջտեղում (վերջին 10 տակտերում)»:

36



### 3. Cantabile (Armistice - Չինադադար)

«Որպես մարգարեական հայտարարություն երրորդ գործողության առաջին ութ տակտերը կանխագգում են 1918թ. նոյեմբերի 11-ի զինադադարը: Խորին խաղաղությամբ լի հանգիստ հատված: Այդժամ, խաղաղության համաձայնագրերը ստորագրելուց առաջ, Ա.Այնթապյանը կրկին լսում է Մարնի վերջին ապստամբությունները, կռիվները և հեղափոխությունները Ռուսաստանում և Գերմանիայում: Կարելի է զգալ զնդացրի կրակոցները՝ ձախ ձեռքի նվագամասում, մարտակառքերի դղրդոցը և ճակատամարտին հաջորդող որոշակի քառսը, վերջում բնդանոթի կրակոցներ՝ հստակ և հնչեղ»:

64



*CANTABILE (Stranitsice)*

The musical score is written for piano and consists of four systems of two staves each. The key signature is two flats (B-flat major), and the time signature is 3/4. The piece is marked 'CANTABILE (Stranitsice)'. The first system begins with a piano (p) dynamic and includes a 'Rall.' marking. The second system includes 'dim.' and 'pp' markings, followed by 'Rall.' and 'piu animato'. The third system includes 'doux', 'echo', and 'Rall.' markings, followed by 'ff'. The fourth system includes 'accel...' and '8' markings.

**Մաս երկրորդ - 1940թ. ջախջախումը և գեներալ դր Գուլի կոչը երեք գործողություն**

**1. Lento melancolico (Méditation - Մտորում)**

«Այստեղ սկիզբն ավելի դանդաղ է, և մեղեդին հոսում է ինչպես ջուրը, որի խաղաղությունը խռովվել է անհանգիստ գոգահովիտներում. կոմպոզիտորը մտածում է 1940թ. մայիսի օրերի մասին, երբ Ֆրանսիան պարտություն կրեց: Փոխ առ փոխ սաստիկ տխուր կամ ուղեկցվող ամպրոպի որոտով՝ երաժշտությունն անշտապ մտորումների ընթացքում փորձում է հետևել գեներալի հոգեվիճակին: Արդյո՞ք նա չէր տեսնում, որ իր երկիրը գնում է դեպի սարսափելի աղետ, դեպի անարժան ստրկություն: Անհրաժեշտ էր, որ նա կռվի: Եվ նա կռվեց...»:

*LENTO. MELANCOLICO (Meditation) 2ème partie. Très mouvementé*

2. Allegro agitato (Guerre - Պատերազմ)

«Ստեղնաշարի խաղն ավելի նյարդային և ավելի արագ է դառնում: Իրադարձություններն իրար են հաջորդում. 1940թ. հունիսի 14: Ֆրանսիայի հոգեվարքը: Փարիզը հայտարարված է բաց քաղաք: Ամբողջ տարածքով սեկ փախուստ է, խուճապ, զորքերի նահանջ, արիությունը խորտակվում է անողոր ուժի առջև: Այդժամ դեռ տեղի են ունենում վերջին հուսահատ ճակատամարտերը (վերջում ձախ ձեռքի նվազամասում թնդանոթի կրակոցներ)»:

3. Allegro animato (Tempo di valse: espoir - Հույս)

«Երրորդ գործողության մեջ աշխույժ վախով հեղինակը ցանկանում է արտահայտել ժողովրդի հույսի ու հպարտության մոտիվը: 1940թ. հունիսի 18-ին գեներալը Լոնդոնում կոչ է անում չենթարկվել կապիտուլյացիային: Հույսը միավորում է առաջին նվիրյալներին, և շուտով առաջին գումարտակները միանում են «Լոթարինգյան խաչին»: Այնժամ, երբ ուրախության արցունքների որոշ նոտաները հաջորդում են միմյանց, օկտավները վազում են ստեղնաշարի վրայով ինչպես հույսից ցնցված ալիք. «Հայրենիքի հանդեպ սիրո» թեման գործիքավորվում է օկտավների հարուստ զանազանությամբ և կատարման տեխնիկայի բարդությամբ»:

40

ALLEGRO ANIMATO (Tempo di valse: Espoir)



**Մաս երրորդ - Դեպի հաղթանակը (1940-1945)**

**Վեց գործողություն**

1. Lento triste (Réverie - Երազանք)

«Առաջին 12 տակտերն ունեն ռոմանտիկ քնարականության երանգ: Կոմպոզիտորին անհրաժեշտ է արտահայտել իրեն համակամ ուժեղ զգացմունքը (հետևեք ձախ ձեռքի նվագին). «Վեստերլանդում», Դակարի ճանապարհին չզգա՞ց իրեն «ջախջախված պարտքի մեծությունից»: Ինչպե՞ս չհիշել ժամանումը Դակար, խիտ մառախուղի պատճառով վտանգ, դրան հաջորդող ցավալի եղբայրասպան թնդանթաձգություն: Եթե Ժիրոն արտահայտվել էր Վիշիի կառավարությանը ենթարկվելու օգտին, ապա այլ էր Աֆրիկայի սևերի՝ «ազատ Ֆրանսիային» միանալու որոշումը: Ազատության ձայնը հստակ և արագ նոտաների շարքով՝ փողերի ձայնի ներքո, անդրադարձվում է անապատների միջով: Չնայած պայքարի դաժանությանը, որը փոխանցում է երաժշտությունը, հեղինակն այս գործողությունն ավարտում է հույսի հաղթական քնարականությամբ»:

41








## 2. Adagio (Larmes - Արցունքներ)

«Ինչպես Ֆրանսուա Մորիսը, Այնթապյանը ցանկանում է բացահայտել գեներալ դը Գոլի «սրտի գաղտնիքը» (Մորիսը, Դ-ը Գ-ու, էջ 123), մի սրտի, որն ինքն իրեն հարց է տալիս... «Արդյո՞ք ես կունենամ այս փորձություններին մինչև վերջ դիմակայելու համար բավականաչափ խորաթափանցություն, վճռականություն և ճարպկություն» (Պատերազմի հուշեր, I, էջ 261): Մի՞թե ոչ ոք իրոք երբևէ չի լսել Շառլ դը Գոլի ճիշդ. «Ես միայնակ եմ: Հուզմունքից զարկող սիրտ, ուրախության արցունքներ, հպարտության հեկեկոց» (I, էջ 258): Չգանք խորը տխրությունը, որը կոմպոզիտորը ցանկանում է փոխանցել»:

42






### 3. Lento pathétique (Prière - Աղոթք)

«Այս գործողության առաջին չորս տակտերը լսել են տալիս շեփոթի փողի մաքուր և հստակ, վճռական ձայնը. հաստատակամ է դառնում BBC-ով Շ. դը Գոլի «Ֆրանսիացիներ, իմացե՛ք, դուք դեռ ունեք պատերազմող բանակ» (1940թ., հուլիսի 13, Լոնդոն) կոչը: Հանկարծակի, այս բոլոր միավորված, վերամիավորված ջանքերից, այն մարդկանցից, ովքեր միավորված են ընդհանուր հույսով, աղոթք է բարձրանում հանուն խաղաղության, որը պետք է վերականգնվեր ավերակներից»:

43



70

4. Allegro vivace (Tempo di Valse: combat - Մարտ)

«Ալալի ցատկոտող ռիթմ. «նրանք» գրոհում են ամենուր՝ Նորմանդիայում, Պրովանսում: Դինամիզմից և հզորությունից կուրացած խրոմատիկ օկտավները փորձում են հետևել ճակատամարտի զարգացմանը, ֆրանսիացիներին միացած զորքերի գրոհներին»:

44

ALLEGRO VIVACE (Tempo di Valse: Combat)



5. Andante (expressif - Արտահայտիչ)

«Հնչյունների աստիճանական վայրէջքից հետո ձախ ձեռքը նվագում է մի մեղեդի, որը դառնում է նուրբ ու արտահայտիչ՝ քնքուշ և նյութանսավորված: Շուտով նույն թեմայով նոր վարիացիաները փոխանցվում են աջ ձեռքին: Ուժգին զգացմունքի պահ՝ 1944թ. հունիսի 14, Շ. դը Գոլը չորս տարվա բացակայությունից հետո վերջապես ոտք է դնում ազատագրված Ֆրանսիայի հողի վրա՝ Կուրսյում»:

45


6. Presto prestissimo (Valse sautillante: Victoire - Յատկոտող վալս. Հաղթանակ)

«Հաղթական հիմնն ընդունում է վալսի տեմպ՝ ավելի ու ավելի արագ և հզոր: Փարիզն ազատագրված է, հաղթանակի քայլերգն արագանում է: Շ. դը Գոլն իր կյանքի պատմական զագաթնակետին է: Հիշելով Օռլեանի կույսի գոհը՝ նա գրում է. «Մեզ մոտ միշտ կա մեկը, ով իր ճակա-

72

տագիրը Ֆրանսիային է տալիս», քանի որ ծառայել Ֆրանսիային, արդյո՞ք չի նշանակում՝ ծառայել աշխարհին: Լսենք պարզ և դողողուն օկտավները, որոնց հաջորդում են ստեղծագործությունը եզրափակող տագնապային և վառ օկտավները, աշխուժությամբ և խանդավառությամբ հնչում է վերջին հաղթանակի տրիումֆը:

46



Չմոռանանք ընդգծել գորեղ վիրտուոզության տեխնիկայի բնույթը, որն անհրաժեշտ է Ա.Այնթապյանի որոշ չափով քաջ կոմպոզիցիայի համար, որ նվիրված է Շ. դը Գոլի պես մարդուն: (Քաջ, որովհետև նվիրված է Մեծ մարդուն):

Ընդունենք, որ Ա.Այնթապյանն իրագործել է գեղեցիկ և մեղեդային աշխատանք, փառահեղ, այլազան, որտեղ խաղաղությունը և հույսը հաղթում են մեր աշխարհը ցնցած «փոթորիկների սանձարձակությամբ»:

Չմոռանանք նաև, որ 1944թ. գեներալ դը Գոլի առաքելությունն ամենևին ավարտված չէր, այլ նոր էր սկսվում: Մտորումների և մեկուսացման երկար շրջանից հետո այս բացառիկ դեկավարը 11 տարով իր ձեռքը վերցրեց իր ազգի ճակատագիրը: Ֆրանսիային վերադարձնելով իր մեծությունը, իր դիրքը և իր կոչումը, Շ.դը Գոլը ձգտեց երազանքին. կառուցել ոչ միայն Եվրոպայի Միությունը, այլև միավորված և արդար աշխարհ, որտեղ կոչնչացվեն սովը և անգրագիտությունը:

Լիբանանը մնում է շնորհակալ վկա՝ գեներալի այս ուղղամտության, որը նրան հավատարիմ է պահել իր ընկերների հանդեպ և նրան դարձրել է լիբանանյան ժողովրդի և արաբական երկրների արդար գործի վճռական պաշտպան:

Տուրք է մատուցվում այս մեծ Առաջնորդին, ում համար հոգևոր արժեքները դատարկ խոսքեր չէին»:

## 2.6. ՏԻԵՁԵՐԱԿԱՆ ՈՂԻՍԱԿԱՆ<sup>72</sup>

### Գարաշրջանի ամենաարտառոց արկածը

«Յուրաքանչյուր ոք դեռ հիշում է 1969թ. հուլիսի 20-ին հեռուստացույցի էկրաններին հայտնված պատկերները, որտեղ Նեյլ Արմսթրոնգը՝ Ապոլլո 11 անձնակազմի հրամանատարը և առաջին մարդը, ով քայլել է լուսնի վրա, Էդվին Ալդրենը՝ ԼԵՄ-ի օդաչուն և օդաչու Միշել Քոլինգը և Ապոլլո 11 անձնակազմը իրականացրել են դարի սխրանքը՝ իջել են լուսնի վրա: Նման իրադարձությունը չէր կարող չոգևորել գորեղ երևակայությամբ և նրբագագությամբ օժտված արվեստագետին: Ա.Այնթապլյանն իր երաժշտական խանդավառությունը փոխանցեց դաշնամուրին»<sup>73</sup>:

Ա.Այնթապլյանը «Odysseé Spatiale» ստեղծել է 1970-ի մարտին, մեկ շաբաթում՝ ոգեշնչված լուսնի առաջին նվաճողներով՝ Ապոլլո 11 տիեզերագնացներով: «Odysseé Spatiale»-ի կատարման առիթով Ա.Այնթապլյանը հրավիրում է արվեստի և գրականության աշխարհի որոշ անհատների, այդ թվում՝ գրող և բանաստեղծ Սաիդ Աքլին, բժիշկ Ֆուադ Նիկո-

<sup>72</sup> Ցավոք, «Odysseé Spatiale»-ի նոտաները Ա.Այնթապլյանի արխիվում բացակայում են:

<sup>73</sup> Նյութեր Այնթապլյանի մասին՝ ամփոփված հանդեսներում, 1974թ., 9 հունիսի, ֆրանս., տպ. 30 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապլյանի ֆոնդ N 63: Ֆրանսերենից թարգմանությունը՝ Մարգարիտա Քամալյանի:

լա Հադդադին, մամուլի ներկայացուցիչների... «Այս ունկնդրումի ընթացքում ստեղծագործությունը կկատարի կոմպոզիտորի աշակերտներից Լիզ Դեյրմենջյանը: Պրեմիերայի ժամանակ՝ փետրվարի 10-ի երեկոյի ընտրյալները ուշադրությամբ լսեցին և ծափահարեցին «Ապոլլո 11»-ով ներշնչված այս «Odysseé Spatiale»-ին, որը բաղկացած է 11 միմյանց հաջորդող կտորներից:...

Այս էջերում կարելի է գտնել Ա.Այնթապլյանի ծայրահեղ զգայունությունը և բնատուր ունակությունն ու ներշնչանքը, որոնցով նա մարդկային իրողությունները փոխադրում է պոռթկուն հնչյունների: Դա արտահայտվում է նրա հեղինակած 50 պարտիտուրներում, որոնցից մոտ 10-ը ներկայացնում են ժամանակակից պատմության ամենանշանավոր էջերը:

20 ընդամենը այս ստեղծագործությունը շուտով կներկայացվի հանրությանը՝ հունիսի 9-ին Բեյրութի Ամերիկյան համալսարանի ժողովների դահլիճում լիբանանյան կոմպոզիտորի աշակերտների տարեկան ունկնդրումի ժամանակ:...

Այս ստեղծագործությունն արժանի է գովասանքի իր դաշնամուրային որակի և շատ հասուն ոճի համար»<sup>74</sup>:

«La Revue du Liban» 1974թ. փետրվարի 23-ի համարում, ստեղծագործության ունկնդրումից հետո Մարկ-Անրի Մենզին գրեց. ««Տիեզերական Ողիսական» իրականացվել է մեկ շաբաթում: Այս կոմպոզիտորի խառնվածքում, անշուշտ, կա մեծ ռոմանտիկ խորք: Այս «Odysseé Spatiale»-ը բաղկացած է 11 մասից՝ սկսած տիեզերք մեկնումից ծնված անհանգստությունից մինչև առաքելության ավարտից հետո Երկիր վերադարձից ծնված ապոթեոզ: Այս տարբեր հատվածների երաժշտությունը՝ ամփոփված այստեղ 17 ընդամենը 40 վայրկյանում, ներկայացնում է հակադրությունների անդադար շարք, սկսած արագ տեմպով խրոմատիկ օկտավներից մինչև հաղթական ակորդներով կտրուկ վերելք և ներկայացնում առաջին տիեզերագնացների նոր արկածի մեղեդային և հայեցողական պահերը: Ունկնդիրների սահմանափակ խումբը, որը լսել է «Odysseé Spatiale»-ը, գնահատել է սիմֆոնիկ պոեմներին մոտ այս կոմպոզիցիայի կատարման տեխնիկայի դժվարությունը. օրիգինալու-

<sup>74</sup> Արուսյակ Այնթապլյանի «Odysseé Spatiale»-ի աւերդիմամիկ հետքում, Նյութեր Այնթապլյանի մասին՝ ամփոփված հանդեսներում, 1974թ., 9 հունիսի, ֆրանս., տպ. 30 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապլյանի ֆոնդ N 63: Ֆրանսերենից թարգմանությունը՝ Մարգարիտա Քամայանի:



թյուն արտահայտչականության մեջ, անթերի վարպետություն: Ա.Այնթապյան կոմպոզիտորն ունի հավատ բանաստեղծական երևակայության հանդեպ, նրա հանդեպ, որ երաժշտության ուղերձն արժեք ունի: Նա ցանկանում է, որ մարդը մարդ մնա և հաղթահարի առօրյա երկրորդական պայմանները»<sup>75</sup>:

Ստորև ներկայացնում ենք «Odyssee Spatiale»-ի ունկնդրումից հետո առաջ եկած մտորումները<sup>76</sup>:

### **«Մաս I: Allegro molto moderato**

#### **Երեք տիեզերագնացների հոգեվիճակը**

Մեծ պահը եկավ: 1969թ. հուլիսի 16-ին տիեզերական բազայի մոտակայքում հավաքվել էին լրագրողներ, ճամփորդներ և զբոսաշրջիկներ, որպեսզի դառնան «Ապոլլո 11» անունը կրող հսկա հրթիռի մեկնելու վկան:

Ինչպե՞ս թարգմանել սպասող ամբոխի և երեք տիեզերագնացների հոգեվիճակը մեկնելուց առաջ, եթե ոչ նվազախմբի շնչակտուր ներածությամբ, որին հետևում է նուրբ և աղերսագին մեղեդին՝ անցնելով խանդավիցությունից դեպի վայրագություն, այնուհետև տխրություն, որը ծավալվում է և վեր է ածվում ակորդների հաջորդականությամբ ավարտվող խռովահույզ շարժման: Այս մասն ավարտվում է, հետո ձգվում է ֆերմատայի երկարատև հնչողությամբ:

Այսպես՝ առաջին մասում արտահայտվում են վախը, տագնապը, անհանգիստ սպասումը, հույսը:

### **Մաս II: Allegro agitato**

#### **...«Մեկնենք»**

#### **Նկատելի հուզմունք**

#### **Մեքենաների աղմուկ**

Նոր դարաշրջան է սկսվում: Սատուրն V-ը օդ է բարձրանում ուղղահայաց կերպով: Այս երկրորդ մասն սկսվում է խլացուցիչ ակորդներով,

<sup>75</sup> **Marc-Henri Mainguy**, «Odyssee Spatiale de la compositrice libanaise Aroussiak Aintablian rappelle, en musique, les premiers pas de l'homme sur la lune «La Revue du Liban», 23.2.74. Ֆրանսերենից թարգմանությունը՝ Մարգարիտա Քամայլանի:

<sup>76</sup> Տե՛ս Նյութեր Այնթապյանի մասին՝ ամփոփված հանդեսներում, 1974թ., 9 հունիսի, ֆրանս., տպ. 30 թերթ, Գ-ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 63: Ֆրանսերենից թարգմանությունը՝ Մարգարիտա Քամայլանի:

անհանգիստ ռիթմին է միանում խորքում հնչող մեղեդային, նուրբ, հուզիչ և խանդալից երաժշտությունը: Այսպես է թարգմանվում ժողովրդի ուրախությունը, մեքենաների աղմուկը:

Իրար հաջորդող օկտավները, ձեռքերի հնչող էֆեկտները, հզոր ռիթմը, ելևէջային պոռթկումներն այս հատվածին հավելում են ռիթմիկ շարժունություն և ճկունություն: Այնուհետև խանդավառ ամբոխի վերադարձը հաջորդվում է տրիոլների շարքով, կոտրտված օկտավներով: Ֆինալում հաղթական ակորդներ են:

Սկսվում է պատմության ամենամեծ արկածը. լուսնի վրա իջեցումը փոխադրվում է ստեղնաշարի վրա:

### **Մաս III:**

#### **1. Andante doloroso**

#### **Երկիր մոլորակ - լուսին**

#### **Հրթիռում (Օրորոցային)**

Աննախադեպ թռիչք տիեզերագնացների համար, ովքեր կարող են մի քանի ժամ վայելել օգտավետ քունը: Դա տիեզերանավում՝ աստղային ընդարձակ տարածության մեջ անցկացրած երրորդ զիշերն է:

Հեղինակը նախընտրում է ռոմանտիկ մեղեդի, մեղմ և հանդարտ օրորոցային, որում նա հանդիպման է ձգտում երազանքի այս աստղերի հետ...

Առկա են վարիացիաները, աջ և ձախ ձեռքերի միջև պատասխանների խաղը, մտքերի և զգացմունքների մեջ խորասուզվելու հրավեր:

Եվ էքսպրեսիվ, մտածված, խորապես մելամաղձոտ այս նոտաները հուզում են:

#### **2. Allegro vivace**

Կրակով, գույնով, դինամիզմով խռովահույզ օկտավներն ազդարարում են ԼԵՄ-ի անջատումն Ապոլլոյի խցիկից, որտեղ Քոլինգը միայնակ է մնում լուսնի ուղեծրում:

Մեղեդին դառնում է թեթև, օդային, ծայրաստիճան կարճ. այդ ժամ երկու ձեռքերը սլանում են հակադիր շարժման մեջ և կանգ են առնում երկարաձգված նոտայի վրա: Շարժիչը կանգ է առնում, ԼԵՄ-ը իջնում է լուսնի վրա: «Ստացվեց: Անհավատալի է», - Արմսթրոնգի պատմական խոսքերն են:

#### **Մաս IV: Adagio sostenuto**

##### **Լուսնի վրա առաջին մարդու իջնելը**

##### **Քավականին կարճ**

1969թ. հուլիսի 21, երկուշաբթի: 3:50: Ն.Արմսթրոնգը բացեց դիտանցքը: ԼԵՄ-ի տեսախցիկը սկսում է գործել: Այն նկարում է Արմսթրոնգի քայլերը՝ աստիճաններով իջնող Արմսթրոնգի ծանր կոշիկները:

Ճշմարտության պահը, վարանում, անվստահություն. ահա սա է քարզմանում ստեղնաշարի վրա ձախ ձեռքը՝ նկարագրելով առաջին՝ կասկածելի և առեղծվածային փորձը, երբ մարդը ոտք է դնել լուսնի վրա: Որոշ նոտաների շեշտադրմամբ այդ ձեռքի երգն արտահայտում է Արմսթրոնգի խորհրդածությունը: Հեղինակը հուզականությամբ է հագեցնում այս մասի յուրաքանչյուր նոտան և զգացնել է տալիս լուսնի վրա ոտք դնելուց առաջ Արմսթրոնգի աշխուժությունը, ծածուկ մեկամաղձոտությունը: «Մարդու համար փոքր քայլ... մարդկության համար հսկա թռիչք»:

#### **Մաս V և VI: Allegro**

##### **Երկրորդ մարդը լուսնի վրա**

##### **Ալդրենի նախապատրաստական մարզանքը**

ԼԵՄ-ի ներսում Ալդրենը կատարում է նախապատրաստական մարզանք, մինչդեռ իր գործընկերն արդեն լուսնի վրա հավաքում է առաջին նմուշները:

Դաշնամուրի նվագն արագ է, շատ կարճ հատվածում հերթազառում են ակորդները և տերցիաները: Շատ աշխույժ այս հինգերորդ մասն ավարտվում է աշխույժ և հնչեղ ակորդներով:

#### **Մաս VI: Moderato**

##### **Ալդրենն իջնում է աստիճաններով**

Արմսթրոնգից 20 րոպե հետո Ալդրենն սկսում է իջնել: Առանց վախի, նույնիսկ վստահությամբ նա թռնում է երկու ոտքերով: Սակայն ետ է ցատկում և կատարում թեթև թռիչքների իրական բալետ:

Լսեք Ալդրենի քայլերը՝ արտահայտված այդ ձեռքի երգով, ոչ երկարատև շարժման մեջ, շեշտը դրվում է տրիոլների խմբի առաջին նոտայի վրա: Մի երկարաձիգ նոտայով է ավարտվում այս մասը:

## **Մաս VII և VIII: Allegro vivace**

### **Գիտական առաքելություն**

Այս պահին հետազոտողները սկսում են իրագործել NASA-ի կողմից նախատեսված տարբեր գործողությունները. ամերիկյան դրոշի տեղադրումը. լազերային անդրադարձի և սեսամոգրաֆի տեղադրումը և այլն:

Մարդկային այս հրաշալի ջանքերն արտահայտելու համար հեղինակը հանդես է բերում վիրտուոզություն. գամմաները, տրիոլներն արագորեն (allegro) բարձրանում են և իջնում և ավարտվում են ֆինալի շատ հնչեղ ակորդներով:

## **Մաս VIII: Andante melancolico**

### **Արմսթրոնգը և Ալդրենը քայլում են լուսնի վրա**

Մեղեդին ավելի անհանգիստ է դառնում: Թվում է, թե Ա.Այնթապլյանն ուշադիր զննում է այս մարդկանց, ովքեր, անհավատալի է, լուսնի վրա են: Դիտարկումից նա անցնում է մտորումների, երազելուն... Երկու տիեզերագնացների համար դա հուզումնալից պահ է: Լուսնի վրա 135 ֆանտաստիկ ըոպե:

Այս մասում հեղինակը նկարագրում է երկու տիեզերագնացների անվճռական քայլերը՝ արտահայտվող աջ ձեռքի՝ ռոմանտիզմով երանգավորված երգում: Լսե՛ք: Այս մասն ավարտվում է կադենցիայով՝ տեղ տալով մեղմ և երկարաձիգ ակորդներին:

## **Մաս IX: Andante**

### **Արդեն վերադարձ...**

### **Երկու տիեզերագնացների վերադարձը:**

Ճանապարհորդությունը մոտենում է ավարտին: Ալդրենը և Արմսթրոնգը բարձրանում են ԼԵՄ (լսեք դաշնամուրի քայլերգը կամ տրիոլների աշխույժ քայլերը): Հրթիռը շարժվեց տեղից և միացավ խցիկին, որտեղ լուսնի շուրջ Քոլինգն արդեն կատարել էր 24 պտույտ:

Այդ պահին հեղինակը մեզ է հրամցնում նուրբ ռոմանտիզմով լի, զվարճալիորեն ռիթմիկ, հնայքով լի մեղեդային երգը: Օկտավներն այս գեղեցիկ մեղեդուն հետևում են ակնհայտ աշխուժությամբ: Մա այն պահին է, երբ տիեզերագնացները միանում են Քոլինգին, որը նրանց սպասում է օդանավի խցիկում՝ ուղեծրի վրա, որը շարունակում է շարժ-

վել լուսնի շուրջ, լուսնից 111 կմ հեռավորության վրա, 23 ժամվա ընթացքում, տիեզերքի տարածության մեջ:

### **Մաս X: Adagio patetico**

#### **Առաքելությունն ավարտված է:**

#### **Տիեզերական հրթիռի վերադարձը (Օրորոցային)**

Այս մասի սկզբում հնչող լավատեսական օրորոցայինն արտահայտում է ավարտված առաքելության լավատեսությունը: Երեք տիեզերագնացներին մնում է միայն Երկիր վերադառնալ: Լսենք ներդաշնակ սկորդների ձայնը՝ հաճելի ականջի համար: Հետևենք մեղեդու գծի հանգիստ և նվիրական պոեզիային, որը գործիքավորված է մեղմոցով: Աջ ձեռքն ավելացնում է իր սկորդները, երգը դառնում է էքսպրեսիվ՝ տերցիանների խաղով և ավարտվում է նրբորեն երկարաձգված նոտայով:

Այս հատվածի երկրորդ մասը կրում է խաղաղություն և գթասրտություն. երկու ձեռքերը կարծես սլանում են հակադիր ուղղություններով՝ աստղերի միջով, թեթև, գրեթե օդային եղանակով, որին հետևում է հնչեղ սկորդների «քանակը»:

Մեկնումի թեման աշխուժացված է տերցիաներով, ձախ ձեռքը յուրաքանչյուր նոտան հստակությամբ է անջատում մյուսից: Աջ ձեռքն է նվազակցում՝ ավարտելով հատվածը երեք կոտրտված սկորդներով, կարելի է պատկերացնել էոլական տավիղը: Նոտաների իրական արտացոլվածքը հիշեցնում է աստղերի տոնը, ուրախ փայլը:

Վերջում տավղի սկորդները ձախ ձեռքի արագ և ռիթմիկ օկտավների հետ վկայում են Երկիր ժամանման մասին, հաղթանակի ուրախության, մարդու խելքի և տեխնիկայի մեծության մասին:

### **Մաս XI: Presto Prestissimo**

#### **Երկրի վրա, ապոթեոզ**

#### **Վերադարձ Երկիր, Հաղթանակ**

Այս մասում ներկայացված է լուսինը նվաճողների համար նախատեսված Ամերիկայի և համայն աշխարհի ընդունելությունը:

Սկզբում լավում է երկու ձեռքի կատարմամբ խուլ դռնոց. ավիակիր, ուղղաթիռ շտապում են վայրէջքի վայր՝ Խաղաղ օվկիանոս: Ամբոխի բացականչություններին հետևում են ջրից հանելու հետևանքով առա-

ջացած հույզերը. դողդոջուն օկտավները վազում են ստեղնաշարի վրայով ալիքների պես և անսպասելիորեն ընդհատվում են pianissimo-ով որոշ տակտերում՝ ավարտվելով զգայուն նոտայով:

Շուտով ավյունով և տաղանդով վերածնվում է դողդոջուն ելևէջային օկտավների ռիթմիկ շարժումը:

Այս սիմֆոնիան եզրափակում են հաղթական ակորդները:

### **Մտորումներ եզրակացության մասին**

Մենք բոլորս կարող էինք գնահատել «Odysseé Spatiale»-ի տեխնիկայի բարդությունը, որը սիմֆոնիկ պոեմներին մոտ ռոմանտիկ կոմպոզիցիա է:

Պահանջները վերաբերում են որակին՝ օրիգինալություն և թեթևության շունչ՝ արտահայտչականության մեջ և անթերի վիրտուոզություն՝ կատարման մեջ:

Որպես ունկնդիր մենք գնահատեցինք ստեղծագործության գեղեցկությունը:

Ա.Այնթապլյանը հավատում է բանաստեղծական երևակայությանը, կարևորում է այն ուղերձը, որը կարող է հաղորդել երաժշտությունը: Նա ցանկանում է մարդուն ասել, որ «մարդ» մնա, հաղթի առօրյա բոլոր անկումները, որոնք նրան նսեմացնում են:

Տիեզերքի նվաճման ուղին բացվում է աստղերով լի բառերի վրա. Ստեղծարարություն - Ազատություն - Պարզություն»:

«Odysseé Spatiale»-ի համար Ա.Այնթապլյանին շնորհվում է Սաիդ Աբլի մրցանակը: «Որպես ճանաչման վկայություն այն աշխատանքի համար, որը նա իրականացրել է մի քանի տարիների ընթացքում դաշնամուրի դասավանդման ասպարեզում և պարզևատրելու համար իր վերջին կոմպոզիցիան՝ Լիբանանին պատիվ բերող «Odysseé Spatiale»-ը, Սաիդ Աբլին իր մրցանակը շնորհում է Ա.Այնթապլյանին: Ապրիլ ամսվա համար այս պարզևատրելու կոմպոզիտորին կհանձնվի արարողության ընթացքում՝ մայիսի 21-ին, Մամուլի արհմիությունում»<sup>77</sup>:

Մրցանակաբաշխությանն է անդրադառնում «La Revue du Liban»-ն իր 1974թ. մայիսի 25-ի համարում՝ Մարկ-Անրի Մենգի «Սաիդ Աբլի

<sup>77</sup> **Marc-Henri Mainguy**, de Prix Said Akl Aroussiak Aintablian, «La Revue du Liban», 11.05.74: Ֆրանսերենից թարգմանությունը՝ Մարգարիտա Քամալյանի:

մրցանակը կոմպոզիտոր Արուսյակ Այնթապլյանին» հոդվածում. «Լիբանանյան մամուլի արհմիության շենքում երկուշաբթի՝ մայիսի 21-ին, դաշնամուրի ուսուցիչ և կոմպոզիտոր Ա.Այնթապլյանին հանձնվեց Սաիդ Աքլի պարգևը՝ Այնթապլյանի վերջին ստեղծագործության համար՝ վերնագրված «Odyssee Spatiale»: Ներկա էին պարոն Սաիդ Աքլը, Ռիադ Թահան, մամուլի արհմիության նախագահը, մամուլի և մշակութային կյանքի տարբեր ներկայացուցիչներ, այդ թվում՝ ԱՄՆ դեսպանատան մշակույթի կցորդը՝ ծագումով հայ Կորին Հեդիցյանը, նաև Գարբիա Կազանջյանը, Ֆարիդ Խուրին, Հրաչ Թորիզյանը, սույն տողերի հեղինակը և դաշնակահարի փայլուն աշակերտները, Բզանսոնի Ս.Աննայի քույրերի հաստատության պրոֆեսորը, Սակրը-Կյորի Ս.Մայր Մարին և քույր Պոլ-Շենևեան:

Կարճ արարողության ընթացքում առատաձեռն բանաստեղծ Սաիդ Աքլը... միաժամանակ պարզ և հուզիչ ելույթ ունեցավ՝ բացատրելով Ա.Այնթապլյանին պարգևը շնորհելու պատճառները:

Հռետորը հիշեցրեց, որ պարգևը մի կողմից՝ տրվում է երաժշտական կրթությանը նվիրված մի ամբողջ կյանքի, իսկ մյուս կողմից՝ 1970թ. առաջին լուսնային էպոպեային վերաբերող «Odyssee Spatiale»-ի համար: Այդ ստեղծագործության բնույթը յուրահատուկ է, ասել է Սաիդ Աքլը, քանի որ այն ոչ այնքան լուսնի արկածների ճայնային իլյուստրացիան է, որքան այդ թեմաների ստեղծարար փոխադրումը հարմոնիկ և ռիթմիկ տպավորության՝ այս պատմական պահի ամբողջությունն արտահայտող, առաջին լուսնային արկածից ծնված հոգեբանական պահերի հնչյունային նրբություններով:

Այս ելույթը հուզել է Ա.Այնթապլյանին, ով հուզմունքով խոստովանեց, թե որքան հպարտ է՝ ստանալու այս պարգևը Սաիդ Աքլից, ով նրան քաջալերեց պահպանելու կոմպոզիցիայի ասպարեզում իր ապրելու իմաստը: Նա շնորհակալություն է հայտնում հռետորին, Արհմիության նախագահին...»<sup>78</sup>:

---

<sup>78</sup> Marc-Henri Mainguy, de Prix Said Akl Aroussiak Aintablian, «La Revue du Liban», 25.5.74.



## 2.7. ՇԻՐՄԻ ՎՐԱ<sup>79</sup>

### Թույլ տվեք ինձ արտասվել Ա.Այնթապյանի դառնադետ ստեղծագործությունը՝ նվիրված հարազատ մարդուն

«Ստեղծագործությունը կկատարվի մահացած սիրելիի հիշատակին: Ա.Այնթապյանը մեծ կորուստ է ունեցել: Նա տառապել է՝ տեսնելով հարազատ եղբոր ողբերգական մահը և սկսել է մտածել մահվան առեղծվածի մասին: Նման բաժանումը, որը կարող է դիպչել բոլոր մարդկանց, խորապես ցնցեց նրան, և նրա մեծահոգի սիրտը դրանից տառապում է:

Հարազատ էակի կորստի վիշտն արտահայտելու համար նա ստեղծում է «Շիրմի վրա» վերնագրով սիմֆոնիան, որը բացահայտում է իր նրբագագությունը և իրեն բնութագրող խորապես մարդկային զգացմունքները:

Այս սիմֆոնիայի ակորդները շատ հանդիսավոր են և դանդաղ, տխուր: Սակայն այդ տխրությունը երբեմն խաղաղվում է՝ անմահ հոգուն հայտնի խաղաղությամբ: Անսահման մարդկային տխրություն»<sup>80</sup>:

«Sur une tombe»-ն առաջին անգամ հնչել է 1965-ի հունիսի 15-ի համերգի առաջին բաժնում, Արփինե Իփրանոսյանի կատարմամբ<sup>81</sup>: Արփինե Իփրանոսյանը «Sur une tombe»-ը կատարել է նաև 1969-ի հունիսի 15-ի համերգի առաջին բաժնում<sup>82</sup>:

Մինչ այդ՝ Ա.Այնթապյանն իր վաղամեռիկ եղբոր հիշատակին էր նվիրել 1953-ին գրված «Les Larmes»-ը<sup>83</sup> («Արցունքները»), որն առաջին

<sup>79</sup> «Sur une tombe», Սիմֆոնիա, 1964թ. 15 դեկտեմբերի, կից՝ ստեղծագործության համառոտագրություն, ձեռագիր 5 թերթ, 4 թերթ, ընդ. 9 թերթ, 2 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 24:

<sup>80</sup> Տե՛ս «Sur une tombe», Սիմֆոնիա, 1964թ. 15 դեկտեմբերի, կից՝ ստեղծագործության համառոտագրություն, ձեռագիր 5 թերթ, 4 թերթ, ընդ. 9 թերթ, 2 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 24: Տե՛ս Ծրագիր, 1965թ., 15 հունիսի, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 56: Թարգմանությունը ֆրանսերենից՝ Մարգարիտա Քամայանի:

<sup>81</sup> Տե՛ս Ծրագիր, 1965թ., 15 հունիսի, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 56:

<sup>82</sup> Programme, Նյութեր Այնթապյանի մասին՝ ամփոփված հանդեսներում, 1969թ., 15 հունիսի, ֆրանս., տպ. 28 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 60:

<sup>83</sup> «Les Larmes», 1953թ., նվիրված է Ջորջ Այնթապյանի հիշատակին, ձեռագիր 5 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 13:

անգամ հնչել է պրոֆեսորի սաների ամենամյա տարեկան համերգի ժամանակ՝ 1959-ի մայիսի 30-ին, կոմպոզիտորի սիրելի ու շնորհալի սան Սալվա Աբի-Շաուդեի կատարմամբ<sup>84</sup>: «Les Larmes»-ն Ա.Այնթապլյանի՝ մեզ հայտնի թվագրված առաջին գործն է, որից թելերը գնում են դեպի կոմպոզիտորի սգո մյուս opus-ները՝ տոնայնությունը, բնական միևնույն լադի և բնական սեպտակորդների կիրառումը, կրկնակի ձայնառություն և այլն:

«Sur une tombe» տխուր ստեղծագործությունը ծրագրային է: Ողջ ընթացքում պահպանվում է es-moll տոնայնությունը: Բաղկացած է 5 մասից, որոնք իրար են հաջորդում առանց ընդմիջման: Վերջին մասը նույնությամբ կրկնում է առաջինը՝ փոքրիկ կողայով ավարտվող յուրատեսակ ռեպրիզ է: Ողջ ստեղծագործության միջով ռեֆրենի պես անցնում և բոլոր մասերը եզրափակում են Ֆ.Շոպենի op. 35 Գաշնամուրային երկրորդ b-moll սոնատի երրորդ մասի Marche funèbre-ն հիշեցնող ակորդները:

Ստորև ներկայացնում ենք «Sur une tombe»-ի ծրագիրը<sup>85</sup>:

1. Lento doloroso

«Սկզբում հեղինակը մի շիրմի մոտ է: Ա.Այնթապլյանն արտասվում է: Իրեն թվում է, թե լսում է հանգուցյալ եղբոր ձայնը, որին խառնվում են հեռվից լսվող այլ ձայների արձագանքներ: Արցունքները կրկնապատկվում են, բայց շարունակում են հնչել նաև արձագանքները, որոնք միախառնվում են արցունքներին և ներքին ըմբոստության պահերին: Վիշտը կարճ ժամանակով թուլանում է Շոպենի Marche funèbre-ի գաղտնի և քողարկված որոշ ակորդների ներքո»:

47

AROUSSIAK AĪNTABLIAN

<sup>84</sup> Տե՛ս Programme, Ծրագիր, 1959թ., 30 մայիսի, ֆրանս., տպ. 6 թերթ, 1 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապլյանի ֆոնդ N 51:

<sup>85</sup> Լստ՝ Ծրագիր, 1965թ., 15 հունիսի, Գ.ԱԹ, Ա.Այնթապլյանի ֆոնդ N 56: Ֆրանսերենից թարգմանությունը՝ Մարգարիտա Քամալյանի:

Handwritten musical score for a piece in 3/4 time. The score is written in a key with four flats (B-flat major or D-flat minor). It features piano (*p*) and mezzo-forte (*mf*) dynamics. Key markings include *pp* *écho douloureux*, *p*, *a tempo*, and *mf* *rall.*. The score includes trills, triplets, and various articulations.

## 2. Andante triste

«Երկրորդ մասում հեղինակն ընթրատացել է, տրտնջում է ու ողբում, մինչև որ տրվում է արցունքներին, որոնք անսպառ են, անմխիթար...

Ա.Այնթապյանն ավարտում է այս նախադասությունները՝ վերցնելով անվերջանալի տխրությանը լի սգո ակորդներ»:

48

Handwritten musical score for "ANDANTE TRISTE" in 3/4 time. The score is written in a key with four flats. It features piano (*p*) and mezzo-forte (*mf*) dynamics. Key markings include *Renotte*, *pp* *écho douloureux*, and *mf* *rall.*. The score includes trills, triplets, and various articulations.



### 3. Lento patetico

«Թվում է, թե խզվել է կապն այս աշխարհի հետ: Ա.Այնթապյանը երազ է տեսնում: Նրան շրջապատում են արդեն լաված վշտալի արձագանքները, և հանգուցյալ եղբոր հոգին թերվում է դեպի նա, ցանկանում է նրան մխիթարել, բայց արցունքները շարունակում են առատորեն հոսել: Տանջալի երկխոսություն է սկսվում: Ինչի՞ համար է այս դաժան բաժանումը: Արցունքները վեր են ածվում երկար վշտալի հեկեկոցի, որը կորչում է *Marche funèbre*-ի դանդաղ ռիթմում»:

49



#### 4. Adagio triste

«Հեղինակը հոգնում է արտասովորուց: Մեղեդին այդժամ դառնում է ուշադիր յուրաքանչյուր արցունքին, որը թվում է, թե դիպչում է հանգուցյալի հոգուն: Նորից են հնչում անորշիբիմյան ձայները: Հեղինակը ցանկանում է հանդարտվել, բայց ըմբոստության ճիչ է արձակում: Աստիճանաբար գալիս է խաղաղումը, ճակատագրին հնազանդումը, մինչդեռ թաղման ակորդները պահպանում են տխրության մթնոլորտը»:

50

Musical score for Adagio triste. The score is in 4/4 time and features a key signature of three flats (B-flat, E-flat, A-flat). The tempo is marked 'ADAGIO TRISTE'. The piece begins with a piano (p) dynamic and a triplet of eighth notes in the right hand. The left hand provides a steady accompaniment. The score includes dynamic markings such as 'pp' (pianissimo), 'ppp' (pianissimissimo), and 'pp' (pianissimo) again. Performance instructions include 'Rall... et douloureux' and 'echo'. The score concludes with a final piano (p) dynamic.

#### 5. Lento doloroso

«Ա.Այնթապյանը շարունակում է դառնորեն արտասովել, քանի որ սիրելի հանգուցյալի հոգին գնում է դեպի հավիտենական կյանք. վերջնական բաժանման պահը եկել է, և Ա.Այնթապյանը հոգու համբարձվելը դեպի երկինք ներկայացնում է օդային, թեթև մեղեդիով, որն ավարտվում է հագիվ լսելի պիանիսիմոյով՝ հեղինակին թողնելով իր խորը վշտի հետ, որը չի անհետանում. այսպիսին է մահվան վշտալի առեղծվածը»:

51

Musical score for Lento doloroso. The score is in 4/4 time and features a key signature of three flats (B-flat, E-flat, A-flat). The tempo is marked 'LENTO DOLOROSO'. The piece begins with a piano (p) dynamic and a triplet of eighth notes in the right hand. The left hand provides a steady accompaniment. The score includes dynamic markings such as 'pp' (pianissimo), 'ppp' (pianissimissimo), and 'pp' (pianissimo) again. Performance instructions include 'echo douloureux' and 'echo douloureux'. The score concludes with a final piano (p) dynamic.

## 2.8. ԿՈՐՄՎԱԾ ԵՐՁԱՆԿՈՒԹՅՈՒՆ<sup>86</sup>

(Թույլ տվեք ինձ արտասպել)

Տևողությունը՝ 9 րոպե:

**Ա.Այնթապյանի հուզիչ ստեղծագործությունը՝  
նվիրված իր բժիշկ Ֆուադ Նիկոլա Հադդադին**

«Վիրաբուժական միջամտության պատճառով հեղինակն իրեն զգում է մահվան առեղծվածին դեմ-հանդիման, որը նրան անդադար հետապնդում է և ցավ պատճառում:

Այս հոգեվիճակն արտահայտելու համար Ա.Այնթապյանը ստեղծեց այս հուզիչ ստեղծագործությունը և այն նվիրեց բժիշկ Նիկոլա Հադդադին՝ որպես վկայություն հարգանքի և շնորհակալության, քանի որ բժիշկը փրկել է կոմպոզիտորի կյանքը:

«Bonheur perdu»-ն բացահայտում է հեղինակի դյուրազգացությունը և խորապես մարդկային զգացմունքները: Այս ստեղծագործությունը կատարելապես բացահայտում է հեղինակի խառնվածքը:

Ստեղծագործության մեջ Ա.Այնթապյանը պատկերացնում է իր հավերժական ճանապարհորդությունը դեպի վերջին հանգրվան և ծածուկ, անդադար արցունքներ է թափում իր բժշկի առջև, ով քաջությամբ նրան իր պատասխանատվության տակ է վերցրել:

Նա փորձում է հանդարտեցնել իր հիվանդին, բայց, ցավոք, ոչինչ չի կարող սփռվել հուսահատ սիրտը: Արցունքները կրկնապատկվում են և բերում են ներքին ըմբոստության, այն ժամանակ, երբ Ա.Այնթապյանը լսում է, ինչպես հեռավոր արձագանք, իր բժշկի անկեղծ ու զուսպ մխիթարանքը, որը հեղինակին վերադարձնում է ապրելու ուրախությունը:

Այսպիսին են այս ստեղծագործության արտահայտած տարբեր զգացմունքները<sup>87</sup>:

Ծրագրային «Bonheur perdu»-ն բաղկացած է վեց մասից:

Ստորև ներկայացնում ենք «Bonheur perdu»-ի ծրագիրը<sup>88</sup>:

<sup>86</sup> «Bonheur perdu», անթվակիր, ձեռագիր 5 թերթ, Գ.Ա.Թ., Ա.Այնթապյանի ֆոնդ N 2:

<sup>87</sup> Նյութեր Այնթապյանի մասին՝ ամփոփված հանդեսներում, 1974թ., 9 հունիսի, ֆրանս., տպ. 30 թերթ, Գ.Ա.Թ., Ա.Այնթապյանի ֆոնդ N 63: Ֆրանսերենից թարգմանությունը՝ Մարգարիտա Քամայանի:

<sup>88</sup> Ըստ Նյութեր Այնթապյանի մասին՝ ամփոփված հանդեսներում, 1974թ., 9 հունիսի,

1. Lento doloroso

«Տառապանքը անհանգստացնում է սիրտը: Արցունքները չեն դադարում»:

2. Andante melancolico

«Այս մասում հեղինակն ապստամբում է: Նա անճնատուր է լինում արցունքներին: Նա չի մխիթարվում: Նա ավարտում է այս մասը թաղման որոշ ակորդներով»:

3. Adagio triste

«Ա.Այնթապյանը շարունակում է դառն արցունքներ թափել: Անհանգստության զգացողություն: Իր վշտի խորությունը ցույց տալու համար հեղինակն այս մասն ավարտում է մռայլ սգո ակորդներով»:

4. Andante grave

«Այս մասում Ա.Այնթապյանն ըմբոստանում է ճակատագրի անարդարության դեմ: Արցունքները դառնում են հեծկլտոցներ: Վիրավոր սիրտ, հուսահատ վիճակ: Այս մասն ավարտվում է վշտալի ակորդներով»:

5. Lento pathetique

«Այս մասում Ա.Այնթապյանը հոգնություն է զգում շատ արտասվելուց: Յուրաքանչյուր արցունքը ցնցում է ու խոցում հեղինակի հոգին: Այդժամ թաղման ակորդները պահպանում են տխրության մթնոլորտը»:

6. Lento doloroso

«Ավելի ու ավելի հուզված՝ հեղինակը լալիս է իր «կորած երջանկության» համար և ավարտում է իր հուզիչ կոմպոզիցիան մռայլ սգո ակորդներով՝ մոտ Շոպենի թաղման քայլերգին, անսահման տխուր:

Եվս մեկ անգամ բժշկին իր շնորհակալությունը հայտնելու համար հեղինակն առաջարկում է նոր ստեղծագործություն հորինել՝ վերնագրելով այն «վերագտած երջանկություն» (ապրելու ուրախությունը), որը նա կնվիրի բժշկին և որտեղ նա ազատություն կտա իր զգացմունքներին»:

Շուտով կոմպոզիտորն իսկապես գրում է «Վերագտած երջանկությունը»՝ իր N 3 Ռ-ապստղիան:

Ի դեպ՝ «Bonheur perdu»-ի երաժշտության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այն, ըստ էության, «Sur une tombe»-ի տարբերակն է, որտեղ հեղինակն ընդամենը փոխել է որոշ մասերի դասավորությունը:

Ֆրանս., տպ. 30 թերթ, Գ-ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 63: Ֆրանսերենից թարգմանությունը՝ Մարգարիտա Քամայանի:



## 2.9. ՀՐԱԺԵՇՏԸ<sup>89</sup>

### Նվիրվում է նրանց, ովքեր սիրել են

«- Ամառային երեկո: երկինքը աստղապատ է: Հոգին լցվում է անբացատրելի ուրախությամբ և հավատով: Հավատում ես սիրուն, ցածր ձայնով շշուկով զգացմունքների անկեղծությանը:

- Այնտեղ ամեն ինչ կարգուկանոն է և գեղեցկություն, ճոխություն, անդորր և ցանկասիրություն:

#### ԲՈՂԼԵՐ

-Բայց ժամանակները սկսում են ոչնչացնել բացառիկ և անվերջանալի սիրո պատրանքը, դանդաղորեն անուրջը փշրվում է, տապալվում է:

Որքան գեղեցիկ էր երկինքը և մեծ հույսը:

- Սիրելի էակը հեռանում է: Խանդն է սողոսկում հոգու մեջ, որին գրկել են ամենամոլորական հույսերից: Արցունքներ են թափվում կորսված հույսի համար: Սուտ խոստումներ:

- Մի երեկոյի երազանք, մեկ օրվա հույս, ամեն ինչ շատ շուտ ավարտվեց: Սե՛ր, որտե՞ղ ես: Թե՞ միայն հույս ես, երազանք: Պետք է սիրել կամ ատել կամ լքել այն էակին, որին սիրել ենք և որը մեզ խաբել է:

- Պե՞տք է հավատալ թե՛ չհավատալ, ամեն ինչ մերժել, հավիտենական հրաժեշտով մնալ:

- Կամաց-կամաց հոգին հնազանդվում է և վերհիշում անցյալի խաղաղ օրերը: Միայն Աստվածը, իրական Մերը, իրական հույսն են վստահություն ներշնչում կյանքի հանդեպ: Բայց չնայած ամեն ինչի, հուսալքված սրտում ըմբոստություն է սկսվում<sup>90</sup>:

Ահավասիկ ստեղծագործության արտահայտած տարբեր զգացմունքները: «Մեզանից յուրաքանչյուրը կարող է գտնել այս նոտաներում իր հոգու մասնիկը՝ իր հույսերը, իր հուսախաբությունները, իր ըմբոստությունները, իր հավատն Աստծո հանդեպ»<sup>91</sup>:

«Les Adieux»-ն առաջին անգամ հնչել է 1957-ի հունիսի 14-ին Մալ-

<sup>89</sup> «Les Adieux», անթվակիր, ձեռագիր 6 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 12:

<sup>90</sup> Տե՛ս Ծրագիր, 1957թ., 14 հունիսի, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 50: Ֆրանսերենից թարգմանությունը՝ Մարգարիտա Քամալյանի:

<sup>91</sup> Տե՛ս Ծրագիր, 1957թ., 14 հունիսի, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 50:

վա Արի-Շաուդեի կատարմամբ<sup>92</sup>, 1963-ի հունիսի 21-ին այն նվագել է Աստրիդ Գալուստյանը<sup>93</sup>, իսկ 1971-ի ապրիլի 25-ի համերգը «Les Adieux»-ով է սկսել Անի Բոյաջյանը<sup>94</sup>:

Ստորև ներկայացնում ենք «Les Adieux»-ի ծրագիրը<sup>95</sup>:

1. Maestoso (լուրջ և տխուր)

«Ներածություն: Հավատ սիրո հանդեպ, ապրելու ուրախություն»:

52

2. Lento triste

«Միավորված սիրով հավատալով հավերժական երջանկությանը՝ նրանք խաբվում են»:

53

<sup>92</sup> Տե՛ս Programme, Ծրագիր, 1957թ., 14 հունիսի, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 50:

<sup>93</sup> Տե՛ս Programme, Ծրագիր, 1963թ., 2 հունիսի, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 54:

<sup>94</sup> Տե՛ս Programme, Նյութեր Այնթապյանի մասին՝ ամփոփված հանդեսներում, 1971թ., 25 ապրիլի, ֆրանս., տպ. 28 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 62:

<sup>95</sup> Տե՛ս Ծրագիր, 1957թ., 14 հունիսի, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 50: Ֆրանսերենից փարզմանությունը՝ Մարգարիտա Քամալյանի:

3. Adagio cantabile

«Փորձիրիկ է բարձրանում, և տեսարանները հաջորդում են միմյանց: Տառապանքը կրծում է սիրտը: Արցունքները հեղվում են»:

54

4. Presto

Ճակատագրի հեզմանք: Կեղծ խոստումներ:

55

5. Andante melancolico (Reverie)

«Յավալի հուսախարություն: Դառն արցունքներ: Վիրավոր սիրտ»:

56

6. Adagio triste Les (Adieux) - Հրաժեշտը:

«Վերջնական բաժանման մասին հայտարարություն»:

57

### 7. Adagio et Presto

«Ճակատագրի անարդարության դեմ ընթրատությանը հետևում է աստվածային ներշնչանքը և ցավ պատճառող խաղաղությունը»:

58

Երրորդ մասը՝ Adagio cantabile-ն, կառուցված է Նախաբանի թեմատիկ կորիզի վրա: Այստեղ 2/4-ի փոխարեն՝ 4/4 է, երաժշտությունը ծավալվում է կրկնակի դանդաղ: Բացի այդ՝ նվագակցության մեջ ի հայտ է գալիս թաքնված երկձայնությունը:

Վեցերորդ մասում՝ Adagio triste, կրկնվում է երրորդ մասը՝ Adagio cantabile-ն: Տարածության վրա ստեղծվում են թեմատիկ կամարներ:

94



## 2.10. ՄՆԻԹԱՐՈՒԹՅՈՒՆ<sup>96</sup>

### Նվիրված է իր աշակերտուհի տիկին Կլոդ Չոզզոզիին (օրհորդական ազգանունը՝ Սալվա Աբի-Շաուդե)

1956-ի մայիսի 28-ին տեղի է ունենում Ա.Այնթապյանի շնորհալի սաներից մեկի՝ Սալվա Աբի-Շաուդեի մենահամերգը, որի ընթացքում առաջին անգամ հնչում է կոմպոզիտորի «Consolation» ստեղծագործությունը<sup>97</sup> նվիրված հենց առաջին կատարողին: Հետագայում «Consolation»-ը կատարվել է բազմիցս՝ 1962-ի հունիսի 17-ին՝ Սոսի Պակլայանի<sup>98</sup>, 1964-ի հունիսի 14-ին՝ Արփինե Իփրանոսյանի<sup>99</sup>, իսկ 1969-ի հունիսի 15-ին՝ Պերլ Միսկի<sup>100</sup> կատարմամբ:

Մի շարք հեղինակավոր բժիշկների հետ խորհրդակցելուց հետո Ա.Այնթապյանը գիտակցում է, որ իր առողջությունը վերականգնելու համար անհրաժեշտ է վիրաբուժական միջամտություն: «Ազդված այս պատահականությունից՝ հեղինակն ընկճվում է և հուսահատվում: Այդժամ նրա սաներից մեկը փորձում է նրան մխիթարել՝ արտասվում է հեկեկացող ուսուցչի հետ: Բայց իրադարձությունները զարգանում են. անհրաժեշտ է, որպեսզի կոմպոզիտորը գնա հիվանդանոց, և աստիճաններով բարձրանալիս սկսվում է ցավը: Այնուհետև արհեստական մահվան բերող ցավազրկումը մեղմում է ցավը, հետո արթնացումն է, երբ օրորվում ես ինչպես նավում, և ըմբոստություն, երբ հասկանում ես, որ գիշերները ցերեկներից հետո չեն բերում ապաքինում և երկարացնում են անկողնում ժամանակավոր կեցությունը: Վերջապես գալիս է այդքան սպասված օրը, երբ հեղինակը լքում է հիվանդանոցը՝ վերադառնալու դեպի լուսավոր կյանք, որը նա, այնուամենայնիվ, վերագտավ:

Այսպիսով, նա հասկացավ, որ մահվան դեմ իր պատերազմում,

<sup>96</sup> «Consolation», անթվակիր, ձեռագիր 5 թերթ, 5 թերթ, ընդ.՝ 10 թերթ, 2 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 4:

<sup>97</sup> Տե՛ս Ծրագիր, 1956թ., 28 մայիսի, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 49:

<sup>98</sup> Տե՛ս Ծրագիր, 1962թ., 17 հունիսի, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 53:

<sup>99</sup> Տե՛ս Ծրագիր, 1964թ., 14 հունիսի, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 55:

<sup>100</sup> Տե՛ս Programme, Նյութեր Այնթապյանի մասին՝ ամփոփված հանդեսներում, 1969թ., 15 հունիսի, ֆրանս., տպ. 28 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 60:

անհանգստության դժվար պահերին իրեն օգնել է իր աշակերտի սփոփանքը»<sup>101</sup>:

Ստորև ներկայացնում ենք «Consolation»-ի ծրագիրը<sup>102</sup>:

1. Ներածություն

«Իր ցավի պատճառը հասկանալու համար հիվանդ և անհանգիստ հեղինակը խորհրդակցում է մի քանի բժիշկների հետ»:

59

MAESTOSO (introduction)

The image shows a handwritten musical score for the introduction of 'Consolation'. It is in B-flat major (two flats) and 4/4 time. The tempo is marked 'MAESTOSO (introduction)'. The score consists of three systems of music. The first system has dynamics of piano (p), mezzo-piano (mp), and piano (p), with a 'Rall...' marking. The second system has dynamics of piano (p) and mezzo-piano (mp), with an 'e tempo' marking. The third system has dynamics of sforzando (sf) and piano (p), with a 'Rall...' marking. The score includes various musical notations such as notes, rests, and slurs.

2. Lento melancolico

«Աշակերտը գալիս է մխիթարելու իր ուսուցչին և նրա տխրությունը տեսնելիս ուսուցչի արցունքներին է միախառնում իր արցունքները: Ազդված սփոփանքի այս ժեստից՝ հեղինակը բարձրաձայն հեկեկում է»:

<sup>101</sup> Տես Ծրագիր, 1956թ., 28 մայիսի, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 49: Ֆրանսերենից թարգմանությունը՝ Մարգարիտա Քամալյանի:

<sup>102</sup> Նույն տեղում:



*LENTO MALINCONICO*

The musical score for page 60 is written for piano and bass. It begins with the tempo marking *LENTO MALINCONICO* and a 2/4 time signature. The key signature has two flats. The score includes several measures with dynamics such as *p* (piano), *pp* (pianissimo), and *ppp* (pianississimo). There are also markings for *rall.* (rallentando) and *a tempo*. The piece concludes with a series of chords in the piano part.

## 3. Presto

«Յավոր, պետք է հնազանդվել, և հյուրանոցի աստիճաններն այս հուսահատված էակի համար տառապանք են»:

*PRESTO*

The musical score for page 61 is marked *PRESTO* and is in 2/4 time with two flats in the key signature. It features a fast, rhythmic melody in the piano part and a supporting bass line. Dynamics include *sf* (sforzando) and *ss* (sottissimo). The score includes articulation markings such as *crast* and *accabl*. The piece ends with a final chord in the piano part.

4. Andante doloroso

«Անհրաժեշտ է վիրահատությունը, բոլոր կասկածներն արդարացված են: Հեղինակը մահացու տխուր է»:

62

Musical score for 'Andante doloroso'. The score is in G major (one flat) and 3/4 time. It consists of two systems of staves. The first system has two staves (treble and bass clef). The second system has two staves (treble and bass clef). The tempo is marked 'ANDANTE DOLOROSO'. Dynamics include *p*, *pp*, and *f*. There are slurs and accents throughout. A section marked '8-measure rest: ADAGIO (chacane)' is indicated.

5. Adagio

«Օրորոցային: Ցավազրկման քաղցրությունը և արթնանալուց հետո օրորում բթացումից, այնուհետև ընթրատություն, քանի որ հիվանդության սրացման պատճառով մի քանի շաբաթների ընթացքում գամվում է անկողնուն»:

63

Musical score for 'Adagio'. The score is in G major (one flat) and 3/4 time. It consists of three systems of staves. The first system has two staves (treble and bass clef). The second system has two staves (treble and bass clef). The third system has two staves (treble and bass clef). The tempo is marked '8-measure rest: ADAGIO (chacane)'. Dynamics include *pp*, *p*, and *m*. There are slurs and accents throughout.

98

## 6. Prestissimo

«Վերջապես եկավ այնքան սպասված ապաքինման և տանջանքի այս վայրից հեռանալու օրը: Ահա լուսավոր օրը, որը հեղինակին բերում է իր աստվածային սփոփանքը: Օ, սփոփանք, աստվածային ծաղիկ, որի բուրմունքը օգնում է մեզ դիմադրելու ցավին»:

64

## 2.11. ՌԱՊՍՈՂԻԻԱՆԵՐ

Ա.Այնթապլյանի արիվում գտնվում է չորս ռապսոդիա, որոնք կարելի է միավորել ռապսոդիաների շարքում: Դրանք են՝

> «Ռապսոդիա N 1»-ը<sup>103</sup>, որն Ա.Այնթապլյանը նվիրել է Փարիզի հայտնի փաստաբան Թեոդոր Վալենսին: Այն ներշնչվել է և ստեղծվել Ֆոնտենբլոյի հիասքանչ միջավայրում<sup>104</sup>: Ռապսոդիան հնչել է 1962-ի հունիսի 17-ին, Մոսի Պակլայանի կատարմամբ<sup>105</sup>, իսկ 1969-ի հունիսի 15-ի համերգի երկրորդ բաժնում այն նվագել է Մոնա Ջաքարիան<sup>106</sup>:

<sup>103</sup> Rhapsodie N 1, անթվակիր, ձեռագիր 5 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապլյանի ֆոնդ N 15:

<sup>104</sup> Տե՛ս **Louis Checrallah**, Aroussiak Aintablian, «Le Soir», 28.04.1967.

<sup>105</sup> Տե՛ս Ծրագիր, 1962թ., 17 հունիսի, Գ.ԱԹ, Ա.Այնթապլյանի ֆոնդ N 53:

<sup>106</sup> Տե՛ս Programme, Նյութեր Այնթապլյանի մասին՝ ամփոփված հանդեսներում, 1969թ., 15 հունիսի, ֆրանս., տպ. 28 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապլյանի ֆոնդ N 60:

- «Ռապսոդիա N 2»<sup>107</sup>
- «Ռապսոդիա N 3» (Bonheur retrouvé)<sup>108</sup> - «Վերագտած երջանկություն»
- «Ռապսոդիա N 3» (Rêve poétique)<sup>109</sup> - «Բանաստեղծական երագ»
- Ռապսոդիա<sup>110</sup>, որը համարակալված չէ<sup>111</sup>:

## Ռապսոդիա N 2<sup>112</sup>,

### Հաղթական հանդիսավոր ստեղծագործություն՝ նվիրված հարգարժան Մայր Վինսեն դը Փոլին...

«Իր ստեղծագործական երկար կարիերայի ընթացքում Ա.Այնթապյանն ստեղծել է բազմաքանակ և բազմապիսի ստեղծագործություններ: Դրանք աչքի են ընկնում հմայիչ թեմաների առատությամբ, զարգացման հարստությամբ, հարմոնիայի պարզությամբ: Նման պատկերացում կարելի է կազմել Ռապսոդիա N 2 ունկնդրելիս:

Ա.Այնթապյանը երաժշտության միջոցով արտահայտում է իր ապրած դրաման, թարգմանում իր տանջված և հուսախաբ հոգու զգացմունքները: Բայց այդ «գիշերը» անհետանում է ուրախությամբ՝ տեղը զիջելով պայծառ լուսաբացին, վերածննդին, որն անհետացնում է նրա մղձավանջը, խաղաղեցնում նրա հոգին: Նրա համարձակությունը վերածնվում է:

Ռապսոդիա N 2-ը սկսվում է կոպիտ և խճճված ակորդներով՝ արտահայտելով վշտալի իրավիճակը: Դանդաղ, ցածր նոտաները, մռայլ

<sup>107</sup> Rhapsodie N 2, 1963թ., կից՝ ստեղծագործության համառոտագրություն, ձեռագիր 10 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 16:

<sup>108</sup> Rhapsodie N 3 (Bonheur retrouvé), անթվակիր, ձեռագիր 9 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 17:

<sup>109</sup> Rhapsodie N 3 (Rêve poétique), անթվակիր, ձեռագիր 11 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 18:

<sup>110</sup> Rhapsodie, 1974թ., ձեռագիր 4 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 19:

<sup>111</sup> Ամենայն հավանականությամբ, այս Ռապսոդիան ստեղծվել է մյուսներից ավելի ուշ, և հերթական համարը պիտի ունենար:

<sup>112</sup> Rhapsodie N 2, 1963թ., կից՝ ստեղծագործության համառոտագրություն, ձեռագիր 10 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 16:



Ֆրագները պարզ արտահայտում են հեղինակի շփոթմունքը: Անհանգիստ է նրա հոգին՝ միաժամանակ տենդալից և խռովահույզ: Հետո հեղինակը մաքուր և ազնիվ հոգու վստահելու կարիք է զգում: Հրաշալի կերպով օգնություն է հասնում՝ թեթևացնելով նրա հոգին, վեափոխելով նրա գոյությունը: Նա զգում է մեծ ուրախություն... Այսպես, նրա բազում տանջանքներն առիթ են դառնում նրա երաժշտական արվեստն իր արտահայտչական ողջ հարստությամբ արտահայտելու համար»<sup>113</sup>:

Ռապսոդիան առաջին անգամ հնչել է 1963-ի հունիսի 2-ին, Սոսի Պակլայանի կատարմամբ<sup>114</sup>: 1968-ի մայիսի 19-ի համերգի առաջին բաժնում այն նվագել է Արփինե Իփրանոսյանը<sup>115</sup>, իսկ 1974-ի հունիսի 9-ի համերգի առաջին բաժնում՝ Մոնա Չաքարիան <sup>116</sup>:

Ռապսոդիա N 2-ը ծրագրային է և բաղկացած է 9 մասից:

Ստորև ներկայացնում ենք Ռապսոդիա N 2-ի ծրագիրը<sup>117</sup>:

1. Allegro – Molto moderato (Introduction - Կերածություն)

«Վճռականության պահ, քանի որ հեղինակը որոշել է վերջ դնել իր կասկածներին»:

65

<sup>113</sup> Տե՛ս Ծրագիր, 1963թ., 2 հունիսի, Գ-ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 54: Ֆրանսերենից թարգմանությունը՝ Մարգարիտա Քամալյանի:

<sup>114</sup> Տե՛ս Ծրագիր, 1963թ., 2 հունիսի, Գ-ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 54:

<sup>115</sup> Տե՛ս Programme, Նյութեր Այնթապյանի մասին՝ ամփոփված հանդեսներում, 1968թ., 19 մայիսի, ֆրանս., տպ. 17 թերթ, Գ-ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 61:

<sup>116</sup> Տե՛ս Programme, Նյութեր Այնթապյանի մասին՝ ամփոփված հանդեսներում, 1974թ., 9 հունիսի, ֆրանս., տպ. 30 թերթ, Գ-ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 63:

<sup>117</sup> Ըստ՝ Ծրագիր, 1963թ., 2 հունիսի, Գ-ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 54: Ֆրանսերենից թարգմանությունը՝ Մարգարիտա Քամալյանի:

*cresc. e string. poco a poco*

2. Andante triste

«Անհանգստության զգացողությունը շարունակվում է...»

66

ANDANTE TRISTE

*p*, *pp*, *ppp*

3. Adagio

«Մեծ սրտով Ա.Այնթապյանը հաղորդակից է դարձնում իր ցավերին... Կրքոտ, հաճախ ընդհատուն ուրիշ և վշտալի շեշտ, որը թարգմանում է ներքին պայքարը և խորին տխրությունը»:

67

ADAGIO

*ppp*, *pp*, *ppp*, *p*

102



4. Andante grave – (à la marcia funèbre)

«Ավելի ու ավելի հուզված հեղինակը հիշում է իր բազմաթիվ դժբախտությունները... տխուր, դանդաղ, գրեթե թաղման էջ, որն արտահայտում է մի տեսակ տառապանքի կամ հուսահատությունը»:

68



5. Presto

«Եվ այժմ այս վիրավոր սիրտը ստանում է անհրաժեշտ թեթևությունը: Քաջալերում և վստահելի խոստում՝ արված նշանավոր հոգու ազնվությամբ»:



69

Handwritten musical score for page 69. The score is in 3/4 time and consists of three systems. The key signature has three flats (B-flat, E-flat, A-flat). The first system includes a piano section with a forte (f) dynamic and a presto section with a fortissimo (fff) dynamic. The second system is marked piano (p). The third system is also marked piano (p) and ends with a double bar line.

6. Allegro

«Այսպիսով, հեղինակը զարմանքով է իրականացնում բարեգործական անակնկալը: Թեման ցուցադրվում է ռիթմի հետ միաժամանակ, որը շատ նրբագեղ վալսի ռիթմ է»:


7. Allegro – Presto – Prestissimo (Valse dansante - վալս է պարային)

«Հեղինակին համակած մեծ ուրախությունը վերացնում է անհանգստության բոլոր հետքերը: Ցատկոտող ռիթմ»:

70

Handwritten musical score for page 70. The score is in 3/4 time and consists of two systems. The key signature has one sharp (F-sharp). The tempo marking is Allegro. The first system includes a piano section with a fortissimo (fff) dynamic. The second system continues the piece with various chordal textures.

104



8. Lento triste (Rêverie - Երազանք)

«Բայց ահա հեղինակի երազկոտ հոգին սկսում է լսել ինքն իրեն: Կարճ վերադարձ դեպի մռայլ անցյալը: Երազ, որը զարգանում է դյուֆիչ կերպով»:


71



9. Allegro animato (Renaissance - Վերածնունդ)

«Վերածնունդ, որը թարգմանում է անմիջական շտապ զարթոնքը: Վերագտած խաղաղության և հրճվանքի զգացողություն: Ֆինալում աշխույժ կենդանություն»:

72



2.12. CHATTI YA DINYI<sup>118</sup>

Ա.Այնթապյանի դաշնամուրային ստեղծագործության ուշագրավ էջն է նրա անդրադարձը արաբական ժողովրդական երաժշտության մեղեդիներին:

Հրնթացս Ա.Այնթապյանի սաների 1963-ի հունիսի 2-ի համերգի Աստրիդ Գալուստյանը ներկայացնում է «Chatti ya dinyi»-ն<sup>119</sup>: 1964-ի հունիսի 14-ի համերգին Աստրիդ Գալուստյանի կատարմամբ հնչում են արաբական դաբկեների այնթապյանական փոխադրումները դաշնամուրի համար՝ «Chatti ya dinyi»-ն և «Ya Ghzayel»-ը<sup>120</sup>: Մեկ տարի

<sup>118</sup> «Chatti ya dinyi», անթվակիր, ձեռագիր 9 թերթ, 5 թերթ, 2 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 3:

<sup>119</sup> Տե՛ս Ծրագիր, 1963թ., 2 հունիսի, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 54:

<sup>120</sup> Տե՛ս Ծրագիր, 1964թ., 14 հունիսի, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 55:

անց՝ 1965-ի հունիսի 13 համերգի ժամանակ Ժակլին Մասուդը նվագում է «Chatti ya dinyi»-ն, իսկ Սոնա Դուզջանը՝ «Ya Ghzayel»-ը<sup>121</sup>: 1969-ի հունիսի 15-ի համերգի առաջին բաժնում Ժակլին Մասուդը կրկին հանդես է գալիս «Chatti ya dinyi»-ի կատարմամբ<sup>122</sup>:

«Երկրի հոգին թրթռում է ժողովրդական պարերում և երգերում: Լիբանանյան ֆոլկլորը մի քանի տարի է, ինչ զգայուն կերպով զարգանում է: Լուրջ ջանքեր են ձեռնարկվում՝ այն ամենուր ճանաչված դարձնելու ուղղությամբ:

Դաշնակահար և կոմպոզիտոր Ա.Այնթապյանը չի կարող անտարբեր մնալ նորարարական այս շարժման հանդեպ: Սեր ունենալով ժողովրդական մեղեդիների հանդեպ՝ նա որոշել է շատ զգայուն կերպով դաշնամուրի համար փոխադրել «Դաբկեն» («dabké»), որն այս ֆոլկլորի լավագույն արտահայտչանական է: Այն նկարչագեղ և հմայիչ, սիրելի Լիբանանի արտացոլանքն է:

Նշենք, որ ստեղծագործության ամբողջ հմայքը իրար հարևանող երկու՝ Հայկական-Լիբանանյան միտումների նրբաճաշակ, հիասքանչ միախառնումն է: Դրանք բնութագրական թեմաների և ռիթմերի վարիացիաներ են, որոնք հիշեցնում են Արևելքի ճոխ գեղեցկությունը»<sup>123</sup>:

---

<sup>121</sup> Տե՛ս Ծրագիր, 1963թ., 2 հունիսի, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 54:

<sup>122</sup> Տե՛ս Programme, Նյութեր Այնթապյանի մասին՝ ամփոփված հանդեսներում, 1969թ., 15 հունիսի, ֆրանս., տպ. 28 թերթ, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 60:

<sup>123</sup> Տե՛ս Ծրագիր, 1963թ., 2 հունիսի, ԳԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 54: Ֆրանսերենից փարզմանությունը՝ Մարգարիտա Քամալյանի:

## ՎԵՐՁԱԲԱՆ

Սիրելի ընթերցող:

Շնորհակալ եմ, որ համբերատար ընթերցեցիր լիբանանահայ կոմպոզիտոր, դաշնակահարուհի, մանկավարժ և երաժշտական-հասարակական գործիչ Արուսյակ Այնթապյանի ստեղծագործությանը նվիրված համառոտ ակնարկը:

➤ Հումանիստական ուղղվածությամբ է առանձնանում Ա.Այնթապյանի ստեղծագործության գաղափարական բովանդակությունը: Նրա ուշադրության կենտրոնում են գտնվել մարդկության ապագայի հետ կապված համամարդկային թեմաներ: Առաջին հերթին՝ խաղաղության թեման՝ «La Paix» («Խաղաղություն»)՝ նվիրված ՄԱԿ գլխավոր քարտուղար ՈՒ Թանին (1968) և «Bénédiction Papale au Liban» («Պապի օրհնությունը Լիբանանում»)՝ նվիրված Հռոմի 262-րդ պապ Պողոս VI-ին (1965): Հումանիստ կոմպոզիտորն իր բողոքի ձայնն է բարձրացնում հումանիզմի հակոտնյաների դեմ. մի դեպքում նա դատապարտում է պատերազմները՝ «Homage» («Հարգանքի տուրք»)՝ նվիրված Շառլ դը Գոլին (1969), մյուս դեպքում՝ ահաբեկչությունը՝ «La Tragédie de Dallas» («Դալասի ողբերգությունը»)՝ նվիրված ԱՄՆ 35-րդ պրեզիդենտ Ջոն Ֆիցջերալդ Քենեդու հիշատակին (1963): Միևնույն ժամանակ կոմպոզիտորին ոգևորում են մարդկության գիտական մտքի նվաճումները՝ «Odysseé Spatiale» («Տիեզերական ոդիսական», 1970): Պատահական չէ, որ դեռևս Ա.Այնթապյանի կենդանության օրոք նշվել է, թե՛ «իր մօտ շեշտուող նկարագրի ամենէն զորաւոր գիծն է մարդկայինը: Եւ որովհետեւ իսկական արուեստը ցեղի, կրօնքի եւ ազգութեան ստեղծած կաշկանդումները յաճախ կ'անտեսէ, Արուսեակ Այնթապլեան ներշնչուած է միջազգային առում ունեցող նիւթերով եւ դէպքերով, որոնք մօտիկ են մարդկային հոգիին»<sup>1</sup>: Պատասխանելով թղթակցի «Ի՞նչ ձեռով կը յօրինէք ձեր երաժշտական կտորները» հարցին նա խոստովանել է՝ «Անոնք ինձի կը ներկայանան վայրկենական ներշնչումով մը, զոր անմիջապէս թուղթին պէտք է յանձնուի: Նիւթի մը մասին երկար ժամանակ մտածելով չէ որ ներշնչումը կը հրաւիրեմ, այլ ան կուգայ

<sup>1</sup> **Գոճայեան Աստղիկ**, Արուսեակ Այնթապլեանի հետ, Թերթից կտրուկներ, Անթվակիր, հայերեն, տպագիր 13 թերթ, 7 փաթեթ, Գ.Ա.Թ, Արուսյակ Այնթապյանի ֆոնդ N 66:

յանկարծ եւ ես անոր ձեռն ու մարմին կուտամ դաշնակիս վրայ փորձելով զանազան երաժշտական նախադասութիւններ եւ պարբերութիւններ»<sup>2</sup>:

➤ Յավոք, Ա.Այնթապլյանի դաշնամուրային ստեղծագործության մեջ չկա անդրադարձ հայկական թեմաներին: Ի պատասխան թղթակցի «հետաքրքիր է իմանալ թէ երբեք չե՞ք ներշնչուած ազգային դէպքով մը, ըլլայ այդ պատմական թէ այժմէական, եւ կամ կը ծրագրէ՞ք նման կտոր մը յօրինել» պրոֆեսորը խոստովանել է. «Շատեր ուղղած են ինձի այդ հարցումը, նոյնիսկ առաջարկուեցաւ Մեծ Եղեռնի յիշատակին յօրինել երաժշտական գործ մը: Սակայն ինչպէս արդէն յիշեցի, սպասարանքի վրայ եւ կամ դիտումնաւոր կերպով չեմ կրնար ընել այդ եւ թէ ներշնչումը ինքն է որ պիտի գայ զիս աշխատանքի լծուելու: Դիշդ է որ ներշնչումի աղբիւրներ չեն պակսիր հայ իրականութեան մէջ եւ վստահ եմ թէ գեղեցիկ օր մը պիտի կարենամ ժողովուրդիս նուիրել իմ հայրու զգացումներուս հաւաստիքը»<sup>3</sup>:

➤ Փայլուն դաշնակահարուի ու հմուտ մանկավարժի՝ պրոֆեսոր Ա.Այնթապլյանի ստեղծագործական հետաքրքրությունների կենտրոնում հարատւ գտնվել է դաշնամուրը, որին է վստահել իր հույզերն ու ապրումները: Եվ դա պատահական չէ՝ Փարիզում Ալֆրեդ Կորտոյի դեկավարությամբ իր երաժշտական կրթությունն ավարտած կոմպոզիտորը հետագայում խոստովանել է, թե «Հոն էր նաեւ որ ձեռն ու մարմին առաւ յօրինողի ոճս որը յստակօրէն Շոբենիստ է եւ հետեւաբար սանթիմանթալ ու րոմանթիք»<sup>4</sup>: Եվ ինչպէս Շոպենը, այնպէս էլ Ա.Այնթապլյանն իր ստեղծագործությանն մեջ սահմանափակվեց դաշնամուրով:

➤ Հարուստ ու բազմազան է Ա.Այնթապլյանի գեղարվեստական աշխարհը. մի կողմից՝ խոր հոգեբանականություն ու նուրբ լիրիզմ, մյուս կողմից՝ ռեալ իրականություն: Դաշնամուրային ստեղծագործություններում գերակշռում են մի կողմից՝ սիրո, մյուս կողմից՝ տխրության, թախծի, բաժանման, մահվան մոտիվները: Ավելին՝ Ջոն Քենեդու հիշատակին է նվիրել «Դալասի ողբերգությունը», իսկ իր վաղամեռիկ եղբոր հիշատակին՝ «Շիրմի վրա»-ն և «Արցունքները»:

➤ Ա.Այնթապլյանն իրեն իրավացիորէն համարել է ռոմանտիզմի ներկայացուցիչ: Պատասխանելով Աստղիկ Գոճայանի «Արուեստի

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում:



քննադատներու կարծիքը ի՞նչ է ձեր ոճին նկատմամբ» հարցին՝ պրոֆեսորն ասել է՝ «Անոնք հազուադիտ կը նկատեն զայն, մանաւանդ այս դարուս, ուր կը տիրէ իրապաշտն ու գերիբապաշտը: Գիշդ այս պատճառով էր որ երբ վերջերս Բարիզի մէջ երաժշտասէրներու եւ արուեստագէտներու խումբ մը ունկնդրեց «Տալլասի Ողբերգութիւն»ն ու յօրինումներէս մի քանին, անակնկալի եկած 19-րդ դարու պատկանող այդ զգացական մօտեցումէն, ինծի առաջարկուեցաւ տրամադրել վիլլա մը, ուր պիտի մնայի երկու ամիս եւ եղանակներ յօրինելի շարք մը բովանդակութիւններու: Ընդունեցի. քաշուեցայ բնութեան այդ խաղաղ անկիւնը եւ գործի լծուեցայ: Մի քանի օր վերջ արդէն աւարտած էին աշխատանքս»<sup>5</sup>: Ուստի միանգամայն տրամաբանական է, որ իր ստեղծագործություններում նա մեծ տեղ է հատկացրել ծրագրայնությանը, ընդ որում՝ մի դեպքում ընդհանրացված, այսինքն՝ վերնագրված է միայն պիեսը, ինչպես, օրինակ, «Տխրություն», «Ափսոսանք», «Բաժանում», Ջորջ Այնթապլյանի հիշատակին նվիրված «Արցունքները» և այլն, ինչպես նաև գործեր երկու դաշնամուրի համար՝ «Հուշ», «Միայն քեզ համար» և այլն, իսկ մյուս դեպքում առկա է ստեղծագործության ծավալուն սյուժե՝ «Hymne au Liban» («Ձոն Լիբանանին»)՝ նվիրված Լիբանանի Հանրապետության նախագահ Շառլ Հելուին, «La Paix» («Խաղաղություն»)՝ նվիրված ՄԱԿ գլխավոր քարտուղար ՈՒ Թանին, «La Tragédie de Dallas» («Դալասի ողբերգությունը»)՝ նվիրված ԱՄՆ 35-րդ պրեզիդենտ Ջոն Ֆիցջերալդ Բենեդու հիշատակին, «Sur une tombe» («Շիրմի մոտ»)՝ նվիրված եղբոր հիշատակին, «Hommage» («Հարգանքի տուրք»)՝ նվիրված Շառլ դը Գոլին, «Odysseé Spatiale» («Տիեզերական ոդիսական»), «Bonheur perdu» («Կորսված երջանկություն», Թույլ տվեք ինձ արտասվել)՝ նվիրված իր բժիշկ Ֆուադ Նիկոլա Հադդադին, «Consolation» («Մխիթարություն»), «Les Adieux» («Հրաժեշտը»)՝ նվիրված նրանց, ովքեր սիրել են: Որոշ դեպքերում նշում է միայն ժանրը՝ Ֆանտազիա, Ռասսոդիա և այլն:

➤ Ա.Այնթապլյանը ժամանակի պետական, քաղաքական, հոգևոր և այլ հզոր դեմքերին՝ Լիբանանի պրեզիդենտ Շառլ Հելուին, ՄԱԿ գլխավոր քարտուղար ՈՒ Թանին, Շառլ դը Գոլին, Հռոմի Պողոս VI Պապին է ընծայել իր գործերը:

➤ Լիբանանի հավատարիմ քաղաքացին անդրադարձել է լիբա-

<sup>5</sup> Նույն տեղում:



նանյան ժողովրդական դաբլեներին՝ դրանք մշակելով դաշնամուրի և երկու դաշնամուրի համար՝ «Chatti ya dinnyi» և «Debki N 2» («Ya Ghzayel»), գրել «Չոն Լիբանանին», «Լիբանանի ողբերգությունը», «Մաիդ Աբլ» և «Պապի օրհնությունը Լիբանանում» և այլն:

➤ Մելոդիկայում միահյուսված են վոկալայնությունն ու գործիքայնությունը, երգայնությունն ու պարայնությունը (վալս, տանգո), կանտիլենան և ասերգը: Ի դեպ՝ թեև նրա դաշնամուրային պիեսների պահպանված ձեռագրերում չենք հանդիպում վալսի, և հայտնի է, որ 1965թ. հունիսի 13-ի համերգի ժամանակ Արտեմիս Դելենյանի նվագել է կոմպոզիտորի «Grand Valse Brillante»-ն, սակայն նրա բազմամաս գործերում բազմաթիվ են որպես առանձին բաժին վալսի կիրառման դեպքերը: Այսպես՝

«**Bénédiction Papale au Liban**» - 5-րդ մասում (Allegro animato)

9-րդ մասում (Moderato)

11-րդ մասում (Presto)

12-րդ մասում (Prestissimo)

«**La Paix**» - 6-րդ մասում՝ Allegro (Tempo di Valse)

«**Hommage**» - Մաս երկրորդ - N 3, Allegro animato (Tempo di Valse: espoir - Հույս)

Մաս երրորդ - N 4, Allegro vivace (Tempo di Valse: combat - Մարտ)

N 6, Presto Prestissimo (Valse sautillante:

Victoire - Ցատկոտող վալս. Հաղթանակ)

**Rhapsodie N 2** - Վալս a-moll

**Rhapsodie N 3 (Bonheur retrouvé)** - Վալս cis-moll

**Rhapsodie N 3 (Rêve poétique)** - Վալս cis-moll:

➤ Լադահարմոնիկ տեսակետից՝ զարմանալիորեն նրա գրեթե ողջ ստեղծագործությունը գրված է մինորում՝

«Չոն Լիբանանին», «Հարգանքի տուրք», «Խաղաղությունը», Ռ-ապտոդիա N 1, «Ափսոսանք», «Հուշ» և այլն՝ c-moll,

«Մխիթարություն», «Գալասի ողբերգությունը», «Արցունքները», «Բաժանում»՝ f-moll,

«Կորսված երջանկություն», «Շիրմի վրա»՝ es-moll,

«Հրաժեշտը», Ռ-ապտոդիա N 2՝ b-moll,

Ռ-ապտոդիան, N 3 երկու Ռ-ապտոդիաները՝ cis-moll,

«Տխրություն»՝ fis-moll և այլն:

Ընդ որում, ստեղծագործության ամբողջ ընթացքում պահպանելով միևնույն տոնայնությունը՝ ստեղծում է կուռ ու ամբողջական դրամատուրգիա: Առանձին մասերի միջև հակադրություն ու տարաբնույթ կերպարներ ստեղծելիս չի դիմում լադային կոնտրաստներին, մաժոր հատվածներ չկան: Օգտագործում է ռեգիստրային և ֆակտուրային հնարներ:

➤ Ա.Այնթապլյանի ստեղծագործության միջով կարմիր թելի պես անցնում է բնական միևնորի վերին տետրախորդը՝ վարընթաց շարժմամբ, որը բազմազան կիրառմամբ ստեղծում է տարբեր կերպարներ:

➤ Լինելով փայլուն դաշնակահար՝ Ա.Այնթապլյանը բացահայտեց դաշնամուրային ֆակտուրայի հարուստ հնարավորությունները: Նրա գործերն ընդգրկում են գործիքի ողջ դիապազոնը: Հանդիպում են ֆիգուրացիոն թեմատիզմի արտահայտիչ նմուշներ: Ա.Այնթապլյանի դաշնամուրային ոճն առանձնանում է մեղեդայնությամբ, ճկունությամբ՝ դաշնակահարից պահանջելով վիրտուոզություն: Հաճախ կոմպոզիտորը դաշնամուրը մեկնաբանում է որպես նվագախումբ՝ վերարտադրելով նվագախմբային հնչողություն:

➤ Ա.Այնթապլյանի դաշնամուրային ստեղծագործության ժանրերն ու ձևերը ռոմանտիզմի հունում են: Կոմպոզիտորի մոտ հավասարաչափ տեղ են գրավում ինչպես մանրանվագը, այնպես էլ խոշոր՝ մեկմասանի կամ ցիկլիկ ձևը: Ընդ որում՝ բազմամաս ձևերն օժտված են միջանցիկ զարգացմամբ, երբեմն հանդիպում են մոնոթեմատիզմի կիրառման դեպքեր, թեմատիկ կամարներ:

#### **Հ. Գ.**

Յուրաքանչյուր կոմպոզիտոր ապրում է ճիշտ այնքան, որքան հնչում է նրա երաժշտությունը, իսկ երաժշտությունը հնչում է այն դեպքում, եթե հրատարակված են նոտաները:

Ուստի կարծում ենք, որ անհրաժեշտ է վերջապես մոռացության փոշուց թոթափել Ա.Այնթապլյանի երաժշտությունը՝ հրատարակել նրա ստեղծագործությունները, որոնք գերազանցապես անտիպ՝ ժամանակին մեծ ժողովրդականություն են վայելել ու կատարվել, իսկ այսօր մեզ անհայտ են:

Դա կարևոր քայլ կլինի Ա.Այնթապլյանի ստեղծագործության վերածննդի ճանապարհին, որովհետև դրանից հետո միայն հնարավոր

կղառնա դրանց կատարումը հայ և օտար երաժիշտների կողմից:

Իսկ մինչ այդ...

Մինչ այդ՝ գրքի հավելվածում զետեղեցինք մինչ օրս մեզ անհայտ, մինչդեռ ժամանակին մեծ ժողովրդականություն վայելած նրա դաշնամուրային ստեղծագործություններից երկուսը՝ N 3 «Bonheur retrouvé» («Վերագտած երջանկություն»)՝ ռասպոդիան<sup>6</sup> և «Chatti ya dinyi»<sup>7</sup> պիեսը, ինչպես նաև «Pour toi seul»<sup>8</sup> («Միայն քեզ համար») ֆրանսերեն տանգոն ձայնի և դաշնամուրի համար (խոսք՝ Ժան Ժուենի և Ժաննա Պակոյի), որոնք Հայաստանում տպագրվում են առաջին անգամ: Ի դեպ, ստեղծագործությունների ընտրությունը պատահական չէ: Լիբրանսում իր երկրորդ հայրենիքը գտած կոմպոզիտորն իր «Chatti ya dinyi»-ում մշակել է արաբական ժողովրդական մեղեդին՝ իր հարգանքի տուրքը մատուցելով Լիբրանանի արաբ ժողովրդին:

Առաջիկայում ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը նախատեսում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, որտեղ խնամքով պահվում է կոմպոզիտորի արխիվը, կազմակերպել համերգ, որի ընթացքում ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի արվեստագիտության թեկնածու գիտաշխատողները, ասպիրանտներն ու հայցորդները, ովքեր միաժամանակ միջազգային ու հանրապետական մրցույթների դափնեկիրներ դաշնակահարներ են, կներկայացնեն Ա.Այնթապյանի դաշնամուրային ստեղծագործության էջերը: Հայրենիքում, ուր նա այդպես էլ չայցելեց, առաջին անգամ կհնչի կոմպոզիտորի երաժշտությունը՝ ազդարարելով նրա երաժշտության մեծ նավարկության մեկնարկը:

Իսկ հետո՝ միգուցե ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի և ՀՀ սփյուռքի նախարարության համատեղ ջանքերով, «Սփյուռքահայ արվեստ. արդի վիճակը և զարգացման հեռանկարները» ծրագրի շրջանակներում, հնարավոր լինի իրականացնել Ա.Այնթապյանի ժառանգության ակադեմիական հրատարակությունը...

<sup>6</sup> «Rhapsodie N 3 (Bonheur Retrouvé)», անթվակիր, ձեռագիր 9 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 17:

<sup>7</sup> «Chatti ya dinyi», անթվակիր, ձեռագիր 5 թերթ, 2 փաթեթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 3:

<sup>8</sup> «Pour toi seul», անթվակիր, Բեյրութ, տպագիր, ֆրանսերեն 2 թերթ, Գ.ԱԹ, Ա.Այնթապյանի ֆոնդ N 29:

Rhapsodie Nr. 3 Aroussiak Aintablian

per Parte 3 movimenti  
Impetuoso

Lento

Impetuoso

*p* *f* *cresc.*

Lento

*ff*

*mf* *f*

©Škorp Nr. 1174 - 5 Systeme

Handwritten musical score for piano, featuring multiple systems of staves. The score includes dynamic markings such as *f*, *mf*, *ff*, *p*, *pp*, and *f*. Performance instructions include *cresc. poco a poco* and *Poco più mosso*. The score is heavily annotated with fingerings and articulation marks. Rehearsal marks 20 and 30 are present. The key signature is one sharp (F#) and the time signature is 3/4.



